





## 1. Դատավորի բարեվարքության ստուգումն ու պատասխանատվությունը՝ արտակարգ (անցումային արդարադատության) պայմաններում

ՄԱԿ-ի Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները<sup>1</sup> սահմանում են դատավորների վարքագծի չափորոշիչներ: Վերջիններս նախագծված են դատավորներին ուղղորդելու և նրանց վարքագիծը կարգավորելու համար իրավական շրջանակ ապահովելու նպատակով: Այս սկզբունքները ենթադրում են, որ դատավորները իրենց վարքագծի համար հաշվետու են համապատասխան ինստիտուտների առաջ, որոնք կոչված են ապահովելու դատական իշխանության ստանդարտների կիրառումը: Հիշյալ սկզբունքներն են՝ **անկախություն, անաչառությունը, բարեվարքությունը, պատշաճությունը, հավասարությունը, արհեստավարժությունն ու պիտանելիությունը (diligence)**<sup>2</sup>:

Համաձայն ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից մշակված Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքների մեկնաբանության,<sup>3</sup> բարեվարքության տարրերն են՝ **ազնվությունն ու դատական բարոյականությունը (judicial morality)**: Ըստ էության, բարեվարքությունը՝ դատական ծառայության պատշաճ իրականացման հիմքերից է:<sup>4</sup>

Դատավորը՝ ոչ միայն պաշտոնական պարտականությունների իրականացման ժամանակ, այլև՝ դրանից դուրս, պետք է գործի է արժանապատիվ (honorable) և դատական համակարգի ներկայացուցչի կեցվածքին համապատասխան, զերծ մնալ կեղծիքից, խաբեությունից, պահպանի վարքագծի կանոնները: Որպես այդպիսին, բարեվարքության չափեր ու չափման միավորներ չկան. այն բացարձակ է և ավելի քան անհրաժեշտ է դատավորին:

Բարեվարքությունը, ի տարբերություն դատավորի իրավական կարգավիճակի մյուս տարրերի, դժվար է սպառիչ կերպով բացահայտել: Ժամանակի և տարածության մեջ ազնվության ընկալումները տարբերվում են:

Հենց այդ պատճառով այստեղ առաջ է գալիս **ողջամիտ դիտորդի** անհրաժեշտությունը:

Դատավորի անկեղծությունը պետք է տեսանելի լինի գործի ելքով չչահագրգռված անհատի համար: Այսինքն, ողջամիտ դիտորդը, իրատեսորեն և գործնականորեն հետևելով դատավարությանը, արդյո՞ք կնկատի դատավորի կողմնապահություն, թե՞ ոչ: Սակայն, միայն

<sup>1</sup> ՄԱԿ-ի Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքներ, <[https://www.unodc.org/pdf/crime/corruption/judicial\\_group/Bangalore\\_principles.pdf](https://www.unodc.org/pdf/crime/corruption/judicial_group/Bangalore_principles.pdf)>

<sup>2</sup> ՄԱԿ-ի Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքներ, <[https://www.unodc.org/unodc/en/corruption/tools\\_and\\_publications/bangalore-principles.html](https://www.unodc.org/unodc/en/corruption/tools_and_publications/bangalore-principles.html)>

<sup>3</sup> ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակի մեկնաբանություն, էջ 80, <[https://www.unodc.org/documents/corruption/publications\\_unodc\\_commentary-e.pdf](https://www.unodc.org/documents/corruption/publications_unodc_commentary-e.pdf)>

<sup>4</sup> Դատավորների վարքագծի հիմնական սկզբունքների ուժեղացում, էջ 6, <[https://www.unodc.org/pdf/corruption/corruption\\_judicial\\_res\\_e.pdf](https://www.unodc.org/pdf/corruption/corruption_judicial_res_e.pdf)>

ողջամիտ դիտորդի դատողությանը չհենվելու համար, իրավական պրակտիկայում ձևավորվել են ազնվության որոշակի չափանիշներ: Այստեղ շեշտը դրվում է ոչ թե բարոյական-ոչ բարոյական, ճիշտ-սխալ որոշման վրա, այլ ազնվությունը՝ դատավորի իրավական կարգավիճակի այլ տարրերի լույսի ներքո ուսումնասիրելու վրա: Մրա պատճառն այն է, որ հասարակական կարծիքին բացարձակ նախապատվություն տալը կդառնա կամայականություն, և հենց այդ կամայականության կանխման համար էլ կարևորվում է ազնվության համակարգային դիտարկումը՝ այլ տարրերի հետ փոխազդեցության համատեքստում:

Դատավորի վարքագիծը պետք է հաստատի հանրության հավատը դատական համակարգի բարեվարքության նկատմամբ, ուստի, կարևոր է նշել, որ **արդարադատությունը ոչ միայն զուտ իրականացման մասին է, այլև՝ դրա արդյունքների տեսանելիության<sup>5</sup>**:

Ըստ այդմ, կոնկրետ փաստի առթիվ դատավորի ազնվությունը գնահատելիս, հաշվի են առնվում հետևյալ 6 գործոնները.

1. արարքի բնույթը. հանրային<sup>6</sup> է, թե՞ մասնավոր, արարքը հակասո՞ւմ է օրենքին, թե՞ ոչ,
2. դատավորի վարքի՝ որպես նրա անձնական իրավունքի, պաշտպանվածության աստիճանը,
3. դատավորի կողմից ցուցաբերած հայեցողության և հետևողականության աստիճանը,
4. դատավորի վարքի արդյունքում պատճառված վնասների աստիճանը և դրա հետևանքով վնաս կրած անձանց շրջանակը (օրինակ՝ դատավարության մասնակիցները, հասարակությունը),
5. հասարակության կամ նրա առանձին անդամների նկատմամբ դատավորի ցուցաբերած հարգանքի կամ անարգանքի աստիճանը,
6. դատավորի անաչառության, անկողմնակալության և դրա հետևանքով առաջացած ազդեցության աստիճանը:<sup>6</sup>

Պետք է նշել, որ **անցումային արդարադատության ինստիտուտի շրջանակներում, բարեվարքությունը առավել լայն հասկացություն է, և ենթադրում է ոչ միայն դատավորի ազնվության և դատական բարոյականության (judicial morality) ստուգումը, այլև՝ վերինգի իրականացումը:**

Այսպես, անցումային արդարադատության ինստիտուտի շրջանակում «վերինգ» եզրույթը օգտագործվում է հիմնական գնահատելու անձի բարեվարքությունը՝ որպես չափման միջոց, որոշելու նրան համապատասխանությունը հանրային (պետական) ծառայությանը: Նույն

<sup>5</sup> Դատավորների վարքագծի հիմնական սկզբունքների ուժեղացում, էջ 6, <[https://www.unodc.org/pdf/corruption/corruption\\_judicial\\_res\\_e.pdf](https://www.unodc.org/pdf/corruption/corruption_judicial_res_e.pdf)>

<sup>6</sup> ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակի մեկնաբանություն, էջ 82, <[https://www.unodc.org/documents/corruption/publications\\_unodc\\_commentary-e.pdf](https://www.unodc.org/documents/corruption/publications_unodc_commentary-e.pdf)>

ինստիտուտի շրջանակներում, «բարեվարքությունը» կիրառվում է պարզելու համար, թե անձը ինչպես է ապահովում մարդու իրավունքների պաշտպանության ստանդարտները և իր մասնագիտական վարքը, ներառյալ՝ նրա ֆինանսական միջոցները:<sup>7</sup>

Ընդհանուր առմամբ, վեթինգի գործընթացը ուղղված է հանրային (պետական) ծառայողներին կամ նման պաշտոն զբաղեցնելու հավակնություն ունեցող անձանց ստուգելուն, այդ թվում՝ պարզելու, թե արդյոք նրանց նախկին վարքագիծը (հատկապես՝ անցումային արդարադատության գաղափարի և մարդու իրավունքների ստանդարտների հարգման շրջանակներում) երաշխավորում է նրանց բացառումը պետական կառույցներից: Ընդ որում, այստեղ **«բացառությունը»** ներառում է ինչպես աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների դադարեցում, այնպես էլ՝ աշխատանքի (ծառայության) անցնելու (ընդունելու) սահմանափակումներ:<sup>8</sup>

*Վեթինգը հանդիսանում է ինստիտուցիոնալ բարեփոխումների կարևորագույն տարր, հետևապես, թեկուզև ամենաչնչին ջանքերը և վեթինգի գործիքների ներդրումը կարող են հանգեցնել հանրային կառույցների աշխատակազմի փոփոխությանը:<sup>9</sup>*

Գործնականում գոյություն չունի մեկ ունիվերսալ մոտեցում վեթինգի իրականացման հարցում: Յուրաքանչյուր դեպքում, վեթինգի գործընթացի նախագծողները ընդունում են մի շարք որոշումներ կախված այն հանգամանքներից, թե **ինչ և ինչպես են ուզում վերջիններս նվաճել:** Միջազգային փորձում առաջարկվում է **ինը հիմնական որոշումներ**, որոնք են հարկավոր են վեթինգի իրականացման համար:<sup>10</sup> Դրանք են.

2. **Թիրախը.** որո՞նք են այն ինստիտուտները և պաշտոնները, որոնք պետք է ենթարկվեն վեթինգի:
3. **Չափանիշները.** ի՞նչ բնույթի արարքներն են ենթարկվելու վեթինգի:
4. **Պատասխանատվությունը (սանկցիան).** ի՞նչ է սպասվում այն անձանց հետ, որոնց բացասական վարքագիծը բացահայտվել է վեթինգի արդյունքներով:
5. **Նախագիծ.** որո՞նք են վեթինգի իրականացման ձևերը, կառուցվածքը և ընթացակարգերը:
6. **Շրջանակը.** քանի՞ անձ է ենթարկվել վեթինգի, քանի՞ անձ՝ պատասխանատվության:
7. **Ժամանակը** ե՞րբ է իրականացվելու վեթինգը:
8. **Տևողությունը.** ինչքա՞ն է տևելու վեթինգը:
9. **Հիմնավորումը.** ինչպե՞ս հիմնավորել վեթինգի իրականացման անհրաժեշտությունը և որո՞նք են դրա պատճառները:

<sup>7</sup> Արդարադատությունը որպես կանխարգելում. Հանրային ծառայողների վեթինգը՝ անցումային հասարակություններում, Ալեքսանդր Մայեր-Ռիեխ, Պարլո դե Գրեյֆ, էջ 17

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 18

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 20

10. **Համապատասխանությունը.** Ինչպե՞ս է վեթինգը փոխկապակցվում մյուս համակարգային բարեփոխումների հետ: Ինչպե՞ս է այն փոխկապակցված անցումային արդարադատության գործիքների հետ:

1. **Թիրախը. որո՞նք են այն ինստիտուտները և պաշտոնները, որոնք պետք է ենթարկվեն վեթինգի**

Վեթինգը կիրառվում է **կոնկրետ ինստիտուտների նկատմամբ:** Այս գործիքը կարող է թիրախավորել **ամբողջ ինստիտուտը** կամ այդ ինստիտուտի շրջանակներում՝ **հստակ պաշտոններ:** Թիրախավորելու որոշումը կարող է կախված լինել առկա ռեսուրսներից, քաղաքական դիտարկումներից, կամ մարդու իրավունքների ոլորտում այդ ինստիտուտի կոնկրետ բաժինների գործունեության գրանցած արդյունքներից: Անկախ բոլոր հանգամանքներից, վեթինգի իրականացման կարևոր նախապայման է՝ այն պաշտոնների շրջանակի որոշումը, որոնց նկատմամբ այն պետք է կիրառվի:<sup>11</sup>

Մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, վեթինգի պետք է ենթարկվեն այն ինստիտուտները, որոնք պատասխանատու են եղել մարդու իրավունքների խախտումների կատարման և այդ խախտումների կատարումը թույլատրելու համար: Հետ-պատերազմական իրավիճակներում վեթինգը հիմնականում իրականացվում էլ անվտանգության և դատական համակարգի ոլորտներում: Օրինակ՝ **Էլ Մավադորում**, 12 տարի տևած քաղաքացիական պատերազմից հետո, 1990-ականների սկզբներին վեթինգ իրականացվեց զինված ուժերում, ոստիկանությունում և դատական համակարգում: Վերջինիս դեպքում ներդրվեցին մեխանիզմներ՝ բարելավելու դատական համակարգի հաշվետվողականությունը:

**Բոսնիա և Հերցեգովինայում** ոստիկանությունը անաչառ չէր գործում, իսկ դատարանը անկողմնակալ չէր արդարադատության իրականացման ժամանակ, ինչը հանգեցրել էր դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության ցածր մակարդակին: Հետևապես, վեթինգը իրականացվեց ոստիկանությունում և դատական համակարգում:

**Չեխիայում** վեթինգի ենթարկվեց դատական և դատախազական համակարգը, քաղաքացիական ծառայությունը, սահմանադրական մարմինները, զինված ուժերն ու ոստիկանությունը, հետաքննության մարմինները, ազգային բանկը, հանրային մեդիան, լրատվական գործակալությունները, պետական կորպորացիաները և գիտությունների ակադեմիան:

**Հունգարիայում՝** Խորհրդարանի անդամները, Օմբուդսմենը, Սահմանադրական դատարանի

<sup>11</sup> Արդարադատությունը որպես կանխարգելում. Հանրային ծառայողների վեթինգը՝ անցումային հասարակություններում, Ալեքսանդր Մայեր-Ռիեխ, Պարլո դե Գրեյֆ, էջ 21

անդամները, Գերագույն դատարանի նախագահն ու նրա տեղակալը, Գլխավոր դատախազը, հանրային կառավարման բարձրաստիճան պաշտոնյաները, ներառյալ՝ նախարարները:<sup>12</sup>

## 2. Չափանիշները. ի՞նչ բնույթի արարքներն են ենթարկվելու վեթինգի

Վեթինգի իրականացման չափանիշները վերաբերում են **կոնկրետ արարքի տեսակներին**, որոնք կատարվել են վեթինգի ենթարկվող անձի կողմից՝ նախկինում: Յուրաքանչյուր անգամ վեթինգ իրականացվում է որոշակի չափանիշների հիման վրա: Իհարկե, այս չափանիշները տարբեր են՝ կախված ինստիտուտներից, անցումային ենթատեքստերից և ժամանակից: Այդուհանդերձ, պետք է լինեն **բարեվարքության նվազագույն ստանդարտներ**: Որպես կանոն, դրանք են՝ մարդու իրավունքների կոպիտ խախտումներին կամ միջազգային իրավունքով ճանաչված ծանր հանցագործություններին մասնակցությունն է: Ընդ որում, այս մասնակցությունը անձին հանրային ծառայությունից ազատելու հիմքերից է: Օրինակ՝ **Քոսովա և Հերցեգովինայում** ոստիկանական համակարգից ազատվեցին այն ծառայողները, ովքեր 1992 թվականի ապրիլից մինչև 1995 թվականի դեկտեմբերը իրականացրել են այնպիսի գործողություններ, որոնց ցույց են տվել նրանց **անկարողությունը կամ ոչ պատրաստակամությունը** գործել մարդու իրավունքների միջազգային ստանդարտներին համապատասխան:

**Գերմանիայում** թեև սահմանվեցին վեթինգի իրականացման չափորոշիչներ, սակայն գործնականում խնդիր առաջացավ, թե որ չափանիշները պետք է իրականում կիրառվեն:

## 3. Պատասխանատվությունը (սանկցիան). ի՞նչ է սպասվում այն անձանց հետ, որոնց բացասական վարքագիծը բացահայտվել է վեթինգի արդյունքներով

Վեթինգի արդյունքներով հանրային ծառայողը կարող է ոչ միայն բացառվել և հեռացվել հանրային ծառայությունից, այլև՝ նրա նկատմամբ կարող են կիրառվել մի շարք այլ սանկցիաներ՝ պատասխանատվության միջոցներ: Սանկցիայի բնույթը խիստ կարևոր է՝ ինչպես վեթինգ անցնող անձի, այնպես էլ՝ ընդհանուր գործընթացի համար:

Այսպես, եթե **վեթինգի իրականացման նպատակը պատժի անխուսափելիությունն է**, ապա այստեղ էական նշանակություն ունեն հետևյալ հանգամանքները.

- արդյո՞ք անձը հեռացվել է հանրային (պետական) ծառայությունից
- արդյո՞ք կասեցվել է նրա ծառայությունը
- արդյո՞ք վերջինիս առաջարկվել է անցնել կենսաթոշակի

<sup>12</sup> Արդարադատությունը որպես կանխարգելում. Հանրային ծառայողների վեթինգը՝ անցումային հասարակություններում, Ալեքսանդր Մայեր-Ռիեխ, Պարլո դե Գրեյֆ, էջ 21

- արդյո՞ք նա տեղափոխվել է կամ նրան վստահվել է այլ ոլորտ՝ ավելի փոքր պատասխանատվությամբ
- արդյո՞ք բացահայտվել է նրա անցյալը:

Իսկ այն դեպքում, եթե **վեթինգի իրականացման նպատակը ինստիտուտների վերափոխումն է՝ իրավախախտումների կրկնությունը կանխելու մտադրությամբ**, ապա այստեղ էական նշանակում ունի այն հանգամանքը, թե արդյո՞ք անձինք, ովքեր նախկինում կատարել են իրավախախտումներ, ազատվել են այդ ինստիտուտներից, թե՛ ոչ:

#### 4. Նախագիծ. որո՞նք են վեթինգի իրականացման ձևերը, կառուցվածքը և ընթացակարգերը

Վեթինգի իրականացման գործիքները տարբեր երկրներում՝ տարբեր են: **Լայն առումով**, ամենատարածված գործիքը՝ **հանրային (պետական) կառույցի աշխատողների (ծառայողների) նախկինում կատարած գործունեության վարչական ստուգումն է**: Նման ստուգումներ տարբեր ձևաչափերով տեղի են ունեցել **Արևելյան Գերմանիայում, Հունաստանում, Չեխիայում, Հունգարիայում, Լեհաստանում և Էլ Սալվադորում**:

**Բոսնիա և Հերցեգովինայում** մշակվել և իրականացվել էլ ոստիկանության համակարգի վերանայման գործընթաց՝ դատավորների վերանշանակմանը զուգահեռ: Սրա շրջանակներում բոլոր դատավորները և դատախազները հեռացվեցին զբաղեցրած պաշտոններից և ստիպված եղան նշանակման համար նորից դիմել՝ բաց մրցույթների միջոցով:<sup>13</sup> Այս գործընթացում կարևոր է այն **մարմինը, որն իրականացնելու է վեթինգը**: Շատ դեպքերում, վեթինգի իրականացման կամ դրա նկատմամբ վերահսկողություն իրականացնելու առնվազն մեկ մարմին է ստեղծվում: Այս մարմինները պետք է ունենան **ընտրված անդամներ, աշխատողներ, ֆինանսական և նյութական ռեսուրսներ, և պետք է ապահովվի նրանց անվտանգությունը**:

**Գերմանիայում** վեթինգի իրականացման երկու հանձնաժողով ստեղծվեց. **վարչական**, որը կազմված էր **նշանակված** անդամներից, ովքեր ներկայացնում էին վեթինգի ենթարկվող ինստիտուտը, և **բազմակարծր (pluralistic)**, որը կազմված էր **նշանակված և ընտրված անդամներից**, ովքեր ներկայացնում էին վեթինգի ենթարկվող ինստիտուտը, և **անկախ փորձագետներից**:

Ընդհանուր առմամբ, վեթինգ իրականացնող մարմինը կարող է նաև լինել **կենտրոնացված՝ մեկ մարմնի ներքո**, իրականացնելով վեթինգ բոլոր թիրախային հանրային (պետական) ինստիտուտներում, կամ՝ **ապակենտրոնացված**, իրականացնելով վեթինգ մեկ ոլորտում կամ

<sup>13</sup> Արդարադատությունը որպես կանխարգելում. Հանրային ծառայողների վեթինգը՝ անցումային հասարակություններում, Ալեքսանդր Մայեր-Ռիեխ, Պարլո դե Գրեյֆ, էջեր 25-26



մեկ ինստիտուտում: Նախկին խորհրդային երկրներում, ինչպիսիք են՝ **Չեխիան, Լեհաստանը և Հունգարիան**, ստեղծվել էին կենտրոնացված մարմիններ: Սրան հակառակ, **Գերմանիայում և Հունաստանում** վեթինգը իրականացվեց ապակենտրոնացված և հատվածական մեթոդով:

Մեկ այլ գործոն, որ նույնպես կարևորվում է այս գործընթացում, դա՝ վեթինգի իրականացման ընթացակարգերն են, և թե որքանով են դրանք համապատասխանում մարդու իրավունքների միջազգային ստանդարտներին: Ըստ այդմ, վեթինգը կհամարվի արդար և անաչառ, եթե այն իրավաչափ է, երաշխավորում է մարդու իրավունքները, օբյեկտիվ է, առաջնորդվում է իրավունքի գերակայությամբ, հիմնված է անհատական պատասխանատվության սկզբունքի վրա, ապահովում է բողոքարկման իրավունքը, և համեմատաբար ինքնավար է քրեական և սովորական (regular) կարգապահական պատասխանատվության ընթացակարգերից:<sup>14</sup>

## 5. Ծրջանակը. քանի՞ անձ է ենթարկվել վեթինգի, քանի՞ անձ՝ պատասխանատվության

Ծրջանակը վերաբերում է վեթինգի իրականացման չափսերին, աստիճանին և անձանց թվաքանակին: Վեթինգի իրականացման գործընթացի չափման միավորը ընդգրկում է.

- վեթինգ անցած անձանց ընդհանուր թիվը.
- այն անձանց թիվը, ում մասնակցությունը հաստատվել է վերանայվող գործունեության (քննվող գործի) կատարման մեջ.
- այն անձանց թիվը, ովքեր հետագայում կարող են ենթարկվել պատասխանատվության:

Յուրաքանչյուր գործիքի դեպքում, տարբեր է նաև վեթինգի իրականացման շրջանակը: Այն իր մեջ ներառում է **վեթինգի ենթակա ինստիտուտների և պաշտոնների վերաբերյալ որոշումների կայացման գործառույթ և չափանիշներ**: Ինչպես մյուս տարրերի դեպքում, այս դեպքում ևս վեթինգի ենթարկվող անձանց թիվը կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ տեղեկատվության մատչելիությունն ու հուսալիությունը:<sup>15</sup>

Օրինակ՝ **Լեհաստանում** մինչև 2004 թվականը 24.000 անձ ներկայացրել էր վեթինգի գրավոր հայտարարագիր, դրանցից 278-ը դրական էին, իսկ 103-ի վերաբերյալ Լյուստրացիայի դատարանը կայացրել էր բացասական որոշում, որից 53-ը հայտարարել էր՝ ոչ ճշմարիտ:

Մեկ այլ օրինակով՝ **Արևելյան Գերմանիայի Գրեյֆսվալդ քաղաքում** ուսումնասիրված 1.553 աշխատողներից 58-ը ճանաչվել էին Պետական անվտանգության նախարարության (հայտնի է նաև՝ Պետական անվտանգության ծառայություն) համար աշխատողներ, և նրանցից 18-ը

<sup>14</sup> Արդարադատությունը որպես կանխարգելում. Հանրային ծառայողների վեթինգը՝ անցումային հասարակություններում, Ալեքսանդր Մայեր-Ռիեխ, Պարլո դե Գրեյֆ, էջ 26

<sup>15</sup> Արդարադատությունը որպես կանխարգելում. Հանրային ծառայողների վեթինգը՝ անցումային հասարակություններում, Ալեքսանդր Մայեր-Ռիեխ, Պարլո դե Գրեյֆ, էջ 27

ազատվել էր աշխատանքից: **Դրեզդենում** 1990-ին 18.000 աշխատողներից շուրջ 520-ը կորցրեցին իրենց աշխատանքը՝ վեթինգի ենթարկվելու արդյունքում:

**Բոսնիա և Հերցեգովինայում** 2002-2004թթ. ընթացքում Բարձրագույն դատական և դատախազական խորհուրդը վերանայել էր դատական և դատախազական համակարգում նշանակման և վերանշանակման շուրջ 2.000 անձանց դիմումներ: Արդյունքում, գործող դատավորների և դատախազների 30 տոկոսը չվերանշանակվեցին:

## 6. Ժամանակը և տևողությունը. ե՞րբ է իրականացվելու և ինչքա՞ն է տևելու վեթինգը

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վեթինգի գործընթացները էականորեն տարբերվում են իրարից՝ նաև ժամանակի և տևողության ընթացքում: **Ժամանակը** վերաբերում է այն դեպքին, թե **անցումային ո՞ր փուլում է սկսվում վեթինգը, տևողությունը՝** նրան, թե **որքա՞ն է տևում գործընթացը:**

Վեթինգի ժամկետը և տևողությունը սովորաբար արտացոլում են անցումային շրջանի քաղաքական լանդշաֆտը: Այդուհանդերձ, դրանք որոշվելու են նաև գործընթացի այլ բնութագրիչներով, օրինակ՝ ինչպիսիք են վեթինգի գործընթացում ներգրավված ինստիտուտների, պաշտոնների և անձանց թիվը:

**Հունաստանում** ակադեմիական համայնքի վեթինգը սկսվեց անմիջապես. 1974թ.-ին ռազմական ռեժիմի տապալումից անց մի քանի շաբաթվա ընթացքում ընդունվեց իրավական ակտ, և գործընթացը տևեց 10 ամիս:

**Հունգարիայում** վեթինգի իրականացման պահանջը սկսվեց 1990թ.-ին, սակայն մինչև 1994թ. որևէ իրավական ակտը չէր ընդունվել:

Ժամանակահատվածը կարևոր է նաև այն տեսանկյունից, թե ինչպիսի՞ պոտենցիալ ազդեցություն է ունենալու վեթինգը կոնկրետ ինստիտուտի վրա: Անձինք, ովքեր անցումային վաղ փուլում կհեռացվեն թիրախային ինստիտուտից, որպես կանոն նվազ ազդեցություն կունենան այդ ինստիտուտի վերակառուցման գործընթացի վրա, քան նրանք, ովքեր կհեռացվեն ավելի ուշ փուլում:<sup>16</sup>

## 7. Հիմնավորումը. ինչպե՞ս հիմնավորել վեթինգի իրականացման անհրաժեշտությունը և որո՞նք են դրա պատճառները

<sup>16</sup>Արդարադատությունը որպես կանխարգելում. Հանրային ծառայողների վեթինգը՝ անցումային հասարակություններում, Ալեքսանդր Մայեր-Ռիեխ, Պարլո դե Գրեյֆ, էջ 29

Վեթինգի հիմնական արդյունքը (outcome) տեղի է ունենում երկու մակարդակում. **անհատական և ինստիտուցիոնալ**: Անձինք, ովքեր կենթարկվեն վեթինգի, և կախված դրան արդյունքներից՝ նաև պատասխանատվության, առնվազն կունենան որոշակի ազդեցություն ինստիտուտի վրա:

Հանրային (պետական) ինստիտուտների վեթինգի պատճառները կարող են լինել բազմաթիվ, միաժամանակ՝ վիճարկելի: Դրանք կարող են լինել և՛ լայն ու երկարաժամկետ, և՛ նեղ ու կարճաժամկետ, և նշյալը կարող է փոխվել պարբերաբար՝ ժամանակի ընթացքում:

Ինչպես արդեն նշվեց, պատճառները և հիմնավորումները կարող են տարբեր լինել: Նեղ առումով, դրա իրականացումը կարող է հիմնված լինել **հանրային պահանջով, քաղաքական ուժերի և այն նախագծողների հիմնավորումներով, օրենսդրությամբ, և բուն պրոցեսի բնույթով**:

Լայն առումով, միջազգային փորձը ցույց է տալիս, որ առնվազն երկու հիմնավորող գործոններ են հարկավոր վեթինգը սկսելու համար. **պատժել իրավախախտներին, և վերափոխել ինստիտուտները՝ երաշխավորելով դրանց անցումը դեպի ժողովրդավարականի, և կանխել մարդու իրավունքների խախտումների կրկնությունը**:<sup>17</sup>

**8. Համապատասխանությունը. ինչպե՞ս է վեթինգը փոխկապակցվում մյուս համակարգային բարեփոխումների հետ: Ինչպե՞ս է այն փոխկապակցված անցումային արդարադատության գործիքների հետ**

Վեթինգի գործընթացի համապատասխանությունը վերաբերում է նրա **փոխհարաբերություններին**՝ այլ ինստիտուցիոնալ բարեփոխումների և անցումային արդարադատության հետ: Ինչպես արդեն վերը նշվեց, վեթինգը ունի ինստիտուցիոնալ ազդեցություն, և հետևապես, հանդիսանում է ինստիտուցիոնալ բարեփոխումների տարր: Այն կարող է իրականացվել և՛ որպես ինքնուրույն գործիք, և՛ լայնամասշտաբ ինստիտուցիոնալ բարեփոխումների մաս՝ նպատակ ունենալով փոխել թիրախային ինստիտուտի կազմակերպական կառույցն ու մանդատը: Եվ այս տեսանկյունից, վեթինգը կարող է լինել համապարփակ անցումային արդարադատության քաղաքականության տարր:

Միջազգային փորձը նաև ցույց է տալիս, որ վեթինգը կարող է խթանել անցումային արդարադատության մյուս գործիքների կիրառմանը, մասնավորապես՝ քրեական արդարադատության իրականացմանը, ճշմարտության փնտրմանը, տուժածների

<sup>17</sup> Արդարադատությունը որպես կանխարգելում. Հանրային ծառայողների վեթինգը՝ անցումային հասարակություններում, Ալեքսանդր Մայեր-Ռիխտ, Պարլո դե Գրեյֆ, էջ 30

ռեպարացիայի տրամադրմանը: Ընդ որում, այս լույսի ներքո, վեթինգը դիտվում է որպես վերը նշված գործիքների կիրառումը «**հնարավոր դարձնող պայման**»:<sup>18</sup>

## 2. Դատական բարեփոխումների, ներառյալ՝ դատական վեթինգի իրականացման միջազգային ստանդարտները և հիմնական ստանդարտները

Դատական բարեփոխումների, այդ թվում՝ դատական վեթինգի իրականացման համար որպես կանոն մեծ մարտահրավեր է հանդիսանում, գտել լուծումներ հետևյալ դիլեմաների դեպքում.

- Ինչպիսի՞ իրավական և ինստիտուցիոնալ կարգավորումներ նախատեսել, որպեսզի հնարավոր լինի ապահովել դրանց համապատասխանությունը միջազգային ստանդարտներին, և միևնույն ժամանակ, բավարարել հատուկ կարիքները ազգային համատեքստում:
- Ինչպե՞ս մշակել արդյունավետ օրենքներ, մինչև ժամանակ ապահովելով դրանց լիարժեք կիրառումը՝ օրենքի ոգուն և տառին համապատասխան:
- Ինչպե՞ս ապահովել դատավորների արտաքին և ներքին անկախությունը, միևնույն ժամանակ ապահովելով հաշվետվություն՝ հանրության առաջ:
- Ինչպե՞ս ձեռք բերել աջակցություն դատական համակարգի, կառավարության, ընդդիմության, հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների և այլ խմբերի ներկայացուցիչներից, միևնույն ժամանակ, չզոհաբերել բարեփոխումների հիմնական հիմնասյուները:

**Վերը նշված դիլեմաներին պատշաճ լուծում չտալը կարող է հանգեցնել բարեփոխումների ձախողմանը:**

### (a) Դատական անկախության միջազգային չափորոշիչները

Գլոբալ և եվրոպական մակարդակներում կան բազմաթիվ ստանդարտներ, որոնք բարեփոխիչները պետք է օգտագործեն՝ իբրև դատական բարեփոխումների պլանավորման և իրականացման ուղեցույցներ: Եվ պետք է նշել, որ դրանց մեջ առավել կարևորը **դատական անկախությունն է:**

Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ դատական համակարգի անկախությունը ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ բաղադրիչներ: Ըստ այդմ,

- a. Անկախության օբյեկտիվ կողմը՝ դատական համակարգի պարտադիր որակն է:

<sup>18</sup> Արդարադատությունը որպես կանխարգելում. Հանրային ծառայողների վեթինգը՝ անցումային հասարակություններում, Ալեքսանդր Մայեր-Ռիեխ, Պարլո դե Գրեյֆ, էջ 32

բ. Անկախության օբյեկտիվ կողմը կազմում է անձի իրավունքը՝ ունենալ իր իրավունքների և ազատությունների վերաբերյալ անկախ դատավորի կողմից կայացրած որոշում:

Առանց անկախ դատավորների չի կարող ապահովվել անձի իրավունքների և ազատությունների արդար և օբյեկտիվ պաշտպանություն: Հետևապես, դատական համակարգի անկախությունը ինքնանպատակ չէ: Եվ այս տեսանկյունից, կարևոր է գնահատել դատավորների կարիքները և հանրավորություն տալ նրանց, երաշխավորել հանրության իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Վենետիկի հանձնաժողովը ամփոփ կերպով ներկայացրել է **դատական անկախության** որոշ ասպեկտներ, ըստ որի՝

- Դատական համակարգի անկախության հիմնական երաշխիքները պետք է սահմանվեն Սահմանադրությամբ կամ համարժեք իրավական ակտով:
- Դատավորների մասնագիտական փորձառնությամբ վերաբերող որոշումները պետք է իրականացվեն օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա, իսկ մասնագիտական առաջխաղացումը պետք է հիմնվի նրանց գիտելիքների վրա, ներառյալ՝ որակավորումը, բարեխղճությունը, կարողությունը և արդյունավետությունը:
- Դատավորների ընտրության և մասնագիտական առաջխաղացման վերաբերյալ որոշում կայացնող իրավասու մարմինը պետք է անկախ լինի կառավարությունից և վարչակազմից:
- Դատական խորհրդի խառը կառուցվածքը կընձեռնի առավելություններ՝ ինչպես խուսափելու ինքնուրույնության, ինքնապաշտպանության և քրոնիզմի ընկալումից, այնպես էլ հասարակության տարբեր տեսակետները արտացոլելու միջոցով:
- Դատավորները պետք է ունենան երաշխիքներ՝ իրենց պաշտոնավարման ժամկետի վերաբերյալ՝ մինչև պարտադիր կենսաթոշակային տարիքի լրանալը: Եվրոպական պրակտիկան, որպես կանոն, սահմանում է դատավորի աշխատաժամանակի մեկ դրույք՝ մինչև կենսաթոշակային տարիքը (անփոփոխելիության սկզբունք).
  - o Այս համատեքստում առանձնահատուկ խնդիր է դատավորների փորձաշրջանը, ինչը կարող է խաթարել դատավորների անկախությունը, քանի որ վերջիններս կարող են ենթարկվել ճնշման և կայացնել ոչ օբյեկտիվ որոշումներ:
  - o Այնուամենայնիվ, համեմատաբար նոր դատական համակարգեր ունեցող երկրներում կարող է գործնական անհրաժեշտություն առաջանալ նախ և առաջ պարզել, թե՞ արդյոք դատավորն իսկապես ունի կարողություններ իր գործառույթները կատարել արդյունավետ՝ մինչև մշտական նշանակումը:

- Դատական խորհուրդները կամ կարգապահական դատարանները պետք է վճռական ազդեցություն ունենան կարգապահական վարույթներում: Կարևոր է նախատեսել կարգապահական մարմինների որոշումները դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը:
- Դատավորի վարձատրության չափն ու երաշխիքները պետք է լինեն արժանապատիվ և համապատասխանեն իրենց պարտավորությունների շրջանակին:
- Դատավորների համար նախատեսված պարգևավճարներն ու ոչ ֆինանսական խրախուսումները, որոնց վերաբերյալ որոշումները ընդունվում են հայեցողական լիազորությունների շրջանակներում, պետք է աստիճանաբար դադարեն:
- Դատարաններին ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին որոշումները պետք է ընդունվեն դատական անկախության սկզբունքի խստագույն հարգանքով և պահպանմամբ:
- Դատավորները պետք է ունենան բացառապես **գործառության անձեռնմխելիություն**:
- Դատավորները չպետք է կատարեն այնպիսի գործողություն, որը կարող է կասկածի տակ դնել իրենց անաչառությունն ու անկախությունը: Մի շարք երկրներ, օրինակ՝ սահմանափակում են դատավորների քաղաքական գործունեությունը:
- Մի շարք երկրներ նախատեսում են սահմանափակումներ՝ դատավորի կողմից այլ վճարովի աշխատանք կատարելու դեպքում:
- Դատական ակտերը չպետք է վերանայվեն այլ կերպ, քան՝ բողոքարկման գործընթացով:
- Ներքին դատական անկախությունը պետք է երաշխավորված լինի, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր դատավորի անկախությունը անհամատեղելի է դատական որոշումների կայացման գործում դատավորների ենթակայության հետ:
- Դատավորներին գործերի բաշխումը պետք է հիմնվի օբյեկտիվ և թափանցիկ չափորոշիչների վրա:

Ցանկացած բարեփոխման հիմնաքարը որակյալ և հուսալի դատավորների ընտրությունն է: Ի լրումն անկախությունը երաշխավորող համակարգային կանոններին, դատավորի անձնական և մասնագիտական որակները ունեն ևս մեծ կարևորություն:

Այնուհետև, համակարգային կարգավորումները պետք է մշակվեն այնպես, որ **երաշխավորեն բարձր որակավորում ունեցող և անձնապես հուսալի դատավորների ընտրությունը**, ինչպեսև սահմանվեն այնպիսի պայմաններ, որտեղ դատավորները կկարողանան աշխատել՝ առանց **արտաքին ազդեցության**: Ի վերջո, իրական անկախությունը կախված է հենց այդպիսի դատավորների առկայությունից:

**(b) Անկախություն Vs. Հաշվետվողականություն. «Դատական պարադոքս»**

Անկախությունը կարող է հակառակ արդյունքի հանգեցնել, եթե ապահովված չէ դատավորների հաշվետվողականությունը: Վենետիկի հանձնաժողովը **Ալբանիայի** միջանկյալ կարծիքում<sup>19</sup> նշել է՝

*«Ալբանիայում, ինչպես նաև մի քանի այլ հետխորհրդային երկրներում, դատական համակարգի անկախության ստանդարտների սահմանադրականացումը հանգեցրել է պարադոքսի. սահմանադրական երաշխիքները շնորհիվ են դատավորների, ովքեր դեռևս գործնականում չեն եղել անկախ և անաչառ:*

*Արդյունքում, Ալբանիայի քաղաքական գործիչների և ընդհանրապես հասարակության կարծիքով, դատական համակարգի մի շարք ներկայացուցիչներ մշակեցին կորպորատիվիստական վերաբերմունք, ինչը հանգեցրեց լայնամասշտաբ կոռուպցիայի և պրոֆեսիոնալիզմի ու արդյունավետության բացակայության:*

*Այս պայմաններում դատական համակարգի վերաբերյալ սահմանադրական դրույթները վերանայելու նախաձեռնությունը միանգամայն հասկանալի է:*

Հանձնաժողովի կարծիքով, այս պարադոքսը **բացատրեց և հիմնավորեց** «բարեփոխումների ընդհանուր նախագծումը», որը *inter alia* ներառում էր **ժամանակավոր մեխանիզմներ ներդնում՝** (...) դատական համակարգը/դատախազությունը **«մաքրելու»** և ամբողջ համակարգը **«վերագործարկելու»** համար: Վենետիկի հանձնաժողովը գտնել է, որ այն նպատակը, որը հետապնդվում է բարեփոխմամբ, «գովելի» է:

Այս պարադոքսը հիմնավորեց վեթինգի անհրաժեշտությունը: Վենետիկի հանձնաժողովը կիսեց Ալբանիայի գրեթե բոլոր ներկայացուցիչների տեսակետները առ այն, որ Ալբանիայի դատական համակարգում կոռուպցիայի մակարդակը ծայրահեղ բարձր է, և որ իրավիճակը պահանջում է **«հրատապ և արմատական միջոցներ»**, ինչպես օրինակ, բոլոր **դատավորների ստուգումը**: Ըստ Վենետիկի հանձնաժողովի, սա քաղաքական հարց էր, և Վենետիկի հանձնաժողովը չէր կարող այդ հարցով արտահայտվել:

Այդուհանդերձ, Հանձնաժողովը նախագուշացրեց, որ «նման արմատական լուծումը չի խրախուսվի նորմալ պայմաններում, քանի որ այն ստեղծում է հսկայական լարվածություն դատական համակարգի ներսում, ապակայունացնում նրա աշխատանքը, մեծացնում հանրային անվստահությունը դատական համակարգի նկատմամբ, շեղում դատավորների ուշադրությունը

<sup>19</sup> Ալբանիայի դատական համակարգի սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի միջանկյալ կարծիք, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2015\)045-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2015)045-e)

իրենց բնականոն գործերից, և ինչպես ցանկացած արտակարգ միջոցառում, առաջացնում է դատական համակարգը իշխող կառավարող ուժի կողմից վերահսկելու ռիսկ»:

Ալբանիայի դատական համակարգի սահմանադրական փոփոխությունների վերանայված նախագծի վերաբերյալ վերջնական կարծիքում՝ Վենետիկի հանձնաժողովը նշեց՝

*«Դատավորներին և դատախազներին վեթինգի ենթարկելու արտակարգ միջոցները «ոչ միայն արդարացված էին», այլև «անհրաժեշտ (...) պաշտպանելու դատական համակարգը կոռուպցիայից խորտակվելուց, որը չիրականացնելու դեպքում, դատական համակարգը կարող էր ամբողջապես ոչնչացվել»:<sup>20</sup>*

Ավելի վաղ, Ալբանիայի փորձի համանման լուծումներ ընդունելի էին նաև **ուկրաինական** համատեքստում: Այնտեղ նույնպես Վենետիկի հանձնաժողովը հաշվի է առել դատական համակարգում մեծածավալ կոռուպցիայի և ոչ կոմպետենտություն առկայությունը, նախորդ ժամանակահատվածում դատավորների նշանակման գործընթացի վրա քաղաքական ազդեցությունը, ինչպես նաև գրեթե լիակատար հանրային վստահության բացակայությունը և՛ դատական համակարգի ազնվության, և՛ արհեստավարժության նկատմամբ:<sup>21</sup>

**Մոլդովայի** վերաբերյալ վերջին համատեղ միջանկյալ կարծիքի շրջանակներում Վենետիկի հանձնաժողովը և Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավորը տնօրինությունը կանաչ լույս տվեցին Մոլդովայի իշխանությունների նախաձեռնությանը՝ Արդարադատության Գերագույն դատարանի դատավորներին վեթինգի ենթարկելու մասին.

*«Վենետիկի հանձնաժողովը և Տնօրինությունը հասկանում են Մոլդովայի իշխանությունների ջանքերը՝ ուղղված բարեխղճության և պրոֆեսիոնալիզմի պահանջներին համապատասխան դատական մարմինների ստեղծմանը: Նկատի ունենալով, որ Վենետիկի հանձնաժողովը նախկինում այլ համատեքստերում ևս հաշվի էր առել դատական համակարգում տիրող ճգնաժամային իրավիճակները, դրանում ընդգծելով կոռուպցիայի ծայրաստիճան բարձր մակարդակը, ուստի՝ կարող է արդարացնել **հավասարապես արմատական լուծումները**, ինչպիսին է **դատավորների ստուգման գործընթացը**: Ի վերջո, դա Մոլդովայի իշխանությունների իրավասության մեջ է՝ որոշել, թե՞ արդյոք Մոլդովայի դատական համակարգում տիրող իրավիճակը*

<sup>20</sup> Ալբանիայի դատական համակարգի սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի վերջնական կարծիք, պարագրաֆ 52, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)009-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)009-e)>

<sup>21</sup> «Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի մասին» Ուկրաինայի օրենքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը և Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավորը տնօրինության համատեղ կարծիք, պարագրաֆ 72, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2015\)007-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2015)007-e)>



*բավարար հիմք է ստեղծում Գերագույն դատարանի բոլոր դատավորներին ենթարկել արտահերթ վերազնահատման, ինչպես նախատեսված է օրենքի նախագծով»<sup>22</sup>*

**(c) Հաշվետվողականության նշանակությունը**

Ինքնիշխանության սկզբունքը ենթադրում է, որ դատական համակարգը, ինչպես իշխանության ցանկացած այլ ճյուղ, պետք է հաշվետու լինի ժողովրդի առջև՝ իբրև ժողովրդավարական պետության իշխանության աղբյուր:

Ինչպես նշել է Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը.

*«հասարակության կողմից դատավորներին տրված լիազորությունների և վստահության հետևանքը պետք է լինի դատավորներին պատասխանատվության ենթարկելու որոշ միջոցների կիրառումը և նույնիսկ, նրանց պաշտոնից հեռացնելը, որը կարող է հիմնավորվել նրանց կողմից թույլ տված կոպիտ իրավախախտման (վարքագծի կանոնների խախտման) դեպքում»<sup>23</sup>*

Կախված իրավախախտման բնույթից և վտանգավորության աստիճանից, դատավորները կարող են և պետք է ենթարկվեն քրեական կամ կարգապահական պատասխանատվության:

**(i) Քրեական պատասխանատվություն**

Վենետիկի հանձնաժողովը բազմիցս նշել է, որ դատավորները պետք է ունենան ֆունկցիոնալ, **և միայն ֆունկցիոնալ անձեռնմխելիություն** (իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ անձեռնմխելիություն, բացառությամբ՝ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո):

**(ii) Կարգապահական պատասխանատվություն**

Դատական կարգապահության համակարգի կազմակերպման հարցում չկա միասնական մոտեցում և այդ պրակտիկական տարբեր երկրներում էականորեն տարբեր է: Միայն արարքները,

<sup>22</sup> Արդարադատության Գերագույն դատարանի և Դատախազության համակարգի մասին Մոլդովայի օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավորը տնօրինության համատեղ միջանկյալ կարծիք, պարագրաֆներ 83-84, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2019\)020-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)020-e)>

<sup>23</sup> Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 3 կարծիք, պարագրաֆ 51, <<https://rm.coe.int/168070098d>>

որոնք կատարվել են դիտավորյալ կամ կոպիտ անփութությամբ, պետք է կարգապահական վարույթների հիմք հանդիսանան:

**Ne bis in idem** սկզբունքի համաձայն՝ արգելվում է նույն արարքի համար երկու տարբեր քրեական վարույթների հարուցում, ներառյալ՝ պատիժների կիրառում: Այդուհանդերձ սա սկզբունքորեն չի բացառում նույն իրավախախտման համար քրեական դատավարությանը զուգահեռ կարգապահական վարույթի հարուցում: Քրեական և կարգապահական պատասխանատվության միջոցները ունեն տարբեր բնույթ և նպատակներ, ապացուցման տարբեր շրջանակներ, հետևապես և չեն բացառում միմյանց:

**Ne bis in idem** սկզբունքի խախտումը կանխելու նպատակով, իրավասու մարմինները պետք է ունենան իրավասություն դադարեցնելու կարգապահական վարույթը, եթե գործի քննության ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք քրեական բնույթի են: Այդուհանդերձ, կարգապահական տույժը կարող է կիրառվել, երբ քրեական գործով դատավորը արդարացվել է կամ նրա նկատմամբ հարուցված քրեական վարույթը կարճվել է:

### **(iii) Քաղաքացիական պատասխանատվություն**

Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ դատավորը իրապես պետք է պաշտպանվի իր դեմ ներկայացված քաղաքացիական հայցերից, որոնք ծագել են դատավորի լիազորությունների բարեխիղճ իրականացման արդյունքում: Համանման մոտեցում արտահայտել է նաև Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը: Կարևոր է նաև հնարավորություն ընձեռել «դատական սխալները» ուղղել բողոքարկման կարգով:

## **3. Դատական բարեփոխումների, ներառյալ՝ դատական վեթինգի միջազգային փորձը**

### **1. Վրաստան**

#### **(a) Նախապատմությունը. հակիրճ ակնարկ 2003-2012թթ. իրականացված դատական բարեփոխումների մասին**

2003 թվականին «Վարդերի հեղափոխությունից» հետո, կառավարող իշխանությունը մի շարք այլ ժողովրդավարական բարեփոխումների հետ համատեղ, հանձնառություն էր ստանձնել ստեղծել նոր դատական համակարգ, որը բաղկացած կլիներ կրթված, արհեստավարժ, անկախ և

ազնիվ դատավորներից: Շատ կարճ ժամանակում կառավարող իշխանությունը հեռացրեց նախորդ իշխանության օրոք նշանակված դատավորներին, և նշանակեց նոր դատավորներ՝ նախկին դատավորների օգնականների և ծառայողների կազմից:

Կառավարող իշխանության հակակոռուպցիոն ուժեղ օրակարգը, հանրային ծառայության այլ ոլորտների հետ համատեղ **դրական ազդեցություն** ունեցավ դատարանների վրա. դատավորների շրջանում կոռուպցիայի մակարդակը հասավ գրեթե զրոյի: Կարևոր է նշել, որ «կոռուպցիա», հիմնականում հասկացվում էր **կաշառք վերցնել և համանման այլ հանցագործություններ**: Այնուամենայնիվ, պետք է նաև ընդգծել, որ ահռելի էր **իշխող գործադիր իշխանության քաղաքական ազդեցությունը դատարանների վրա**:

Ե՛վ հակակոռուպցիոն, և՛ դատախիզական բարեփոխումների հայեցակարգը հիմնված էր՝ **«զրո հանդուրժողականության քաղաքականություն» սկզբունքի վրա**, որը կիրառվում էր հատկապես քրեական գործերի քննության ընթացքում: Դատարանները հրահանգ էին ստացել հնարավորինս կիրառել պատիժներ՝ տուգանքների տեսքով, անկախ արարքի սոցիալական և հանրային վտանգավորությունից և արարքը կատարած անձից: Հարկ է նշել, որ տուգանքների տեսքով քրեական պատիժները կիրառվում էր այն անձանց նկատմամբ, ովքեր ճանաչվել էին մեղավոր:

Ի դեպ, համաձայնեցման (plea bargaining) և համագործակցության վարույթների մեծ թվով կիրառման արդյունքում դատախազները աստիճանաբար դարձան «ալարկոտ»՝ հարուցված քրեական գործերը հիմնավոր և անխոցելի նախապատրաստելու հարցում: Այս պարագայում, փաստացի որևէ ապացույց անհրաժեշտ չէր մեղադրանք առաջադրելու համար:

Խիստ քրեական քաղաքականությունը ստիպեց ամբաստանյալներին ընդունել իրենց մեղքը: Շատ դեպքերում դատարանների միակ խնդիրն էր համագործակցության համաձայնություն (plea bargaining) ձեռք բերելը՝ անգամ չստուգելով թե արդյո՞ք այդ համաձայնությունը ամբաստանյալի «ազատ ընտրությունն էր, թե՛ ոչ»:

Վրաստանի «զրո հանդուրժողականություն» քաղաքականության շնորհիվ, երկրի քրեակատարողական հիմնարկները Եվրոպայում դարձան ամենաճանրաբեռնվածը՝ դատապարտյալների ընդհանուր թվի հաշվարկով: Շուրջ 25,000 բանտարկյալներ պահվում էին քրեակատարողական հիմնարկներում, մոտավորապես՝ 300,000-ը գտնվում էր պրոբացիայի ծառայության հսկողության ներքո, պայմանով որ վերջիններս ցանկացած պահին կարող են բանտարկվել՝ դատախազի որոշման հիման վրա: Իրականում այս տեսակի վախի մթնոլորտը ունեցավ բացասական ազդեցություն դատավորների վրա, ինչի արդյունքում մշտապես բավարարում էին դատախազների միջնորդությունները:

Ստեղծված իրավիճակը հանգեցրեց հանրության անվստահության բարձրացմանը՝ կառավարող ուժի նկատմամբ, որը հատկապես ընդգծվեց 2012 թվականին:

**(b) «Վրացական երազանք» դաշինքի իշխանության ստանձնումը՝ 2012 թվականին**

2012թ-ին հոկտեմբերին Միխեիլ Սաակաշվիլին պարտվեց խորհրդարանական ընտրությունները «Վրացական երազանք» դաշինքին՝ Բիձինա Իվանիշվիլին գլխավորությամբ:

Փոփոխություններին կողմ քվեարկած անձանց թվում էին նրանք, ովքեր գոհ գնացին զրոյական հանդուրժողականության քաղաքականությանը: Նոր կառավարության օրակարգի հիմնական բաղադրիչն էր՝ դատական համակարգի համապարփակ բարեփոխումները:

Առաջին երկու տարիները ընթանում էին հաջողությամբ, և բարեփոխումների նախնական փաթեթները ստացան բարձր գնահատական և ընդունվեցին միջազգային հանրության կողմից: Հետագայում, սակայն, բարեփոխումները սկսեցին խարխլվել: Պատճառն այն էր, որ կառավարող ուժը սկսեց գործարքներ կնքել դատական համակարգի «առաջնորդների» հետ, ովքեր շարունակեցին պաշտոնավարել չնայած այն հանգամանքին, որ նշանակվել էին նախորդ իշխանության կողմից: Այստեղ, հատկապես, շրջանառվում են Լեվան Մուրուսիձեի<sup>24</sup> և Միխայել Չինալաձեի<sup>25</sup> անունները: Վերջիններս դեռ «ղեկավարում են» դատական համակարգը, որոնց բարեվարքության և անաչառության վերաբերյալ բազմիցս իրենց դժգոհությունն ու մտահոգություններն արտահայտել թե՛ Վրաստանի խորհրդարանի անդամները, թե՛ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:<sup>26</sup>

**(c) Վրացական երազանք» կառավարության դատական համակարգի բարեփոխումների երեք ալիքները (Three Waves)**

Դատական համակարգի բարեփոխումների երեք ալիքները նախագծվել են արդարադատության նախարարության կողմից և իրականացվել 2013-2017 թվականներին՝ գրանցելով հաջողություններ տարբեր մակարդակներում:

<sup>24</sup> Լեվան Մուրուսիձեն Վրաստանի Վերաքննիչ դատարանի դատավոր է, ում պաշտոնավարման ժամկետը Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նշանակվեց ցկյանս, <<https://agenda.ge/en/news/2018/2780>>

<sup>25</sup> Միխայել Չինալաձեի Թբիլիսիի վերաքննիչ դատարանի նախագահն է, <<http://www.supremecourt.ge/eng/structure/plenum/id/87>>

<sup>26</sup> Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հայտարարությունը, <<https://www.interpressnews.ge/en/article/100190-eka-gigauri-murusidze-chinchaladze-clan-gives-instructions-to-the-parliament/>>

**2013 թվականի մայիսին** ավարտվեց ինստիտուցիոնալ բարեփոխումների **առաջին ալիքը**, որի շրջանակներում իրականացվեցին մեծաթիվ օրենսդրական փոփոխություններ, որոնք ընդունվեցին նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից: Բարեփոխման հիմնական նպատակն էր՝ Արդարադատության բարձրագույն խորհուրդը դարձնել ավելի ժողովրդավարական, բաց և թափանցիկ՝ իրավաբանական հանրույթի և առհասարակ՝ հասարակության համար:

Ըստ փոփոխությունների՝ քաղաքացիական հասարակության և ակադեմիայի ներկայացուցիչները փոխարինեցին Խորհրդի խորհրդարանական անդամներին, իսկ հեռուստաընկերություններին թույլատրվեց տեսախցիկներով մուտք գործել դատարանի դահլիճներ՝ լուսաբանելու և հանրությանը տեղեկացնելու ընթացիկ դատավարությունների մասին և համոզվելու, որ տարբեր գործերով իրականացվում է արդարադատություն:

Դատաիրավական բարեփոխումների **երկրորդ ալիքը**, որն ավարտվեց **2014 թվականի օգոստոսին**, սահմանադրական փոփոխությունների իրականացումն էր, ինչի արդյունքում Վրաստանում սահմանվեց դատավորների ցլյանս պաշտոնավարման սկզբունքը: «Ընդհանուր իրավասության դատարանների մասին» օրենքում կատարված փոփոխություններով սահմանվեցին հստակ և օբյեկտիվ չափանիշներ այն դատավորների գնահատման համար, որոնք մինչև ցլյանս նշանակում ստանալը, պետք է պաշտոնավարեն երեք տարի ժամկետով: Հիշյալ փոփոխություններով սահմանվեց նաև բարդ, թափանցիկ և օբյեկտիվ գնահատման կարգը, ներառյալ գնահատված դատավորների՝ բացասական գնահատականները բողոքարկելու իրավունքը:

**2015 թվականին** մեկնարկեց բարեփոխումների **երրորդ ալիքը**: Օրենսդրական փոփոխությունների նոր փաթեթն ուղղված էր դատավորների ներքին անկախության աստիճանի մեծացմանը և դատարանների կառավարման աշխատանքներում նրանց արդյունավետ ներգրավմանը: Փոփոխությունները ներառեցին, բայց չսահմանափակվեցին հետևյալով.

- Դատարանների նախագահներն ընտրվելու էին իրենց գործընկերների (peers) կողմից և զրկվում դատարանի դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքից.
- Ներդրվելու էր գործերի էլեկտրոնային բաշխման համակարգ.
- Խստորեն կարգավորվելու էին դատավորի այլ դատարան տեղափոխելու կանոնները.
- Ներդրվելու էր դատական տեսուչի գրասենյակը.
- Փոփոխվելու էին վճռաբեկ բողոքների ընդունման չափանիշները.
- Դատարանի ցանկացած որոշում հրապարակվելու էր դատարանի կայքում, և այլն:

Երրորդ ալիքը հանդիպեց ամենամեծ դիմադրության նրանց կողմից, ովքեր դեմ էին դատական համակարգի կտրուկ փոփոխություններին: Փոփոխություններն ընդունվել են **2016 թվականի վերջին՝ զգալի թերություններով:**

**(d) Երեք ալիքներով դատական համակարգի առանցքային ասպեկտները**

Վրաստանում դատական բարեփոխումների երեք ալիքները ունեցել մի քանի առանցքային ասպեկտներ: Դրանցից որոշները հաջողել են և ունեցել կայուն ազդեցություն: Մյուս մասն էլ ձախողել՝ ի շնորհիվ դատական համակարգի և քաղաքական բարձր ղեկավարության զգալի դիմադրության: Սույն զեկույցում առանձնացրել ենք ստորև թվարկված կարևոր ասպեկտները:

**(i) Հեռուստաընկերությունների տեսախցիկները վերադարձան դատական նիստերի դահլիճները**

2000-ականների կեսերին գործող կառավարությունը արգելում էր դատավարությունների նկարահանումները և համապատասխան հաղորդումների, ռեպորտաժների պատրաստումը: 2013 թվականին օրենսդրական փոփոխությունների միջոցով թույլատրվեց հեռուստաընկերությունների տեսախցիկները մուտքը դատական նիստերի դահլիճներ:

Փոփոխությունների արդյունքում առաջացավ դիլեմա. թույլ տալ հեռուստաընկերությունների տեսախցիկները մուտքը, բայց միաժամանակ պետք էր կանխել դատական նիստերի դահլիճների գերբեռնվածությունը տեսախցիկներով: Որպես արդյունավետ լուծում, հանրային հեռուստաընկերությանը իրավունք վերապահվեց նկարահանել դատավարությունները և այդ ձայնագրությունները փոխանցել այլ հեռարձակողների: Այն դեպքում, եթե հանրային հեռարձակողը այդ պահին նիստերի դահլիճում ուներ ինտերնետ կապի խնդիր, ապա այլ հեռուստաընկերության ներկայացուցիչը կարող էր դիմել դատարան՝ հանրային հեռարձակողի փոխարեն նույն պայմաններում ձայնագրություններ իրականացնելու թույլտվություն ստանալու համար: Սույն կանոնից բացառություն էին կազմում այն գործերը, որոնց լսումները օրենքով սահմանված կարգով և (կամ) ցանկացած կողմից միջնորդությամբ անցկացվում էր փակ: Այս մոտեցումը մինչ այժմ աշխատել է շատ արդյունավետ:

**(ii) Արդարադատության բարձրագույն խորհրդի (ԱԲԽ) համակարգային բարեփոխումները**

ԱԲԽ-ն անկախ մարմին է, որը կոչված է **«ապահովելու դատական համակարգի անկախությունը և արդարադատության որակը և արդյունավետությունը»**: Այն պատասխանատու է դատավորների **ընտրության, առաջնադասման և կարգապահության համար**:

ԱԲԽ-ն բաղկացած է 15 անդամից, ներառյալ՝ Գերագույն դատարանի նախագահը, որը ի պաշտոնե հանդիսանում է ԱԲԽ անդամ, 8 դատավոր, որոնք ընտրվել են իրենց գործընկերների կողմից (peers) կողմից, 6 ոչ դատավոր անդամ:

**Նախքան բարեփոխումները**, Գերագույն դատարանի նախագահը ի պաշտոնե հանդիսանում էր ԱԲԽ նախագահը, վերջինս ի թիվս այլ լիազորությունների, ուներ բացառիկ լիազորություն առաջադրելու ԱԲԽ մյուս դատավոր անդամների թեկնածությունը՝ դատավորների ընդհանուր ժողովին: Այնուհետև, ժողովը կարող էր **«ընտրել»** այդ անդամներին՝ բաց քվեարկությամբ: **Նախկին կարգավորումներից էր** նաև այն, որ Նախագահի բացակայության դեպքում ԱԲԽ-ն ղեկավարում էր Քարտուղարը, որի թեկնածությունը առաջադրում էր ԱԲԽ և Գերագույն դատարանի նախագահը:

**Նախքան բարեփոխումները**, ԱԲԽ 4 ոչ դատավոր անդամները նշանակվում էին Վրաստանի Խորհրդարանի կողմից, ովքեր հանդիսանում էին Խորհրդարանի անդամներ՝ իշխող մեծամասնությունից: Մյուս 2 ոչ դատավոր անդամները նշանակվում էին Վրաստանի Նախագահի կողմից: **2013 թվականին կատարվեցին օրենսդրական փոփոխություններ**, որոնց նպատակն էր՝ ուժեղացնել ԱԲԽ անկախությունն ու ապահովել քաղաքական չեզոքությունը: ԱԲԽ նախագահը, ով նաև Գերագույն դատարանի նախագահն էր, զրկվեց ԱԲԽ կազմում ընտրվելու նպատակով դատավորի թեկնածուներ առաջադրելու բացառիկ լիազորությունից, ապահովվեց բազմաշահառու անդամների կազմ, և բաց քվեարկությունը փոխարինվեց՝ գաղտնի քվեարկությամբ:

**Բարեփոխումների փաթեթով** Խորհրդարանը զրկվեց Խորհրդարանի անդամների կազմից ԱԲԽ ոչ դատավոր անդամների թեկնածուներ առաջադրելու իրավունքից: Փոխարենը նախատեսվեց նոր կարգավորում, ըստ որի՝ ոչ դատավոր անդամների թեկնածուները ընտրվելու են համալսարանի պրոֆեսորական կազմից, փաստաբանների պալատի անդամներից և (կամ) մարդու իրավունքների պաշտպանության զբաղվող ՀԿ-ներից: Վերջիններս պետք է լինեն հեղինակավոր իրավաբաններ և անձինք: Խորհրդարանը իրավունք ստացավ ընտրել 5 ոչ դատավոր անդամներ, որից 1-ը առաջադրվում է Վրաստանի Նախագահի կողմից: Նախագահի կողմից առաջադրվող թեկնածուն պետք է բավարարի բոլոր այն պահանջներին, որ սահմանված է Խորհրդարանի կողմից առաջադրվող թեկնածուների համար:

Նախնական օրինագիծը արգելում էր դատարանների և պալատների գործող նախագահներին առաջադրվել որպես ԱԲԽ դատավոր-անդամի թեկնածուներ: Այդուհանդերձ, ԱԲԽ/Գերագույն

դատարանի նախագահի, դատական համակարգի այլ «առաջնորդների» և որոշ ՀԿ-ների ճնշման հետևանքով այս արգելքը հանվեց նախագծի վերջնական տարբերակից: Արդյունքում, ձեռք բերվեց «փոխզիջումային տարբերակ», ըստ որի՝ նշված արգելքը կիրառվում է ԱԲԽ 8 դատավոր անդամներից միայն 3-ի վրա:

Հարկ է նաև նշել, որ Գերագույն դատարանի դատավորների նշանակումները բավականին դժվարություններ ստեղծեցին, որը հետևանք էր ԱԲԽ-ի կողմից 2018 թվականի դեկտեմբերին Խորհրդարանին ներկայացված 10 հոգիանոց թեկնածուների ցուցակի: Հանրության, քաղաքացիական հասարակության և Արդարադատության բարձրագույն խորհրդի մի շարք անդամների կողմից ցուցակի շուրջ ներկայացրած հակասությունների և քննադատությունների պատճառով, այն հետ կանչվեց: Քննադատությունները վերաբերում էին ընտրության ընթացակարգի բացակայությանը, որով կնախատեսվեր թեկնածուների թափանցիկ ընտրություն՝ հիմնված հստակ և օբեկտիվ չափանիշների վրա: Այս համատեքստում, ՀԿ-ները պնդում էին, որ նշանակման գործընթացը վերահսկվել է քաղաքական ազդեցություն ունեցող դատավորների խմբի կողմից, որոնք անցյալում կայացված որոշումների և մասնակի նշանակումների պատճառով չունեն բարձր հեղինակություն: Այս գործընթացների արդյունքում նախագծվեց օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որով սահմանվում է Գերագույն դատարանի դատավորների ընտրության և նշանակման թափանցիկ գործընթաց՝ հստակ և օբեկտիվ չափանիշների հիման վրա:<sup>27</sup>

**(iii) Դատավորների ցկյանս պաշտոնավարումը և եռամյա պրոբացիան**

Դատավորների ցկյանս և եռամյա ժամկետով պրոբացիոն պաշտոնավարումը ներդրվեց 2010թ.-ին սահմանադրական փոփոխությունների արդյունքում, որը ուժի մեջ է մտել 2013 թ.-ին:

Այն ժամանակ նորամուծությունները վերաբերում էին առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին, և ոչ թե Գերագույն դատարանի դատավորներին, որոնց պաշտոնավարման 10 տարի ժամկետը պահպանված էր:

Այս համատեքստում հիմնական մարտահրավերը կայանում էր օրենքում մանրամասն, հստակ և արդար ընթացակարգերի նախատեսումը: Դժվար, բայց համարձակ որոշում կայացվեց. առանց բացառության բոլոր թեկնածուներին ենթարկել եռամյա պրոբացիոն ծառայության, այդ թվում՝ նոր և նախկին փորձառու դատավորներին, բոլոր գործող այն դատավորներին, որոնց

<sup>27</sup> Վրաստանի Գերագույն դատարանի դատավորների ընտրության և նշանակման վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի հրատապ կարծիք, պարագրաֆ 3, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2019\)002-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2019)002-e)>



պաշտոնավարման 10-ամյա ժամկետը կավարտվի, և նրանք, ովքեր պատրաստ կլինեն ստանձնել այդ պաշտոնը մինչև կենսաթոշակի անցնելը:

Այդուհանդերձ, ԱԲԽ ճնշումների տակ, որը օգտվեց Վենետիկի հանձնաժողովի և միջազգային այլ կազմակերպությունների կողմից փորձաշրջաններին վերաբերող ընդհանուր մոտեցումից, այս կարգավորումներն աստիճանաբար հանվեցին: Առաջին փուլում Գերագույն դատարանի և Սահմանադրական դատարանի գործող և նախկին անդամները ազատվեցին փորձաշրջան անցնելու պարտականությունից, հետագայում նույն կարգավորումը կիրառվեց նաև բոլոր նախկին դատավորների նկատմամբ, ովքեր ունեին դատավորի առնվազն 3 տարվա փորձ ունեին:

Ներկայումս փորձաշրջանի անցնելու նորմը կիրառվում է միայն փորձառնություն չունեցող դատավորների նկատմամբ և այն ամբողջությամբ հանվելու է 2024 թվականի վերջին՝ ինչպես սահմանված է նոր խմբագրությամբ Սահմանադրությամբ:

**(iv) Դատավորի թափուր հաստիքը համարելու մրցույթը և դատավորների համար նոր պահանջները**

Դատավորի թափուր հաստիք առաջանալու դեպքում, ԱԲԽ-ն կազմակերպվում է բաց մրցույթ: Բոլոր նրանք, ովքեր հավակնում են մասնակցել մրցույթին, պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

- 30 տարեկան է և Վրաստանի քաղաքացի.
- Ունի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորում՝ առնվազն մագիստրոսի կամ դրան հավասարեցված այլ գիտական աստիճան.
- Ունի իրավաբանի մասնագիտական աշխատանքի 5 տարվա փորձառություն.
- Գերազանց տիրապետում է վրացերենին.
- Հանձնել է դատավորի որակավորման քննություն.
- Ամբողջությամբ ավարտվել է ԱԲԽ-ի կողմից կազմակերպված դասընթացը և համալրել է արդարադատության վերապատրաստվողների որակավորման ցուցակը:<sup>28</sup>

Որոշ բացառություններ են սահմանվել վերջին երկու պահանջների մասով նրանց համար, ովքեր ցանկություն կունենան ստանձնել Գերագույն դատարանի դատավորի պաշտոնը և (կամ) նրանք, ովքեր ունեն դատավորի աշխատանքի որոշակի տարիների փորձ:

<sup>28</sup> Վրաստանի Սահմանադրություն, հոդված 26, <<http://www.parliament.ge/uploads/other/28/28803.pdf>>  
«Ընդհանուր դատարանների մասին» Վրաստանի օրենքը, հոդված 34,  
<<https://matsne.gov.ge/en/document/download/90676/13/en/pdf>>

Թեկնածուների ներկայացրած փաստաթղթերի պաշտոնական համապատասխանությունը ստուգելուց հետո, անցկացվում է կասկածելի կապերի ստուգում: Յուրաքանչյուր թեկնածուի մասին ԱԲԽ-ն հավաքում է վստահելի տեղեկություն, հարցումներ կատարում նրանց մասնագիտական հեղինակության և նախկինում իրականացված գործունեության վերաբերյալ, ստուգում ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը և քրեական ու կարգապահական գործերին մասնակցությունը:

Գնահատումը.

Կասկածելի կապերի ստուգումը հաջողությամբ անցնելուց հետո, ԱԲԽ-ն թեկնածուների հետ անցկացնում է հարցազրույց: Հարցազրույցի հետո ԱԲԽ յուրաքանչյուր անդամ լրացնում է յուրաքանչյուր թեկնածուի համար նախատեսված գնահատման թերթիկը: Թեկնածուն գնահատվում է երկու չափանիշների հիման վրա. բարեվարքություն և արհեստավարժություն:

**Թեկնածուի բարեվարքությունը գնահատվում է հետևյալ բաղադրիչների վրա.**

- (a) Անձնական բարեվարքություն և մասնագիտական գիտակցություն.
- (b) Անկախություն, անկողմնակալություն և արդարություն.
- (c) Անձնական և մասնագիտական վարքագիծ.
- (d) Անձնական և մասնագիտական հեղինակություն:

**Թեկնածուի արհեստավարժությունը գնահատվում է հետևյալ բաղադրիչների վրա.**

- (a) Իրավունքի իմացություն.
- (b) Իրավական հիմնավորվածություն կազմելու հմտություն.
- (c) Գրավոր և բանավոր հաղորդակցության հմտություններ.
- (d) Մասնագիտական որակներ.
- (e) Ակադեմիական նվաճումներ և դասընթացներ.
- (f) Մասնագիտական գործունեություն:

Վերը թվարկված յուրաքանչյուր բաղկացուցիչի իմաստի մասով նախատեսում է ուղեցույցներ, սահմանում թե դրանցից յուրաքանչյուր ինչպես պետք է կիրառվի:

Դատավորի թեկնածուի բարեվարքությունը գնահատելիս, ԱԲԽ յուրաքանչյուր անդամ պետք է նշի, արդյո՞ք թեկնածուն՝

- (a) Չախտողել է համապատասխանել բարեվարքության չափանիշին.
- (b) Համապատասխանում է բարեվարքության չափանիշին.
- (c) Ամբողջությամբ համապատասխանում է բարեվարքության չափանիշին:

ԱԲԽ յուրաքանչյուր անդամ գնահատում է թեկնածուի արհեստավարժության չափանիշը՝ նշելով արհեստավարժության չափանիշի յուրաքանչյուր բաղկացուցչի համար հետևյալ միավորներից.

- (a) Իրավունքի իմացություն. առավելագույնը 25 միավոր.
- (b) Իրավական հիմնավորվածություն կազմելու հմտություն. առավելագույնը 25 միավոր.
- (c) Գրավոր և բանավոր հաղորդակցության հմտություններ. առավելագույնը 20 միավոր
- (d) Մասնագիտական որակներ. առավելագույնը 15 միավոր.
- (e) Ակադեմիական նվաճումներ և դասընթացներ, առավելագույնը 10 միավոր.
- (f) Մասնագիտական գործունեություն, առավելագույնը 5 միավոր:

ԱԲԽ անդամների կողմից գնահատման ձևաթղթերը լրացնելուց անմիջապես հետո, բոլոր ձևաթղթերը համադրվում են, և հաշվարկվում են ընդհանուր միավորները: Քվեարկության են դրվում միայն այն թեկնածուները, ովքեր.

- բավարարել կամ լիովին բավարարել են բարեվարքության չափանիշը՝ ըստ ԱԲԽ բոլոր անդամների մեծամասնության գնահատականի.
- հավաքել են արհեստավարժության չափանիշների ընդհանուր միավորների առնվազն 70 տոկոսը:

Այնուհետև տեղի է ունենում քվեարկություն: Ցանկացած թեկնածու, ով ստանում է ԱԲԽ անդամների ձայներից առնվազն 2/3-րդը, նշանակվում է դատավոր: Այն թեկնածուները, ովքեր պետք է անցնեն փորձաշրջան, նշանակվում են 3 տարի ժամկետով: Նրանք, ովքեր ազատվում են փորձաշրջանից, նշանակվում են ցկյանս:

#### Պրոբացիայով նշանակվող դատավորների գնահատումը

Յուրաքանչյուր տարի պրոբացիայի (փորձաշրջանի) ժամանակահատվածում դատավորներին գնահատելու նպատակով ԱԲԽ-ն իր կազմից վիճակահանությամբ ընտրում է մեկ դատավոր և մեկ ոչ դատավոր անդամ՝ դատավորի կատարողականը գնահատելու համար: Դատավորը գնահատվում է երկու չափանիշների հիման վրա. բարեվարքություն և արհեստավարժություն (իրականացվում է նույն կարգով, ինչպես նախատեսված է դատավորների թեկնածուների համար):

Գնահատման ընթացքում ընտրված ԱԲԽ անդամները կարող են ուսումնասիրեն դատավորի կողմից քննվող գործերը, մասնակցել դատական գործերի քննությանը, ձեռք բերել դատական գործերի աուդիո և վիդեո ձայնագրություններ, փնտրել անհրաժեշտ տեղեկություններ, հատուկ

հարցերի վերաբերյալ ստանալ տեղեկատվություններ, խորհրդակցել տարբեր իրավաբանների հետ, անձամբ հանդիպել և հարցազրույց անցկացնել դատավորի և այլ անձանց հետ:

Գնահատողները, զուգահեռ և միևնույն ժամանակ՝ միմյանցից անկախ, պետք է ուսումնասիրեն դատավորի կողմից քննության առած/վերանայված առնվազն հինգ գործ, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ, ներառյալ՝ առնվազն երկու գործ, որոնցով վերջնական դատական ակտերը վերանայվել/բեկանվել են վերադաս ատյանի կողմից: Ուսումնասիրության ենթակա գործերը ընտրվում են պատահականության սկզբունքով:<sup>29</sup>

Գնահատման արդյունքների վերաբերյալ կազմվում է հաշվետվություն՝ յուրաքանչյուր գնահատողի կողմից: Այն կնքվում և պահվում է մինչև պրոբացիայի ավարտը: Պրոբացիայի ավարտից հետո ԱԲԽ-ն բացում և վերլուծում է հաշվետվության բոլոր արդյունքները: Վերջում տեղի է ունենում քվեարկություն՝ վերը նշված պայմաններին համապատասխան:

### Բողոքարկման իրավունքը

ԱԲԽ-ի որոշմանը հաջորդող երկու շաբաթվա ընթացքում, Այն թեկնածուն, որի դիմումը մերժվել է ԱԲԽ-ի կողմից, որոշումը կայացնելու հետո երկու շաբաթվա ընթացքում այն կարող է Գերագույն դատարանի Գերագույն դատարանի Որակավորման պալատ: Բողոքի հիմքերն են՝

- (a) ԱԲԽ անդամը դրսևորել է կողմնակալ վարքագիծ.
- (b) ԱԲԽ անդամը թեկնածուի նկատմամբ ցուցաբերել է հայեցողական վարքագիծ.
- (c) ԱԲԽ անդամը չարաշահել է իր լիազորությունները՝ խախտելով թեկնածուի օրինական իրավունքները և խաթարել դատական անկախությունը:
- (d) Այն տեղեկությունները, որոնք հիմք են հանդիսացել ԱԲԽ որոշման համար, ըստ էության սխալ էին, և դա ապացուցվում է թեկնածուի կողմից ներկայացված փաստերով.
- (e) Տեղի ունեցել ընթացակարգային խախտում, որը հնարավոր է, ազդել է մրցույթի վերջնական արդյունքի վրա:

Բողոքը ստանալուց մեկ ամսվա ընթացքում Որակավորման պալատը բողոքաբերի և ԱԲԽ ներկայացուցչի մասնակցությամբ բանավոր ընթացակարգով քննում է այն: Որակավորման հանձնաժողովում կարող է ուժի մեջ թողնել կամ փոփոխել/վերացնել ԱԲԽ որոշումը: Որոշումը կարող է **մերժվել**, եթե Որակավորման պալատը գտնում է, որ տեղի է ունեցել խախտում և այդ խախտումը հնարավոր է ազդել է մրցույթի արդյունքների վրա, իսկ ԱԲԽ-ն կայացնել է էականորեն սխալ որոշում: Եթե Որակավորման պալատը **ուժը կորցրած է ճանաչում** ԱԲԽ-ի որոշումը, ապա գործը ուղարկվում է ԱԲԽ՝ վերանայման համար:

<sup>29</sup> «Ընդհանուր դատարանների մասին» Վրաստանի օրենք, հոդված 36, <<https://matsne.gov.ge/en/document/download/90676/13/en/pdf>>

Եթե գործը վերանայելուց հետո ԱԴԽ-ն կայացնում է որոշում հոգուտ թեկնածուի, նա իրավունք է ստանում համալրել նույն թափուր հաստիքը՝ դրա առկայության դեպքում, կամ նշանակվում է այլ դատարանում: Կրկնակի մերժումը կարող է բողոքարկվել Ռրակավորման պալատ՝ վերը նշված կարգով:

(v) **Դատավորների տեղափոխումը այլ դատարան**

**Նախքան բարեփոխումը**, ԱԲԽ բացառիկ հայեցողություն էր՝ տեղափոխել այս կամ այն դատավորին մեկ դատարանից մյուս դատարան՝ առանց վերջինիս համաձայնության, ցանկացած ժամանակ, երբ գտնում էր անհրաժեշտ: Դատավորը կարող էր վերաքննիչ դատարանից տեղափոխվել ընդհանուր իրավասության դատարան և հակառակը, կամ՝ մեկ քաղաքային դատարանից՝ այլ հեռավոր շրջա ի դատարան, և հակառակը: Ակնհայտ էր, որ այս հայեցողությունը «իշխանահաճո» դատավորներին խրախուսելու, իսկ «ոչ հաճոներին» պաշտոնի իջեցման և պատժելու միջոց էր:

**Բարեփոխումից հետո** դատավորը չի կարող տեղափոխվել առանց իր համաձայնության, բացառությամբ եթե դա պահանջում է արդարադատության շահը: Բոլոր դեպքերում ԱԴԽ որոշումը պետք է լինի պատճառաբանված: Հարկ է նաև նշել, որ անկախ դատավորի համաձայնությունից կամ դրա բացակայությունից, տեղափոխումը տեղի է ունենում մեկ տարի ժամկետով՝ ևս մեկ տարի երկարացնելու հնարավորությամբ: Սակայն, վերջինիս դեպքում պարտադիր է դատավորի համաձայնությունը:

(vi) **Գործերի էլեկտրոնային բաշխումը**

**Նախքան բարեփոխումը**, գործերը բաշխվում էին այբբենական կարգով, բայց քանի որ որոշումները կայացվում էին դատարանի նախագահների կողմից, այդ կանոնը հաճախ չէր գործում և բարձրաստիճան քաղաքական գործերի քննությունը բաշխման դեպքում տեղի էր ունենում միջամտություն:

**Բարեփոխումից հետո**, գործերի էլեկտրոնային բաշխման գաղափարը կայանում էր նրանում, որ մարդկային գործոնի միջամտությունը պետք է բացառվի, և բոլոր գործերը պատահականության սկզբունքով պետք է բաշխվի էլեկտրոնային համակարգի, և ոչ թե անձի կողմից: Այնուամենայնիվ, այս բարեփոխման ազդեցությունը կարող է դեռ նվազել, եթե սահմանվեն «նեղ մասնագիտացում» ունեցող դատավորներին բաշխելու կանոնները, ինչպես դա տեղի է ունենում Վրաստանում: Հիմնվելով ենթաօրենսդրական ակտերի վրա, ԱԴԽ-ն որոշել է

դատավորների միջև գործերը բաշխել՝ ըստ նեղ մասնագիտացման, ինչպես օրինակ՝ «սեփականության իրավունք», «պարտավորական իրավունք», «վնասների փոխհատուցման իրավունք», «մտավոր սեփականության իրավունք», «գրպարտության և վիրավորանքի գործեր» և այլն, որոնց համար դատավորների թիվը քիչ է անգամ ավելի մեծ դատարաններում: Դատարաններ կան, որտեղ նեղ մասնագիտացում ունեցող դատավորների թիվը ընդամենը երկուսն է: Նման պայմաններում, էլեկտրոնային համակարգի միջոցով բաշխման ազդեցությունը կարող է նեղացվել կամ նույնիսկ վատթարանալ՝ ընտրության պակասի պատճառով:

**(vii) Գերագույն դատարանում գործերի ընդունման նոր կանոններ**

**Նախքան բարեփոխումը**, Գերագույն դատարանը բողոքը ընդունում էր վարույթ երեք ընդհանուր հիմքերի առկայության դեպքում: Ընդ որում, բողոքը վարույթ չընդունելու դեպքում, Գերագույն դատարանը պարտավոր չէր տալ պատճառաբանված որոշում: Արդյունքում, գործերի 95%-ը չէր ընդունվում վարույթ՝ առանց պատճառաբանելու բողոքաբերին չընդունման հիմքերի մասին:

**Բարեփոխումից հետո** սահմանվեցին վճռաբեկության հստակ և կանխատեսելի հիմքեր, իսկ բողոքները վարույթ չընդունվելու դեպքում, Գերագույն դատարանը պարտավոր է տրամադրել մերժման մասին պատճառաբանված որոշում:

Առավել կարևոր նորամուծությունը այն էր, որ բողոքարկումը համարվում է ընդունելի, եթե վերաքննիչ դատարանի կողմից կայացրած որոշումը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Սա հանգեցրել է Գերագույն դատարանի կողմից բողոքների ընդունելիության և մերժման մասին որոշումների որակի կտրուկ բարելավմանը:

**(viii) Դատարանի նախագահների՝ կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունների ղաղաբեցումը**

**Նախքան բարեփոխումը**, դատարանի նախագահները իրավունք ունեին կարգապահական վարույթ հարուցել դատավորների նկատմամբ: Առաջին աստիճանի դատարանի նախագահները իրավունք ունեին կարգապահական վարույթ հարուցել իրենց դատարանում աշխատող դատավորների նկատմամբ:

Վերաքննիչ դատարանների նախագահների լիազորությունները տարածվում էր իրենց տարածքային իրավասության ներքո գտնվող բոլոր դատարանների նկատմամբ: Վրաստանում գործում է երկու վերաքննիչ դատարան, մեկը՝ Թբիլիսիում, մյուսը՝ Քութաիսիում, հետևապես՝ նրանց տարածքային իրավասությունը ընդգրկում էր Վրաստանի Արևելյան և Արևմտյան հատվածները:

Գերագույն դատարանի նախագահի լիազորությունները տարածվում էր Վրաստանում գործող բոլոր դատավորների նկատմամբ, ներառյալ Գերագույն դատարանի դատավորների:

Այս գործիքը հնարավորություն էր տալիս դատարանների նախագահներին՝ վերահսկելու դատավորների վարքն ու որոշումները:

**Բարեփոխումից հետո** դատարանի նախագահները զրկվեցին այս լիազորությունից:

**(ix) Անկախ տեսուչի գրասենյակի ստեղծում և կարգապահական վարույթների բարեփոխումներ**

**Բարեփոխման արդյունքում** ստեղծվել է Անկախ տեսուչի գրասենյակը, որի նպատակն է՝ ապահովել դատավորների կողմից ենթադրյալ կարգապահական իրավախախտումների օբյեկտիվ, արդար և անկողմնակալ քննություն և կարգապահական վարույթների հարցում այն դեպքերում, երբ տեսուչը գտնում է որ կատարվել է իրավախախտում:

Անկախ տեսուչը կարգապահական վարույթ հարուցել բացառիկ իրավունք ունի: ԱԴԽ-ն կարող է ինչպես համաձայնվել, այնպես էլ՝ չհամաձայնվել տեսուչի կայացրած որոշումների հետ: Եթե ԱԴԽ-ն համաձայնվում է, ապա ձայների 2/3-ով որոշում է ընդունում գործը կարգապահական հանձնաժողովի քննության հանձնելու մասին: Կարգապահական հանձնաժողովը բաղկացած է 3 դատավոր և 2 ոչ դատավոր անդամներից: Որոշումը կարող է բողոքարկվել Գերագույն դատարանի կարգապահական պալատ:

Ի սկզբանե, օրինագծի հեղինակների կողմից առաջարկվել էր, որ տեսուչը ընտրվի Խորհրդարանի կողմից, բայց այս առաջարկը մերժվեց՝ ԱԴԽ դիմադրությունների արդյունքում: Վերջնական նախագծով, սահմանվեց որ տեսուչը ընտրվում է ԱԴԽ-ի կողմից:

**(x) Դատարանի նախագահների ընտրությունը**

Մա թերևս առավել քննարկված և դիմակայությունների հանդիպած փոփոխություններից էր: Ի սկզբանե, առաջարկը ներառված էր «Երրորդ ակիբի» բարեփոխումների փաթեթում:

Գաղափարն այն էր, որ ԱԴԽ-ի կողմից նշանակվելու փոխարեն, դատարանի նախագահները պետք է ընտրվեն տվյալ դատարանի իրենց գործընկերների կողմից (peers): Եթե այս առաջարկը ընդունվեր, ապա ԱԴԽ-ն կկորցներ դատարանների վերահսկողության արդյունավետ գործիք:

Հենց այս պատճառով, օրենսդրական այս փաթեթը Խորհրդարան ներկայացվեց 2015 թվականի սկզբին, բայց ընդունվեց երկու տարի անց:

Նախքան 2016 թվականի հոկտեմբերին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները, օրենքն ընդունվեց երկու ընթերցմամբ և նախապատրաստվում էր երրորդ ընթերցմանը, բայց չդրվեց քվեարկության: 2016 թվականի վերջերին, նորընտիր Խորհրդարանը օրենքը վերադարձվեց երկրորդ ընթերցում, որի ընթացքում նախագծում կատարվեցին զգալի փոփոխություններ: Մի շարք այլ թերությունների հետ համատեղ, նախագծից հանվեց դատարանի նախագահների ընտրության առաջարկը:

#### (e) Դատական համակարգի վերջին բարեփոխումները

Դատական համակարգի վերջին բարեփոխումները թելադրվել են դատական «առաջնորդների» կողմից և նպատակ ունեն ամրապնդելու դատական համակարգի անկախությունը նրանց կողմից՝ հաշվետվողականության հաշվին.

- Սահմանադրորեն երաշխավորվեց դատավորների ընդհանուր անձեռնմխելիությունը, որը ներառում է անձեռնմխելիություն ոչ միայն ձերբակալությունից, կալանավորումից և խուզարկումից, այլև՝ քրեական հետապնդումից, բացառությամբ եթե դատավորը բռնվել է հանցանքը կատարելու պահին:<sup>30</sup>
- Անձեռնմխելիությունը զրկելու լիազորությունը վերցվեց Գերագույն դատարանի նախագահից և վերապահվեց ԱԴԽ-ին:<sup>31</sup>
- ԱԴԽ-ին տրվեց լիազորություն առաջադրել վերաքննիչ և առաջին աստիճանի դատարարանների դատավորներին:<sup>32</sup>
- 2019 թվականի դեկտեմբերին երրորդ ընթերցմամբ ընդունվեց բարեփոխումների «չորրորդ փաթեթը»,<sup>33</sup> որտեղ ներառված են փոփոխություններ՝ դատական գործերի հետաձգումների վերանայման, դատավորների ծանրաբեռնվածության նվազեցման, ԱԴԽ

<sup>30</sup> Վրաստանի Սահմանադրություն, հոդված 87, <<http://www.parliament.ge/uploads/other/28/28803.pdf>>

<sup>31</sup> «Ընդհանուր դատարանների մասին» Վրաստանի օրենքը, հոդված 42, մաս 3, <<https://matsne.gov.ge/en/document/download/90676/13/en/pdf>>

<sup>32</sup> «Ընդհանուր դատարանների մասին» Վրաստանի օրենքը, հոդված 36, մաս 3, <<https://matsne.gov.ge/en/document/download/90676/13/en/pdf>>

<sup>33</sup> [http://www.parliament.ge/en/saparlamento-saqmianoba/plenaruli-sxdomebi/plenaruli-sxdomebi\\_news/parlamentma-sasamartlo-reformis-meotxe-talgis-sakanonmdeblo-paketi-miigo.page](http://www.parliament.ge/en/saparlamento-saqmianoba/plenaruli-sxdomebi/plenaruli-sxdomebi_news/parlamentma-sasamartlo-reformis-meotxe-talgis-sakanonmdeblo-paketi-miigo.page)



գործունեության և Արդարադատության բարձրագույն դպրոցի վերաբերյալ:<sup>34</sup> Այդուհանդերձ, ՔՀԿ-ները դատապարտում են իրականացված փոփոխությունները, հայտարարելով, որ դատական համակարգը վերահսկվում է կոնկրետ անձանց կողմից և կատարված փոփոխությունները չապահովեցին դատական համակարգի անկախությունը: Հատկապես քննադատության արժանացավ 2019 թվականի դեկտեմբերին ԱԴԽ-ի կողմից Վրաստանի խորհրդարանին ներկայացված Գերագույն դատարանի տասը թեկնածուների ցուցակը: Ըստ տարածված հայտարարության՝ թեկնածուների ընտրությունն իրականացվել է կոպիտ և արագ ձևով՝ ընթացակարգային խախտումներով, և վերջնական ցուցակը հստակ արտացոլում է դատավորների ազդեցիկ խմբի շահերը: ՔՀԿ-ները կոչ են արել նաև Կառավարությանը՝ վերանայել գործող իրավակարգավորումները և սահմանափակել Գերագույն դատարանի դատավորների նշանակման լիազորությունները:<sup>35</sup>

## 2. Ալբանիա

### (a) Նախապատմություն

1990-ական թվականներին Ալբանիայում առկա էին անհրաժեշտ պատմական և քաղաքական նախադրյալներ՝ արդունավետ կերպով անցումային արդարադատություն իրականացնելու համար: 1945-1991թթ. ընթացքում երկրի ղեկավարումը ստանձնած կոմունիստական ուժերը երկրում բռնապետական կարգեր էին հաստատել, որոնց առկայության պարագայում ոչնչացվում էին այլախոհական հայացքներ ունեցող բոլոր անձինք: 1990-1992թթ. Ալբանիայում հակակառավարական լայնամասշտաբ ցույցեր տեղի ունեցան, որոնց ընթացքում բախումներ տեղի ունեցան կառավարական ուժերի և ցուցարարների միջև: Արդյունքում երկրում տեղի ունեցավ իշխանափոխություն:<sup>36</sup>

### (b) Դատական բարեփոխումների, ներառյալ՝ վեթինգի իրականացման չափորոշիչներ

<sup>34</sup> Դատական բարեփոխումների աշխատանքային խմբի հանդիպման հաղորդագրություն, <<http://independent-inspector.ge/Voice/News/ReadMore/2>>

<sup>35</sup> Քաղաքացիական հասարակության կոչը և հայտարարությունը, <<https://emc.org.ge/en/products/uzenaesi-sasamartlos-mosamartleta-shercheva-danishvna-da-sasamartlos-reforma>>; <<https://emc.org.ge/en/products/samokalako-sektori-parlamentisgan-uzenaesi-sasamartlos-dakomplektebis-shecherebas-moitkhovs>>

<sup>36</sup> «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի 2019 թվականին հրապարակված զեկույցը «Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո» խորագրով, էջ 113, <<https://armla.am/41375.html>>

«Դատավորների և դատախազների անցումային վերազնահատման մասին» Ալբանիայի օրենքը (այսուհետ նաև՝ «Վերթինգի մասին» Ալբանիայի օրենք) նախատեսում է վերազնահատման գործընթացի իրականացման երեք բաղադրիչներ.<sup>37</sup>

- Ակտիվների ստուգում (asset assessment).
- Կասկածելի կապերի ստուգում (background assessment).
- Գիտելիքների/հմտությունների ստուգում (proficiency assessment):

#### i. Ակտիվների ստուգում

**Ակտիվների ստուգումը** «Վերթինգի մասին» Ալբանիայի օրենքով նախատեսված առաջին բաղադրիչն է: Այս բաղադրիչն է, որին առավել շատ դիմադրել են դատավորները և դատախազները, ինչի արդյունքում վերթինգի գործընթաց չանցնելու պատճառով կտրուկ մեծացավ այս համակարգերում պաշտոնյաների հրաժարականների թիվը:

Ակտիվների ստուգման բաղադրիչի հիմնական տարրը՝ հայտարարագրերի ներկայացումներից հետո ակտիվների ընդհանուր առդիտի անցկացումն է, որտեղ գնահատվում է ակտիվների ձեռք բերման աղբյուրների օրինականությունը:

Ստուգումը հնարավորություն է տալիս գնահատել ակտիվների «հետևում» գտնվող ցանկացած ֆինանսական պարտավորություն և դրանից բխող ցանկացած հնարավոր անձնական հետաքրքրություն՝ գնահատվողի (ստուգվողի) և նրա հետ փոխկապակցված անձի համար:

**Բոլոր դատավորներն ու դատախազները պարտավոր են** հայտարարագրել իրենց ակտիվները՝ հնարավորություն ընձեռելով համապատասխան մարմիններին կատարել իրենց ակտիվների վերաբերյալ հետաքննություն:

Յուրաքանչյուրը, ում ակտիվները գնահատվում են, պետք է հիմնավորի դրանց ձեռքբերման օրինական աղբյուրները (օրինակ՝ եկամուտները, հարկային հայտարարագրերը):

Ի լրումն ակտիվների հայտարարագրման, գնահատվողը ներկայացնում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք հարկավոր են հիմնավորելու իր հայտարարագրում նշված տեղեկությունների արժանահավատությունը և օրինականությունը: Եթե հայտարարագրված ունեցվածքը **երկու անգամ ավելի մեծ**, որքան նրա օրինական եկամուտը, գնահատվողը համարվում է մեղավոր և պաշտոնից ազատվում է, **եթե չկարողանա ապացուցել հակառակը**:<sup>38</sup>

<sup>37</sup> «Դատավորների և դատախազների անցումային վերազնահատման մասին» Ալբանիայի օրենք, հոդված 4, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2016\)062-e&fbclid=IwAR3gy\\_OUL\\_hzGXR7o04MkXzGiiybF7LWXqZk4bAOT2PzSv6DOHVMssmqdgy](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2016)062-e&fbclid=IwAR3gy_OUL_hzGXR7o04MkXzGiiybF7LWXqZk4bAOT2PzSv6DOHVMssmqdgy)

<sup>38</sup> Տե՛ս նույն տեղում, Բաժին 4:

## ii. Կասկածելի կապերի ստուգում

Այս չափանիշի վերջնապատակն է հավաստիանալ, որ դատավորները, դատախազները կապված չեն կազմակերպված հանցավոր խմբերի հետ:

Այսպես, կասկածելի կապերի ստուգումը ընդգրկում է ակտիվների հայտարարագրերի և այլ տվյալների ստուգումը, որոնք ուղղված են բացահայտել կազմակերպված հանցագործությունների մեջ ներգրավված անձանց և նրանց կապերը: Եթե ստուգման արդյունքում գնահատվողը մեղավոր է ճանաչվում կազմակերպված հանցագործության մասնակիցների հետ հստակ կապեր ունենալու հիմքով, նա պաշտոնից ազատվում է, եթե չի կարող ապացուցել հակառակը:<sup>39</sup>

## iii. Գիտելիքների/հմտությունների վերազնահատում

**Գիտելիքների/հմտությունների վերազնահատումները** ապահովում են, որ բոլոր սուբյեկտները ենթարկվեն գիտելիքների/հմտությունների գնահատման: Այսպես, դատավորների դեպքում գնահատվում են նրանց՝ որպես **դատավոր գործելու հմտությունները, դատախազների դեպքում՝ նրանց նախնական քննություն անցկացնելու կարողությունները:**

Գիտելիքների/հմտությունների վերազնահատումը հնարավորություն է տալիս գնահատել նաև գնահատվողի կազմակերպական հմտությունները, էթիկան և անձնական որակները: Գիտելիքների/հմտությունների վերազնահատումը իրականացվում է օրենքով սահմանված չափանիշների հիման վրա:

Այն անձանց, ովքեր ստացել են «ոչ բավարար» գնահատականը, առաջարկվում է դասընթացներ անցնել Մագիստրանտների դպրոցում: Իսկ նրանք, ովքեր գնահատվել են որպես «անհամապատասխան» որոշակի հմտությունների համար, ազատվում են պաշտոնից:

## (c) Դատական բարեփոխումների, ներառյալ՝ վեթինգի իրականացման մեխանիզմ

«Վեթինգի մասին» Ալբանիայի օրենքով նախատեսված են վերազնահատման գործընթացներն իրականացնող հետևյալ մարմինները.

## iv. Անկախ որակավորման հանձնաժողով

<sup>39</sup> «Դատավորների և դատախազների անցումային վերազնահատման մասին» Ալբանիայի օրենք, Բաժին 5, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2016\)062-e&fbclid=IwAR3gy\\_OUL\\_hzGXR7o04MkXzGiyybF7LWXqZk4bAOT2PxSv6DQHVmssmqdY](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2016)062-e&fbclid=IwAR3gy_OUL_hzGXR7o04MkXzGiyybF7LWXqZk4bAOT2PxSv6DQHVmssmqdY)>

v. **Գանգատարկման պալատ**, որը վերանայում է Հանձնաժողովի որոշումների բեմ բերված բողոքները, վերջինս ունի **9 տարվա մանդատ** և այդ ընթացքում Ալբանիայի Սահմանադրությանը, «Սահմանադրական դատարանի կազմակերպման և գործունեության մասին» օրենքին և արդարադատության համակարգի կառավարման հարցերը կարգավորող օրենսդրությանը համապատասխան իրավունք ունի որոշելու՝

- o Ալբանիայի Սահմանադրական դատարանի դատավորների, Բարձր դատական խորհրդի, Բարձր դատախազական խորհրդի անդամների, Գլխավոր դատախազի և Արդարադատության բարձր տեսուչի կողմից թույլ տրված կարգապահական խախտումները:
- o Բողոքարկելու Ալբանիայի Բարձր դատական խորհրդի, Բարձր դատախազական խորհրդի, ինչպես նաև Արդարադատության բարձր տեսուչի այն որոշումները, որոնցով դատավորների, դատախազների և այլ տեսուչների նկատմամբ կիրառվում են կարգապահական տույժեր:

vi. **Հանրային հանձնակատար:**

Գործընթացն իրականացվում է միջազգային դիտորդների հետ համագործակցությամբ:<sup>40</sup>

«Վերինգի մասին» Ալբանիայի օրենքով նախատեսված են նաև **Վերագնահատման մարմինների անդամների ընտրության չափանիշները**: Այսպես, **Հանձնաժողովի և Գանգատարկման պալատի անդամ** նշանակվում է Ալբանիայի այն քաղաքացին, ով համապատասխանում է հետևյալ չափանիշներին.

- ավարտել և ստացել է իրավագիտության բակալավրի և մագիստրոսի աստիճան Ալբանիայում կամ արտերկրում, և ստացել է իրավաբանության համարժեք աստիճան, որը համապատասխանում է օրենքով նախատեսված դիպլոմների պահանջներին.
- դատավորի, դատախազի, փաստաբանի, իրավաբանական գիտությունների թեկնածուի, բարձրագույն պաշտոն ունեցող քաղաքացիական ծառայողի կամ վարչական կամ իրավունքի այլ ոլորտի աշխատողի ոչ պակաս, քան 15 տարվա աշխատանքային փորձ,
- էթիկայի, բարեխղճության և մասնագիտական հմտությունների բարձր մակարդակ, եթե նա նախկինում ենթակա է եղել գնահատման.
- վերջին 10 տարիների ընթացքում չի զբաղեցրել հանրային կառավարման ոլորտում քաղաքական պաշտոն կամ քաղաքական կուսակցության ղեկավար պաշտոն,
- նրա նկատմամբ չի իրականացվում քրեական հետապնդում, չի դատապարտվել ուղղակի դիտավորությամբ կատարված հանցագործության համար, նրա նկատմամբ չեն

<sup>40</sup> «Դատավորների և դատախազների անցումային վերագնահատման մասին» Ալբանիայի օրենք, Բաժին 2, հոդված 5, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2016\)062-e&fbclid=IwAR3gy\\_OUL\\_hzGXR7o04MkXzGiyybF7LWXqZk4bAOT2PzSv6DQHVMssmqdgy](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2016)062-e&fbclid=IwAR3gy_OUL_hzGXR7o04MkXzGiyybF7LWXqZk4bAOT2PzSv6DQHVMssmqdgy)>

կիրառվում այն սահմանափակումները, որոնք նախատեսված են «Ընտրված անձանց բարեխղճության երաշխավորման մասին» օրենքով, ով նշանակվել է կամ կատարում է հանրային գործառույթ.

- օրենքով սահմանված կարգով չի ազատվել նշանակված պաշտոնից՝ կարգապահական պատասխանատվության ենթարկվելու հիմքով, կամ Հանձնաժողովի և Գանգատարկման պալատի անդամ դառնալու մասին դիմում ներկայացնելու դրությամբ չունի չհանված կամ չմարված կարգապահական տույժ.
- մինչև 1990 թվականը չի հանդիսացել Ազգային անվտանգության անդամ, համագործակցող կամ արտոնյալ անձ, ինչպես նաև չի հանդիսացել համագործակցող անձ «Ալբանիայի Ժողովրդական սոցիալիստական հանրապետության նախկին անվտանգության ծառայության փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության իրավունքի մասին» թիվ 45/2015 օրենքի իմաստով.
- նախքան առաջադրվելը վերջին երկու տարիներին չի հանդիսացել դատավոր, դատախազ, իրավախորհրդատու կամ իրավական հարցերով օգնական.
- չի հանդիսացել արդարադատության համակարգի բարեփոխումների ժամանակավոր (ad hoc) հանձնաժողովի բարձրաստիճան փորձագիտական հանձնախմբի անդամ, կամ կուսակցությունների և արդարադատության նախարարության կողմից նշանակված փորձագետ.
- առավելագույնը 65 տարեկան է,
- ունի անգլերեն լեզվի լավ իմացություն:

Վերոնշյալ չափանիշների համապատասխանությունը հաշվի են առնվում հետևյալ չափանիշների հիման վրա.

- իրավունքի ոլորտում ակադեմիական գնահատականը.
- թեկնածուի մասնագիտացումը իրավունքի որոշակի ոլորտում.
- զբաղեցրած բարձրագույն պաշտոնը (seniority in the profession).
- կրթությունը և մասնագիտական կրթությունը արտերկրում.
- այն դեպքում, երբ թեկնածուն ստացել է իրավագիտության մագիստրոսի աստիճան Ալբանիայում կամ իրավաբանության համարժեք աստիճան արտերկրում, որը համապատասխանում է օրենքով նախատեսված դիպլոմների պահանջներին, նրա միջին որակավորման գնահատականը չպետք է ցածր լինի 8-ից:

Նշված պայմաններն ու չափանիշները կիրառվում են նաև **Հանրային հանձնակատարի** նշանակման դեպքում, բացառությամբ, որը նա պետք է ունենա ոչ պակաս, քան 10 տարվա մասնագիտական փորձ:<sup>41</sup>

«Վեթինգի մասին» Ալբանիայի օրենքի համաձայն վերը թվարկված **վերագնահատող մարմինների անդամի պաշտոն զբաղեցնելու հայտերի ներկայացումը և ստուգումն իրականացվում են հետևյալ եղանակով**։ Կազմավորվում են հետևյալ հանձնաժողովները.

- **Թեկնածուի ստուգման խորհրդարանական ժամանակավոր (ad-hoc) հանձնաժողովը,**
- **Թեկնածուների ընտրության խորհրդարանական ժամանակավոր (ad-hoc) հանձնաժողովներ:**

Վերջիններիս կազմավորման նպատակով **Ալբանիայի Հանրապետության Նախագահը** անմիջապես ուղարկում է **Մոնիթորինգի միջազգային մարմին** (International Monitoring Operation) **վերագնահատող երկու մարմինների անդամի պաշտոնի թեկնածուների ցանկերը** և թեկնածուների անհատական փաստաթղթերը, իսկ թեկնածուների ամբողջական ցանկերը հրապարակում է պաշտոնական վեբ կայքում: Այստեղ հարկ է նկատել, որ Ալբանիայում վեթինգի իրականացման համար տեղի են ունեցել սահմանադրական փոփոխություններ՝ Սահմանադրության հավելվածի եղանակով, և նախատեսված էր նշյալ հավելվածի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկրի նախագահի կողմից 45 օրվա ընթացքում գործընթացն ավարտելու ժամկետ, հակառակ պարագայում նշյալ լիազորությունը փոխանցվում է Օմբուդսմենին: **Մոնիթորինգի միջազգային մարմնի** առնվազն երեք ներկայացուցիչներից բաղկացած **գնահատող խումբը թեկնածուներին գնահատում է** օրենքի համաձայն: Նախագահի կողմից երկու ցուցակների ներկայացման օրվանից ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում, գնահատող խումբը թեկնածուների որակավորման և ընտրության վերաբերյալ ներկայացում է իր պատճառաբանված (հիմնավոր) առաջարկությունները Նախագահին, որը վերջինիս կողմից փոխանցվում է Ալբանիայի Խորհրդարանին: Եթե Նախագահը 5 օրվա ընթացքում չի կարող կատարել սույն գործառույթը, դրա կատարումը ևս վերապահվում է Օմբուդսմենին:<sup>42</sup>

- **Թեկնածուի ստուգման խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողով**

Ֆորմալ չափանիշներին համապատասխանող թեկնածուների ցանկը, ֆորմալ չափանիշներին չհամապատասխանող թեկնածուների ցանկը և Մոնիթորինգի միջազգային մարմնի

<sup>41</sup> «Դատավորների և դատախազների անցումային վերագնահատման մասին» Ալբանիայի օրենք, Բաժին 2, հոդված 6, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2016\)062-e&fbclid=IwAR3gy\\_OUL\\_hzGXR7o04MkXzGiiybF7LWXqZk4bAOT2PzSv6DOHVMssmqdY](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2016)062-e&fbclid=IwAR3gy_OUL_hzGXR7o04MkXzGiiybF7LWXqZk4bAOT2PzSv6DOHVMssmqdY)>

<sup>42</sup> Տե՛ս նույն տեղում, Բաժին 2, Հոդված 7:

առաջարկությունները ստանալուց հետո 3 օրվա ընթացքում **Ալբանիայի Խորհրդարանը ձևավորում է Թեկնածուի ստուգման ժամանակավոր հանձնաժողովը** և «Վեթինգի մասին» Ալբանիայի օրենքի 9-րդ հոդվածի համաձայն հաստատում է դրա կազմը, կանոնակարգը, այդ թվում՝ ընտրությունների անցկացման ընթացակարգը: **Տվյալ հանձնաժողովը բաղկացած է 6 անդամներից, որոնք ներկայացնում են մեծամասնության և ընդդիմադիր կուսակցություններին: Թեկնածուների ստուգման գործընթացն** իրականացվում է լսումների եղանակով, որի ավարտից հետո նշյալ հանձնաժողովը որոշում է.

- Կազմել ֆորմալ չափանիշներին համապատասխանող և չհամապատասխանող թեկնածուների ցուցակ՝ հանձնաժողովի անդամների առնվազն 4 ձայնով,
- Մոնիթորինգի միջազգային մարմնի կողմից ներկայացված ցանկից թեկնածուին տեղափոխվել քվեարկության ենթակա անձանց ցուցակ՝ հանձնաժողովի անդամների առնվազն 5 ձայնով:<sup>43</sup>

• **Թեկնածուների ընտրության խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովներ**

Պաշտոնական չափանիշներին համապատասխանող թեկնածուների ցանկը, պաշտոնական չափանիշներին չհամապատասխանող թեկնածուների ցանկը և Մոնիթորինգի միջազգային մարմնի կողմից առաջադրվող թեկնածուների ցանկը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում, Ալբանիայի Խորհրդարանը ձևավորում է Թեկնածուների ընտրության երկու ժամանակավոր հանձնաժողովները և հաստատում է դրանց կազմը՝

- 12 անդամներ, որից 6-ը առաջադրվել է խորհրդարանի մեծամասնության ուժի կողմից, իսկ 6-ը՝ փոքրամասնության կողմից:
- 6 անդամներ, որից 3-ը առաջադրվել է խորհրդարանի մեծամասնության ուժի կողմից, իսկ 3-ը՝ փոքրամասնության կողմից:<sup>44</sup>

**Թեկնածուների ընտրության գործընթացը** կատարվում է էլեկտրոնային գաղտնի քվեարկության միջոցով: Յուրաքանչյուր անդամ ընտրում և քվեարկում է մեկ թեկնածուի օգտին:

**6 հոգիանոց հանձնաժողովի** յուրաքանչյուր անդամ ներկայացված թեկնածուների ցուցակից ընտրում է **Գանգատարկման պալատի դատավորին՝** առանց քննարկման, գաղտնի և էլեկտրոնային քվեարկության միջոցով, որտեղ յուրաքանչյուր անդամ ընտրում է քվեարկում է մեկ թեկնածուի օգտին:

<sup>43</sup> «Դատավորների և դատախազների անցումային վերազնահատման մասին» Ալբանիայի օրենք, Բաժին 2, հոդված 8, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2016\)062-e&fbclid=IwAR3gy\\_OUL\\_hzGXR7o04MkXzGiiybF7LWXqZk4bAOT2PxSv6DQHVmssmqdgY](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2016)062-e&fbclid=IwAR3gy_OUL_hzGXR7o04MkXzGiiybF7LWXqZk4bAOT2PxSv6DQHVmssmqdgY)>

<sup>44</sup> Տե՛ս նույն տեղում, Բաժին 2, Հոդված 9:

**12 հոգիանոց հանձնաժողովի** յուրաքանչյուր անդամ ներկայացված թեկնածուներից ընտրում է **Անկախ որակավորման հանձնաժողովի անդամի թեկնածու**, առանց քննարկման, գաղտնի և էլեկտրոնային քվեարկության միջոցով, որտեղ յուրաքանչյուր անդամ ընտրում է քվեարկում է մեկ թեկնածուի օգտին:

12 հոգիանոց հանձնաժողովի անդամները նաև **Հանրային հանձնակատարի** պաշտոնի համար թեկնածուների ցանկից քվեարկության համար ընտրում են 2 թեկնածու: Ընտրված է համարվում այն անձը, ով ստացել է ձայների մեծամասնությունը:<sup>45</sup>

**Անկախ որակավորման հանձնաժողովի և Գանգատարկման պալատի նախագահների լիազորությունները հետևյալն են.**

- պատրաստում, անցկացնում և նախագահում է Հանձնաժողովի նիստերը,
- ներկայացնում է Հանձնաժողովը կամ Գանգատարկման պալատը երրորդ անձանց հետ հարաբերություններում,
- ապահովում է մարմնի կառավարումը,
- ընդունում և ստորագրում է Հանձնաժողովի կամ Գանգատարկման պալատի ակտերը, բացառությամբ որոշումների,
- «Վեթինգի մասին» Ալբանիայի օրենքի 14-15-րդ հոդվածներով, 18-րդ հոդվածի 4 մասով սահմանված կարգով ղեկավարում է քվեարկությունը:

**(d) Վենետիկի հանձնաժողովի կարծիքը**

Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովը կարծիք է ներկայացրել «Վեթինգի մասին» Ալբանիայի օրենքի վերաբերյալ:<sup>46</sup> Այդ կարծիքում նշվում է, որ Ալբանիայի համար վեթինգի իրականացումը կենսական նշանակություն ունի, քանի որ դատական և դատախազական համակարգերում կոռուպցիայի աստիճանը բավականին բարձր է, ուստի հրատապ և արմատական լուծումներ են անհրաժեշտ:<sup>47</sup> Ավելին, Վենետիկի հանձնաժողովը համանման դիրքորոշումն է արտահայտել նաև ավելի վաղ՝ դատական համակարգին վերաբերող սահմանադրական փոփոխությունների կապակցությամբ՝ նշելով, որ վեթինգի իրականացումը

<sup>45</sup> «Դատավորների և դատախազների անցումային վերագնահատման մասին» Ալբանիայի օրենք, Բաժին 2, հոդված 10, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2016\)062-e&fbclid=IwAR3gy\\_OUL\\_hzGXR7o04MkXzGiyybF7LWXqZk4bAOT2PxSv6DQHVmssmqdgy](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2016)062-e&fbclid=IwAR3gy_OUL_hzGXR7o04MkXzGiyybF7LWXqZk4bAOT2PxSv6DQHVmssmqdgy)>

<sup>46</sup> Ալբանիայի Դատավորների և դատախազների անցումային վերագնահատման մասին օրենքի վերաբերյալ (Վեթինգի մասին օրենք) Վենետիկի հանձնաժողովի կարծիքը, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)036-e&fbclid=IwAR0u3WXpe24SnXiyoe5jOGfh5MikMvSucCvzQyHhEuAg5lfx4lbg--S3ORY](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)036-e&fbclid=IwAR0u3WXpe24SnXiyoe5jOGfh5MikMvSucCvzQyHhEuAg5lfx4lbg--S3ORY)>

<sup>47</sup> Ալբանիայի Դատավորների և դատախազների անցումային վերագնահատման մասին օրենքի վերաբերյալ (Վեթինգի մասին օրենք) Վենետիկի հանձնաժողովի կարծիքը, պարագրաֆ 8, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)036-e&fbclid=IwAR0u3WXpe24SnXiyoe5jOGfh5MikMvSucCvzQyHhEuAg5lfx4lbg--S3ORY](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)036-e&fbclid=IwAR0u3WXpe24SnXiyoe5jOGfh5MikMvSucCvzQyHhEuAg5lfx4lbg--S3ORY)>



ոչ միայն արդարացված, այլ նաև անհրաժեշտ էր, որպեսզի Ալբանիան կարողանար ազատագրվել կոռուպցիայի խարանից:<sup>48</sup> Ձարգացնելով իր այս դիրքորոշումը, Վենետիկի հանձնաժողովը «Վեթինգի մասին» Ալբանիայի օրենքի վերաբերյալ տրված Կարծիքում անդրադառնալով համատարած վեթինգի գործընթացին, նշել է.

*«Վենետիկի հանձնաժողովը Ալբանիայի դատական համակարգի վերաբերյալ սահմանադրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ իր միջանկյալ կարծիքում, ի թիվս այլ հարցերի, ուսումնասիրել է դատավորների և դատախազների անցումային որակավորման գնահատման գործընթացը, որի շրջանակներում գործող բոլոր դատավորները և դատախազները պետք է ենթարկվեն վեթինգի («որակավորման գնահատման»)՝ հատուկ այդ նպատակով ստեղծված Անկախ որակավորման հանձնաժողովի կողմից:*

*Ինչպես նշված է միջանկյալ կարծիքում, վեթինգի գործընթացի անհրաժեշտությունը բացատրվում է այն ենթադրությամբ, որ ալբանական դատական համակարգում կոռուպցիայի մակարդակը ծայրահեղ բարձր է, և իրավիճակը պահանջում է հրատապ և արմատական միջոցներ:*

*Ընդգծելով, որ նման արմատական լուծումը չի խրախուսվի նորմալ պայմաններում, քանի որ այն ստեղծում է հսկայական լարվածություն դատական համակարգի ներսում և ռիսկի մեծ հավանականություն, որ դատական համակարգը կվերահսկվի իշխող քաղաքական ուժի կողմից, Վենետիկի հանձնաժողովը, նշել է, որ այս կտրուկ միջոցը դիտարկել է որպես անհրաժեշտ՝ Ալբանիայի համատեքստում այնքանով, որքանով այն շարունակում է մնալ արտակարգ և խիստ ժամանակավոր միջոց:*

*Միջանկյալ կարծիքը ձևակերպել է մի շարք առաջարկություններ, մասնավորապես՝ Անկախ որակավորման հանձնաժողովի կազմը և նրանց անդամների կարգավիճակը պետք է երաշխավորեն իրենց իրական անկախությունն ու անկողմնակալությունը, իսկ վեթինգի ենթարկվող դատավորները պետք է ունենան վերադաս անկախ մարմին բողոքարկելու իրավունք»<sup>49</sup>*

Կարծիքում առաջադրվել են հետևյալ հարցերը և տրվել հետևյալ պատասխանները.

<sup>48</sup> Ալբանիայի դատական համակարգի վերաբերյալ վերանայված սահմանադրական բարեփոխումների նախագծի մասին Վենետիկի հանձնաժողովի վերջնական կարծիք, պարագրաֆ 52, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)009-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)009-e)>

<sup>49</sup> Ալբանիայի Դատավորների և դատախազների անցումային վերագնահատման մասին օրենքի վերաբերյալ (Վեթինգի մասին օրենք) Վենետիկի հանձնաժողովի կարծիքը, պարագրաֆ 8, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)036-e&fbclid=IwAR0u3WXP24SnXiyoe5jOGFh5MikMvSucCvzQyHhEuAg51fx4Tbg--S3ORY](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)036-e&fbclid=IwAR0u3WXP24SnXiyoe5jOGFh5MikMvSucCvzQyHhEuAg51fx4Tbg--S3ORY)>

1. Հաշվի առնելով այն փաստը, որ Սահմանադրական դատարանի բոլոր դատավորները «Դատավորների և դատախազների անցումային վերագնահատման մասին» թիվ 84/2016 օրենքով սահմանված կարգով պետք է անցնեն վեթինգ, հնարավոր է, որ նրանց մասնակցությունը այս գործի քննությանը համարվի որպես շահերի բախում:

Վենետիկի հանձնաժողովի համար առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ վեթինգ իրականացնող դատավորները չհեռացվեն իրենց պաշտոններից այն հիմքով, որ իրենք են հանդիսանալու վեթինգ իրականացնող: Հետևապես, գործընթացը պետք է կազմակերպվի բացառապես սահմանադրությանը համապատասխան՝ պահպանելով դրա սկզբունքները:<sup>50</sup>

2. Արդյո՞ք վեթինգային հանձնաժողովի վերաբերյալ օրենքը հարգում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը: Մասնավորապես, արդյո՞ք դատական իշխանության անկախությունը խախտվում է, երբ դատավորների վերանշանակումը տեղի է ունենում գործադիր իշխանության ենթակայության ներքո գտնվող մարմինների ներգրավվածությամբ:

Մասնավորապես, Ալբանիայում դատավորների և դատախազների վեթինգի իրականացումը վստահվել էր սահմանադրական փոփոխությունների արդյունքում ստեղծված մարմիններին, ինչպիսիք էին՝ **Անկախ որակավորման հանձնաժողովը**, **Գանգատարկման պալատը** և **Հանրային Հանձնակատարը**, որոնք իրականացնում էին իրենց գործառույթները կառավարությանը ենթակա մի շարք մարմինների հետ համագործակցությամբ, այդ թվում՝ Շահերի բախման և սկտիվների հայտարարագրման և աուդիտի բարձրագույն տեսչության (High Inspectorate of the Declaration and Audit of Assets and Conflict of Interest), Փողերի լվացման կանխարգելման գլխավոր տնօրինության (General Directorate for the Prevention of Money Laundering), Դասակարգված տեղեկատվության անվտանգության տնօրինության (Classified Information Security Directorate) և Ներքին գործերի նախարարության հետ համագործակցությամբ: Սա կուսակցությունների շրջանում մտահոգությունների տեղիք էր տվել այն տեսանկյունից, որ Ազգային անվտանգության մարմինը գործադիր իշխանության մաս է կազմում, և կառավարության կողմից ենթարկվում է վերահսկողության, հետևապես վեթինգի գործընթացը, որոշակի չափով, վերահսկվում է գործադիրի կողմից:<sup>51</sup>

<sup>50</sup> Ալբանիայի Դատավորների և դատախազների անցումային վերագնահատման մասին օրենքի վերաբերյալ (Վեթինգի մասին օրենք) Վենետիկի հանձնաժողովի կարծիքը, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)036-e&fbclid=IwAR0u3WXpe24SnXiyoe5jOGfb5MikMvSucCvzQyHhEuAg5lfx4lbg--S3ORY](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)036-e&fbclid=IwAR0u3WXpe24SnXiyoe5jOGfb5MikMvSucCvzQyHhEuAg5lfx4lbg--S3ORY)>, պարագրաֆներ 17, 61

<sup>51</sup> Ալբանիայի Դատավորների և դատախազների անցումային վերագնահատման մասին օրենքի վերաբերյալ (Վեթինգի մասին օրենք) Վենետիկի հանձնաժողովի կարծիքը,

Նշյալ հարցի առնչությամբ Վենետիկի հանձնաժողովն այն դիրքորոշումն է արտահայտել, որ եթե վեթինգի գործընթացը ամբողջովին իրականացվի գործադիրի ենթակայության ներքո գտնվող մարմինների կողմից, ապա իշխանությունների բաժանման սկզբունքը կխախտվի, ուստի վեթինգ իրականացնելիս անհրաժեշտ է սահմանափակել գործադիր իշխանության մարմինների միջամտությունը վեթինգի նպատակներին հասնելու համար: Շարունակելով՝ Վենետիկի հանձնաժողովը փաստել է, որ չնայած այն հանգամանքին, որ գործադիր իշխանության մի շարք մարմիններ ներգրավված են եղել վեթինգի իրականացման գործընթացին, այդուհանդերձ, որոշում ընդունող միակ մարմինը հանդիսանում է Անկախ որակավորման հանձնաժողովը, իսկ գործադիր իշխանության մարմինները միայն խորհրդատվական բնույթ են կրում:<sup>52</sup> Գործադիր իշխանության մարմինների կողմից ապացույցների հավաքագրումը և դատական կարգով գնահատման ներկայացնելը դատական իշխանության գործունեությանը միջամտություն չի հանդիսանում և համապատասխանում է եվրոպական չափորոշիչներին:<sup>53</sup>

3. Արդո՞ք «Վեթինգի մասին» Ալբանիայի օրենքը համապատասխանում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքին: Արդո՞ք որակավորման ենթակա դատավորներին ներպետական դատարանների կողմից դատական քննության իրավունքից զրկվելը հակասում է կոնվենցիայի 6-րդ հոդվածին:

Վենետիկի հանձնաժողովի համար առանցքային նշանակություն ունեն հետևյալ հանգամանքները.

- Գանգատարկման պալատի անդամները կոչվում են դատավորներ, իրենց գործունեությունն իրականացնում են Բարձրագույն դատարանի ներքո և օգտվում են բոլոր այն օրենսդրական երաշխիքներից, որոնք դատավորների համար են նախատեսված,<sup>54</sup> բացի այդ, վերջիններս վեթինգի իրականացման ավարտից հետո հնարավորություն կստանան աշխատել որպես դատավորներ՝ ալբանական դատարաններում:<sup>55</sup>

[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)036-e&fbclid=IwAR0u3WXpe24SnXiyoe5jOGfh5MikMvSucCvzQyHhEuAg5lfx4Ibg--S3ORY](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)036-e&fbclid=IwAR0u3WXpe24SnXiyoe5jOGfh5MikMvSucCvzQyHhEuAg5lfx4Ibg--S3ORY), պարագրաֆ 27

<sup>52</sup> Ալբանիայի Դատավորների և դատախազների անցումային վերազնահատման մասին օրենքի վերաբերյալ (Վեթինգի մասին օրենք) Վենետիկի հանձնաժողովի կարծիքը, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)036-e&fbclid=IwAR0u3WXpe24SnXiyoe5jOGfh5MikMvSucCvzQyHhEuAg5lfx4Ibg--S3ORY](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)036-e&fbclid=IwAR0u3WXpe24SnXiyoe5jOGfh5MikMvSucCvzQyHhEuAg5lfx4Ibg--S3ORY), պարագրաֆ 38

<sup>53</sup> Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 36

<sup>54</sup> Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 39

<sup>55</sup> Ալբանիայի դատական համակարգի վերաբերյալ վերանայված սահմանադրական բարեփոխումների նախագծի մասին Վենետիկի հանձնաժողովի վերջնական կարծիք, պարագրաֆ 63, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)009-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)009-e)

- Ալբանիայի Սահմանադրության Հավելվածի Հոդված F-ով սահմանված նորմերն ապահովում են, որ թե՛ Անկախ որակավորման հանձնաժողովը, թե՛ Գանգատարկման պալատը լինեն անկախ և անաչառ,
- «Վեթինգի մասին» Ալբանիայի օրենքը պարտավորեցնում է, թե՛ Անկախ որակավորման հանձնաժողովին, թե՛ Գանգատարկման պալատին դատավորների և դատախազների համար երաշխավորել արդար դատաքննության իրավունքը:<sup>56</sup>
- Թե՛ Անկախ որակավորման հանձնաժողովը, թե՛ Գանգատարկման պալատն իրենց գործունեությունն իրականացնում են թափանցիկ, ինչը ենթադրում է, որ նիստերը պետք է լինեն հրապարակային: Բացի այդ, որոշումները պետք է լինեն հիմնավորված, և գրավոր ձևը պետք է պահպանվի:<sup>57</sup>

**Վենետիկի հանձնաժողովն այն համոզմունքն է արտահայտել, որ Գանգատարկման պալատը հանդիսանում է որպես «մասնագիտացված դատարանի մի տեսակ», որը ծառայում է որպես դատական երաշխիք այն անձանց համար, որոնց իրավունքները կարող են խախտվել վեթինգի ընթացքում:<sup>58</sup>** Ավելին, կարևորվում է, որ այն ստեղծվել է ոչ թե կոնկրետ գործով, այլ՝ մշտական հիմունքներով՝ վեթինգի կիրառման ամբողջ ժամանակահատվածում գործունեություն իրականացնելու նպատակով:<sup>59</sup>

**4. Արդյո՞ք կասկածելի կապերի ստուգման միջոցի հետևանքով չի խախտվի ՄԻԵԴ 8-րդ հոդվածը, որը վերաբերում է անձի մասնավոր կամ ընտանեկան կյանքին:**

Ըստ Վենետիկի հանձնաժողովի, հիշյալ միջոցի կիրառումը տեղի է ունենում հայտարարագրերի ստուգման և համեմատության միջոցով, որը թույլ կտա պարզել դատավորի և դատախազների հետ փոխկապակցված անձանց՝ հավաստիանալու, որ վերջիններս կապված չեն հանցավոր խմբերի հետ: Այս միջոցը հետապնդում է օրինական նպատակ և չի կարող հանդիսանալ ՄԻԵԴ 8-րդ հոդվածով ամրագրված՝ դատավորների և դատախազների անձնական կամ ընտանեկան կյանքին չհիմնավորված միջամտություն:<sup>60</sup>

### **3. Բռնիս և Հերցեգովինա**

#### **(a) Նախապատմություն**

<sup>56</sup> Ալբանիայի դատական համակարգի վերաբերյալ վերանայված սահմանադրական բարեփոխումների նախագծի մասին Վենետիկի հանձնաժողովի վերջնական կարծիք, պարագրաֆ 41, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)009-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)009-e)>

<sup>57</sup> Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 42

<sup>58</sup> Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 39

<sup>59</sup> Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 63

<sup>60</sup> Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 58

1995թ.-ին Դեյթոնի խաղաղության համաձայնագրով<sup>61</sup> վերջ տրվեց ոչ միայն երեքուկես տարի տևած դաժան հարավսլավական պատերազմին, այլև ձևավորեց համալիր ծրագիր՝ ուղղված Բոսնիա և Հերցեգովինայում խաղաղության հաստատմանը:

1998թ.-ից սկսեցին բարեփոխումներ՝ ուղղված օրենքի գերակայության հաստատմանը, միջազգային օրակարգի, դատախարական ոլորտի բարելավմանը և անցումային արդարադատության իրականացմանը, որի շրջանակներում որոշվեց դատական համակարգում և պետական կառավարման այլ մարմիններում իրականացնել վեթինգ: Վեթինգի ենթարկելու անհրաժեշտությունը հիմնականում պայմանավորված էր այդ համակարգերում առկա կոռուպցիայի և ոչ կոմպետենտության հանգամանքներով:

Սակայն, նախնական ջանքերը, որոնք ուղղված էին դատավորների և դատախազների համապարփակ վերանայմանը և նրանց՝ ոչ համապատասխանության հիմքով զբաղեցրած պաշտոնից հեռացնելուն, պսակվեցին անհաջողությամբ: Այնուհետև, 2001թ.-ի սկզբին ստեղծվեց **Անկախ դատական հանձնաժողովը** (ԱԴՀ)՝ որպես դատական բարեփոխումների առաջատար միջազգային կառույց, որը զարգացրեց դատական բարեփոխումների առողջացման ռազմավարությունը, որով առաջարկվեց փոխարինել վերանայման ընթացիկ գործընթացը՝ համատարած բոլոր դատավորների և դատախազների վերանշանակման գործընթացով՝ ըստ համապատասխանության: Սակայն, բարեփոխման այս փուլն էլ իրեն չարդարացրեց, քանի որ դատական համակարգը դարձավ շատ «թանկ» և անարդյունավետ, որը չէր ապահովում էթնիկական այնպիսի համաչափ ներկայացվածություն, ինչպիսին որ հասարակության մեջ էր: Այդ պատճառով էլ ԱԴՀ-ն առաջարկեց իրականացնել դատավորների և դատախազների վերանշանակման գործընթացը՝ դատական համակարգի վերակառուցման ծրագիրն իրականացնելուց հետո, որը նպատակ էր հետապնդում կրճատել դատական համակարգի աշխատողների, այդ թվում՝ դատավորների թիվը, ինչպես նաև խթանել էթնիկական ներկայացվածությունը:

Մի շարք փորձագետներ ի սկզբանե խորը վերապահումներ հայտնեցին ընդհանուր վերանշանակման գործընթացին: Հիմնական մտահոգությունը վերաբերում էր դատական պաշտոնների զբաղեցման համար առաջարկվող բաց մրցույթին և այդ պաշտոններից հնարավոր ազատումներին, հատկապես, որ դա տեղի էր ունենում Դեյթոնի խաղաղության համաձայնագրի ստորագրումից վեց տարի անց: Կար կարծիք, որ նման միջոցները կխախտեին դատական համակարգի անկախությունը, մասնավորապես՝ նրանց անփոփոխելիության սկզբունքը, որը նախատեսված է սահմանադրությամբ և օրենսդրությամբ, և կծառայեն դատական համակարգում քաղաքական միջամտության բացասական նախադեպ: Ի

<sup>61</sup> Բոսնիայում և Հերցեգովինայում խաղաղության համար շրջանակային ընդհանուր համաձայնագիր, ստորագրվել է 14.12.1995, <<https://www.osce.org/bih/126173?download=true>>

պատասխան, մի շարք այլ փորձագետներ հայտարարեցին, որ «*դա հենց այն պատճառով էր, որ դատավորը (...) անկախ չէ, և մասնագիտական վերանայման գործընթացը ստեղծվել է իրական անկախության հիմքերը ապահովելու համար*»: Ավելին, նրանց համոզմամբ, վերանշանակման գործընթացը ոչ միայն անհրաժեշտ էր, այլև՝ դատական համակարգի վերակառուցման հիմնական գործիքն էր:

#### (b) Վեթինգի իրականացման մեխանիզմները

Ապակենտրոնացված տեղական իշխանությունների կառուցվածքի վերաբերյալ որոշ մտահոգություններ մեղմելու նպատակով ստեղծվեցին երեք խորհուրդներ.

- **Բոսնիա և Հերցեգովինայի Բարձր Դատական և Դատախազական խորհուրդ (Պետական խորհուրդ).**<sup>62</sup>
- **Բոսնիա և Հերցեգովինայի Բարձր Դատական և Դատախազական խորհուրդ (Դաշնային խորհուրդ).**
- **Սըրպսկայի Հանրապետության (Republika Srpska) Բարձր Դատական և Դատախազական խորհուրդ (ՍՀ խորհուրդ):**

Խորհուրդները գործարկվեցին 2002թ.-ի սեպտեմբերի 2-ից: Խորհուրդները անկախ մարմիններ էին, որոնք կարգավորում էին դատական համակարգի հետ կապված կարևորագույն հարցերը, մասնավորապես՝ դատավորների և դատախազների ընտրությունը, նշանակումը, փոխադրումը, կարգապահական հարաբերությունները և ազատումը, նրանց մասնագիտական վերապատրաստման նկատմամբ վերահսկողությունը և բոլոր դատարանների ու դատախազական համակարգի համար բյուջետային առաջարկների նախապատրաստումը: Անցումային ժամանակաշրջանում, որն ավարտվեց 2004 թվականի մայիսի 31-ին, Խորհուրդներին տրվեց լրացուցիչ հանձնարարություն՝ **վերակառուցել բոլոր դատարաններն ու դատախազական ստորաբաժանումները, ներառյալ՝ գրեթե բոլոր դատավորների և դատախազների վերանշանակումը:**

Այս անցումային ժամանակաշրջանում, Խորհուրդները համատեղ ունեին 17 ազգային անդամ, ներառյալ 6-ական անդամ Դաշնային և ՍՀ խորհուրդներից, 5-ը՝ պետական խորհրդից, ինչպես նաև 8 միջազգային անդամ, որոնցից երկուսը հանդիսանում էին նախագահը և փոխնախագահը:

<sup>62</sup> Բոսնիա և Հերցեգովինայի Բարձր Դատական և Դատախազական խորհրդի (պետական խորհուրդ) և Բոսնիա և Հերցեգովինայի Բարձր Դատական և Դատախազական խորհրդի (դաշնային խորհուրդ) մասին օրենքները,

[<https://pravosudje.ba/vstv/faces/pdfServlet;jsessionid=2ed1a30eff3ec5ef6041422200cb73c2728cfa2aa8cf9cafc6b186765c3c7a28.e34TbxyRbNiRb40Qb34MahePaxn0?p\\_id\\_doc=14047>](https://pravosudje.ba/vstv/faces/pdfServlet;jsessionid=2ed1a30eff3ec5ef6041422200cb73c2728cfa2aa8cf9cafc6b186765c3c7a28.e34TbxyRbNiRb40Qb34MahePaxn0?p_id_doc=14047;); [<http://rai-see.org/wp-content/uploads/2015/08/LAW-ON-HIGH-JUDICIAL-AND-PROSECUTORIAL-COUNCIL-OF-BH.pdf>](http://rai-see.org/wp-content/uploads/2015/08/LAW-ON-HIGH-JUDICIAL-AND-PROSECUTORIAL-COUNCIL-OF-BH.pdf)

Խորհուրդների ազգային անդամները հանդիսանում էին դատական և դատախազական համակարգի տարբեր մակարդակների դատավորներ և դատախազներ, ինչպես նաև փաստաբաններ: **Խորհուրդների քարտուղարության գործառնություններն իրականացվում էր Անկախ դատական հանձնաժողովի (ԱԴՀ)-ի աշխատակազմի կողմից**, որը բաղկացած էր 120 աշխատողից:

Դատարանների վերակառուցումը հիմնված էր համապարփակ գնահատման վրա, որտեղ կիրառվեց երեք հիմնական սկզբունք.

- **դատավորների ծանրաբեռնվածությունը.**
- **բնակչության քանակը, որոնց սպասարկում են դատարանները.**
- **դատարանի հեռավորությունը հաջորդ՝ առավել մեծ դատարանից:**

Անհրաժեշտ դատավորների և դատախազների քանակը հաշվարկվեց դատական գործերի ներհոսքի հիման վրա: Այն պահից, երբ դատարանների և դատախազական ստորաբաժանումների, ինչպես նաև յուրաքանչյուր դատարանի և դատախազության ստորաբաժանման համար դատավորների և դատախազների թիվը որոշվեց, խորհուրդները նախաձեռնեցին վերանշանակման գործընթացը: Վերանշանակման գործընթացում հայտարարվեց դատական և դատախազական համակարգում թափուր տեղերը համալրելու մասին բաց մրցույթ, որին կարող էին դիմել այն բոլոր որակավորված մասնագետները, այդ թվում՝ համակարգից դուրս գտնվող թեկնածուները (external candidates), ովքեր համապատասխանում էին պահանջներին: Պաշտոնավարող դատավորները և դատախազները նույնպես իրավունք ունեին դիմել՝ հավակնելու իրենց կամ այլ պաշտոնի: **Վերանշանակման գործընթացը** տեղի է ունեցել **մի քանի փուլերով**, և յուրաքանչյուր փուլում ներգրավվել են սահմանափակ թվով դատարաններ և դատախազական ստորաբաժանումներ:

**Վերանշանակման գործընթացում ԱԴՀ-ն ստուգում էր ստացված դիմումների համապատասխանությունը ընդհանուր կանոններին, ներառյալ՝ սեփականության ձեռքբերման համապատասխանությունը օրենքին, քաղաքական պատկանելիությունը և ունեցած ակտիվները:** Դիմումներում ներառվում էին նաև տեղեկություններ, որոնք վերաբերում էին ռազմական ծառայությանը, զբաղեցրած հանրային պաշտոններին և իրավական գործընթացներին, որոնք տեղի են ունեցել կոնֆլիկտային տարիներին: ԱԴՀ-ն տրամադրում էր դիմումատուների անունները տարբեր միջազգային կազմակերպությունների՝ նրանցից մեկնաբանություններ, բողոքներ, գնահատականներ ստանալու նպատակով: Ստացվում էին նաև հակամարտության հետ կապված տեղեկություններ, սակայն դրանք բավարար չէին, և դրանց տրամադրման և ձեռքբերման գործընթացը թույլ էր, ինչի արդյունքում հնարավոր չէր ապահովել անկախ



**քննություն:** Վերանշանակման գործընթացի ժամանակ վեթինգ իրականացնող մարմնի վրա էր դրված ապացուցման բեռը, որ թեկնածուն չի համապատասխանում տվյալ պաշտոնին:

Վերանշանակումները տեղի էին ունենում՝ հիմք ընդունելով թեկնածուի **պրոֆեսիոնալ համապատասխանությունը և պահպանելով գենդերային ու ազգային համամասնական ներկայացվածության սկզբունքը:**

Բացի այդ, գործում էր բողոքների ստացման մեխանիզմ՝ դատարանների և դատախազների դեմ: Բողոքները քննության էին առնվում **Կարգապահական հասցերով դատախազության** գրասենյակի կողմից, որը, բավարար հիմքերի առկայության դեպքում, գործը փոխանցում էր **ԱԴՀ:** Այդ բողոքները, սակայն, հիմնականում պարունակել են ընդհանուր դժգոհություններ դատական որոշումներից, սակայն չեն ներառել որևէ առարկայական մեղադրանք:

Ընդհանուր առմամբ, վերանշանակման գործընթացն ունեցել է **«փափուկ» ազդեցություն** և ուղեկցվել է բարդություններով, որոնք հիմնականում պայմանավորված են եղել արդյունավետության և թափանցիկության ցածր մակարդակով, արհեստավարժ կադրերի պակասով, որն իր ցայտուն դրսևորումն էր ստանում, հատկապես՝ ազգային փոքրամասնություն հանդիսացող դատավորների շրջանում, ինչպեսև դատավորների և դատախազների բարեխղճության, տեխնիկական հմտությունների, որակավորումների, գույքային և ֆինանսական կարգավիճակի գնահատման հստակ չափորոշիչների բացակայությամբ:

Մյուս կողմից, վեթինգի արդյունքում **մեծացել է** դատական համակարգի **թափանցիկությունն ու հաշվետվողականությունը**, և մասնակիորեն վերականգնվել է դատական համակարգի նկատմամբ **հանրության վստահությունը**՝ 41-68 տոկոսով: Նշալը պայմանավորում են նաև այն հանգամանքով, որ վերանշանակման գործընթացն ամբողջովին իրականացվել է միջազգային հանրության վերահսկողության ներքո:

Թեև վերանշանակման գործընթացի ավարտից հետո միջազգային փորձագետները հեռացան Բոսնիայից, սակայն ԱԴՀ-ն դարձավ մշտական հիմունքներով գործունեություն ծավալող մարմին, որը հետագա տարիների ընթացքում զբաղվում էր դատավորների ընտրությամբ, նշանակմամբ, վերանշանակմամբ, պաշտոնանկությամբ, կարգապահական, վերապատրաստումների և էթիկայի հարցերով:

**(c) Վիճակագրություն**

Դատական համակարգի վերակառուցման և վերանշանակումների արդյունքում.

- **առաջին ատյանի դատարանների ավելի քան 30 տոկոսը փակվեց.**
- **դատավորների թիվը գրեթե 30 տոկոսով կրճատվեց.**



- 953 պաշտոնի համար ստացվել էր շուրջ 5000 հայտ՝ 2000 դիմորդից, քանի որ դիմորդներից շատերը դիմել էին մեկից ավելի պաշտոնի համար.
- վերանշանակման համար դիմում ներկայացրած գործող դատավորների և դատախազների գրեթե 30%-ը չվերանշանակվեց: Նշյալի պատճառներն են՝ կենսաթոշակային տարիքի լրացումը կամ վերանշանակման գործընթաց անցնել չցանկանալը:<sup>63</sup>

Առավել մանրամասն՝ ստորև ներկայացված աղյուսակներում:

**Դատական համակարգի փոփոխությունների ամփոփումը, առաջին աստիճանի դատարաններ.**

Կառույցը	Նախկինում	Առաջադրվածը	Փոփոխությունը
ՍՀ խորհուրդ	25	21	- 16 %
Դաշնային խորհուրդ	53	31	- 42 %
Ընդհանուր	78	52	- 33%

**Բարձր Դատական խորհրդի կողմից որոշված դատավորների պաշտոնների թիվը.**

Դատավորներ	Նախկինում	Նոր	Փոփոխությունը
ՍՀ շրջանի դատարանի դատավորներ	56	61	+ 9%
ՍՀ հիմնական դատարանի դատավորներ	227	144	- 37%
Քենթոնըլի (Cantonal) Դաշնային դատարանի դատավորներ	158	120	- 24%
Դաշնային մունիցիպալ դատարանի դատավորներ	439	304	- 31%
Ընդհանուր	880	629	- 29%

**Բարձր Դատախազական խորհրդի կողմից որոշված դատախազների պաշտոնների թիվը.**

Դատախազներ	Նախկինում	Նոր	Փոփոխությունը
------------	-----------	-----	---------------

<sup>63</sup> Հանրային ծառայողների վեթինգը հետ-կոնֆլիկտային պայմաններում: ՄԱԶԾ ձգնաժամերի Կանխարգելման և Վերականգնման Բյուրո, էջեր 37-41, <[https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-UNDP-Global-Vetting-Operational-Guidelines-2006-English.pdf?fbclid=IwAR1Zzd\\_iLq6LhmK5jP7NKNcZTZG5YzveyLuFZ\\_epcZHM15ITcxifzmeQ\\_IE](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-UNDP-Global-Vetting-Operational-Guidelines-2006-English.pdf?fbclid=IwAR1Zzd_iLq6LhmK5jP7NKNcZTZG5YzveyLuFZ_epcZHM15ITcxifzmeQ_IE)>

ՄՀ շրջանի դատախազներ	70	73	+ 4%
Քենթոնրլի (Cantonal) Դաշնային դատախազներ	177	172	- 3%
Ընդամենը	247	245	- 1%

**(d) Դատական քարտիտիսումների, ներառյալ՝ վեթինգի իրականացման օրենսդրական մեխանիզմները և Վենետիկի Հանձնաժողովի կարծիքը**

Վենետիկի հանձնաժողովը անդրադառնալով 2013 թվականի նոյեմբերի 1-ին ստացված «Բարձրագույն դատական և դատախազական խորհրդի մասին» Բոսնիա և Հերցեգովինայի օրենքի նախագծին, հանդես է եկել կարծիքով:<sup>64</sup> Ըստ այդմ՝ օրենքի նախագիծը շատ բարդ և համապարփակ գործիք է, որը նպատակ ունի կարգավորել Բարձրագույն դատական և դատախազական խորհրդի (ԲԴԽՄ) գործունեության բոլոր ասպեկտները: Նախագիծը բաժանված է հետևյալ տաս բաժինների. *Ընդհանուր դրույթներ; Խորհրդի անդամները և կառուցվածքը; Իրավասությունները և լիազորությունները; Պահանջները և պաշտոնավարման ժամկետները; Նշանակումը; Դատավորների և դատախազների կարգապահական պատասխանատվությունը; Դատավորների կամ դատախազների պաշտոնական լիազորությունների կասեցումը մինչև հարուցված քրեական գործերով որոշումների կայացումը և կարգապահական վարույթների ավարտումը,; Դատավորների և դատախազների պարտականությունների բախումը և անհամատեղելիությունը, նրանց անձեռնմխելիությունը; Լիազորությունների դադարեցումը; Եզրափակիչ դրույթներ:* Նախագիծը մանրակրկիտ մշակված է, և այն ձգտել է հաշվի առնել միջազգային չափանիշները:

Թեև օրենքի նախագիծը նմանություններ ունի նախորդ՝ 2004 թվականին ընդունված օրենքին և հանդես է գալիս զգալի փոփոխություններով, այդուհանդերձ, նոր նախագծի շատ դրույթներ մնացել են անփոփոխ՝ 2004 թվականին գործող օրենքի տարբերակից: Օրենքի նախագծով փոփոխությունները հիմնականում վերաբերում են ԲԴԽՄ կազմին, նրա անդամների ընտրությանը, նրանց պաշտոնավարման ժամկետին և լիազորությունների դադարեցմանը,

<sup>64</sup> «Բարձրագույն դատական և դատախազական խորհրդի մասին» Բոսնիա և Հերցեգովինայի օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիք, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)008-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)008-e)

երկու ենթախորհուրդների ստեղծմանը, դատավորների և դատախազների նշանակմանը, նրանց կատարողականի գնահատմանը և կարգապահական վարույթի իրականացմանը:<sup>65</sup>

Ուսումնասիրելով օրենքի նախագիծը, Վենետիկի հանձնաժողովը ողջունել հատկապես ԲԴԴԽ միասնական կառուցվածքում երկու ենթախորհրդի ստեղծումը. մեկը դատավորների, մյուսը՝ դատախազների համար: Չնայած այս խառը համակարգի վերաբերյալ ներկայացվել են մի շարք մտահոգություններ, Վենետիկի հանձնաժողովը կարծում է, որ Բոսնիա և Հերցեգովինայի հատուկ համատեքստում՝ նման համակարգը ընդունելի է պայմանով, որ այդ երկու ենթախորհուրդներին կվերապահվի առավելագույն ինքնավարություն: Այդուհանդերձ, հանձնաժողովը ներկայացրել է նաև մի շարք այլ առաջարկություններ, որոնց ամփոփված կարծիքի 126-րդ պարագրաֆում:<sup>66</sup>

#### 4. Ուկրաինիա

##### (a) Նախապատմություն

2014 թվականի ապրիլին, հեղափոխությունից երկու ամիս անց ընդունվեց «Ղատական համակարգի նկատմամբ վստահության բարձրացման մասին» օրենքը (այսպես կոչված՝ **Լյուստրացիայի օրենք**): Օրենքի նպատակն էր՝ դադարեցնել ղատական համակարգի կապերը նախորդ քաղաքական իշխանության հետ, սահմանափակել ուկրաինական ղատական համակարգի վրա անհիմն ազդեցության հնարավորությունները, և հետաքննել դատավորների արարքները, որոնք կամայականորեն հետապնդել են խաղաղ ցուցարարներին:

Օրենքի ուժով **աշխատանքից հեռացվեցին բոլոր դատարանների նախագահները**, որոնց միջոցով գործադրվել էին քաղաքական ճնշումներ դատավորների վրա, և դատավորներին իրավունք տրվեց **ընտրելու իրենց դատարանների նախագահներին**: Աշխատանքից ազատվեցին նաև դատավորների առաջխաղացման համար **պատասխանատու մարմինների՝ Ուկրաինայի դատավորների որակավորման բարձրագույն հանձնաժողովի և Արդարադատության բարձրագույն խորհրդի բոլոր անդամները**, որոնք կամայականորեն նշանակվել էին նախորդ իշխանության կողմից, ինչպես նաև նախատեսեց նրանց **վերանշանակման արգելք**՝ դատական համակարգի կառավարման մարմիններում:

<sup>65</sup> «Բարձրագույն դատական և դատախազական խորհրդի մասին» Բոսնիա և Հերցեգովինայի օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիք, պարագրաֆ 20, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)008-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)008-e)>

<sup>66</sup> Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 126

Այսպիսով ակնհայտ էր, որ օրենքի շրջանակները բավականին սահմանափակ էին, և հետևապես, այն ունեցավ միայն մարզինալ արդյունավետություն, մասնավորապես՝ դատական կառավարման մարմինների վրա:

Այնուամենայնիվ, **դատարանների 80%-ում որպես նախագահ վերանշանակվեցին նույն անձինք:** Չնայած այն հանգամանքին, որ դատարանների նախագահների մեծ մասի ընտրությունները կայացան նոր օրենքի կարգավորումներով, այդուհանդերձ այս մեծ թվով վերանշանակումները վկայեցին այն մասին, որ ուկրաինական դատական համակարգը պատրաստ չէր իրական անկախության և ինքնակառավարման, փոխարենը՝ նախընտրեց վերահսկվել:

**«Մայրանի գործով դատավորների» ժամանակավոր հատուկ հանձնաժողովի** աշխատանքը նույնպես արդյունավետ չէր: Այն ստեղծվել է ավելի քան 300 դատավորի հետաքննելու նպատակով, որոնք դատապարտել էին ուկրաինական հեղափոխության ցուցարարներին: Հանձնաժողովի ձախողումը պայմանավորված էր սահմանափակ լիազորությունների և Խորհրդարանի կողմից ստեղծած խոչընդոտների հանգամանքներով, ինչպես նաև Արդարադատության Բարձրագույն Խորհրդի ցուցաբերած անհամաձայնությամբ, որն արտահայտվում էր Հանձնաժողովի որոշումները հաստատելու գործընթացում:

2016 թվականին Հանձնաժողովի կատարված աշխատանքների արդյունքում 22 դատավորներ ազատվեցին զբաղեցրած պաշտոններից: Քանի որ Լյուստրացիայի մասին օրենքը չէր լուծում Ուկրաինայի արդարադատության համակարգի հիմնախնդիրների մեծ մասը, իսկ այդ համատեքստում հանրային մեծ պահանջը շարունակվում էր, ընդգրկուն դատական բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը ակնհայտ էր: Արդյունքում, 2015 թվականին Ուկրաինայի նախագահի հրամանով ընդունվեց «Դատական բարեփոխումների ռազմավարությունը», որն ուրվագծել էր **5 հիմնական ուղղություններ.**

- Դատական համակարգի անկախության բարձրացում.
- Դատական կառավարման և դատավորների նշանակման համակարգի նորացում.
- Դատական համակարգի արհեստավարժության բարելավում.
- Դատական համակարգի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում.
- Արդարադատության արդյունավետության բարձրացում և տարբեր ընդդատություններում արհեստավարժությունների խթանում:<sup>67</sup>

Ռազմավարությունը նախատեսում էր արդարադատության համակարգի օրենսդրության փոփոխություններ՝ երկու փուլով. **որպես առաջին փուլի բարեփոխումներ՝** նախատեսված էր օրենսդրական փոփոխություններ իրականացնել նախկինում ընդունված օրենքներում՝

<sup>67</sup> Դատական բարեփոխումները Ուկրաինայում, Միխայլո Փերնակով, «DeJuRe» հիմնադրամի տնօրեն, դատական բարեփոխումների առաջատար փորձագետ, էջ 4, <[https://rpr.org.ua/wp-content/uploads/2017/02/Renaissance\\_A4\\_5JURIDICIAL-REFORM.pdf](https://rpr.org.ua/wp-content/uploads/2017/02/Renaissance_A4_5JURIDICIAL-REFORM.pdf)>

նպատակ ունենալով բարձրացնել հանրության վստահությունը դատական համակարգի նկատմամբ: Հիշյալը, հատկապես, վերաբերում էր «Արդար քննության իրավունքի մասին» օրենքին, որն ընդունվել էր 2015 թվականի փետրվարին:

Այնուամենայնիվ, փոփոխված օրենքով **չհաջողվեց** բարձրացնել հասարակության վստահության մակարդակը արդարադատության ոլորտի հաստատությունների նկատմամբ և հասնել դատական համակարգի ապաքաղաքականացմանը:

Չնայած մի շարք դրական նորամուծությունների, որոնք ուղղված էին դատական համակարգի վերականգնմանը, **համատարած վեթինգ՝ յուրաքանչյուր դատավորի որակավորման գնահատում** (վերաորակավորում), նախատեսելը **արդյունավետ չէր**:

Նախ հարկ է նշել, որ Ուկրաինայի Գերագույն դատարանի և այլ վերադաս դատարանների դատավորների գնահատումը չիրականացվեց, քանի որ Դատավորների խորհուրդը արգելափակեց դրա մեթոդաբանության քննարկումը այնքան ժամանակ, մինչև ավարտվեցին գնահատման ժամկետները: Դատավորների խորհուրդը նաև Սահմանադրական դատարան մուտքագրեց բողոք՝ պնդելով, որ դատավորներին աշխատանքից ազատելը՝ նրանց գնահատման արդյունքների հիման վրա, հակասահմանադրական է:

Ի վերջո, երբ մի քանի ամիս անց ընթացակարգը հաստատվեց, այն հնարավորություն ընձեռեց Ուկրաինայի դատավորների որակավորման բարձրագույն հանձնաժողովին գնահատման ենթարկել առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանների դատավորներին: Այնուամենայնիվ, քանի որ Սահմանադրությունը դատավորին աշխատանքից ազատման հիմք չէր նախատեսում նրա ակտիվների ծագման աղբյուրը ներկայացնելու անհնարիությունը/անկարողությունը, ուստի գործընթացը գնահատվեց որպես **ոչ արդյունավետ և կասեցվեց**: Սահմանադրական հիշյալ սահմանափակումների արդյունքում, Ուկրաինայի դատավորների որակավորման բարձրագույն հանձնաժողովը որպես միակ միջոց, որ կարող էր կիրառել դատավորների նկատմամբ, դա պետության հաշվին նրանց լրացուցիչ վերապատրաստումների ուղարկելն էր:

Նկատի ունենալով, որ վերոգրյալի արդյունքում չկատարվեցին հանրության սպասելիքներն ու պահանջները, չլուծվեցին դատական համակարգի հիմնախնդիրները, ինչպես նաև առկա էր դատավորների ուժեղ դիմադրություն, հետևապես առաջացել էր հրատապ անհրաժեշտություն իրականացնել **Ռազմավարության երկրորդ փուլը, որը նախատեսում էր առավել արմատական միջոցառումներ, ինչպես օրինակ՝ Սահմանադրության փոփոխումն էր**:<sup>68</sup>

<sup>68</sup> Դատական բարեփոխումները Ուկրաինայում, Միխայլո Փերնակով, «DeJuRe» հիմնադրամի տնօրեն, դատական բարեփոխումների առաջատար փորձագետ, էջ 4, <[https://rpr.org.ua/wp-content/uploads/2017/02/Renaissance\\_A4\\_5JURIDICIAL-REFORM.pdf](https://rpr.org.ua/wp-content/uploads/2017/02/Renaissance_A4_5JURIDICIAL-REFORM.pdf)>

Այսպես, բարեփոխումների հաջորդ փուլում՝ 2016թ-ին իրականացվեցին սահմանադրական փոփոխություններ և ուժի մեջ մտավ «Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի մասին» օրենքը:

Բարեփոխումները ներառում էին արմատական փոփոխություններ, որոնք վերաբերում էին դատավորների ընտրությանը և նշանակումներին՝ կանխելով դատական պաշտոնների գնման և որակավորման մարմինների վրա քաղաքական ազդեցության հնարավորությունները: Նոր դատավորների համար հնգամյա փորձաշրջանի ժամկետը վերացվեց, որպեսզի խորհրդարանականները որևէ լիազորություն չունենան դատավորներին մշտական պաշտոններում նշանակելու հարցում: Արդյունքում, դատական համակարգը վերակազմավորվեց, որի շրջանակներում ստեղծվեց նոր Գերագույն դատարան՝ նախատեսելով դատավորների ընտրության և նշանակման նոր կարգ:

Բարեփոխումները նախատեսում էին արդարադատության բարձրագույն խորհրդի կազմում գործող դատավորների համար կարգապահական նոր մեխանիզմ և նոր մասնագիտացված հակակոռուպցիոն դատարան ստեղծելու հանձնառություն: Բարեփոխումներով անդրադարձել են դատավորների բարեվարքությանը:

Դատական բարեփոխումները ներառում էին նաև Սահմանադրության փոփոխություններ՝ օրենքների և ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ իրականացնելու սահմանադրական հիմքեր նախատեսելով:

Կոռուպցիայի դեմ պայքարի տեսանկյունից, **դատական բարեփոխումների արդյունավետության թեստը** կայանում էր նրանում, թե արդյո՞ք դրանք հնարավորություն են տալիս.

- դատական իշխանությանը կառավարել և ղեկավարել այդ իշխանությունը ինքնուրույն.
- իրականացնել դատական գործերի օբյեկտիվ քննություն՝ առանց քաղաքական մարմինների անհիմն միջամտության, ինչպիսիք են՝ Նախագահի աշխատակազմը և Խորհրդարանը (Գերագույն Ռեզոլյուցիայի)
- համապատասխան պաշտոններում ընտրել և նշանակել այնպիսի դատավորների, ովքեր արհեստավարժ են և ունեն բարձր անձնական բարեվարքություն:<sup>69</sup>

Այնուամենայնիվ, **դեռևս պարզ չէ**, արդյոք այս բարեփոխումը մոտ ապագայում կհանգեցնի օրենքի գերակայության ամրապնդմանը և կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի իրականացմանը: Դրա համապարփակությունը պահանջում է ժամանակ. հարկավոր է մի քանի տարի՝ ինչպես մասշտաբային փոփոխություններն ավարտելու, այնպես էլ պատշաճ իրավական դաշտ ստեղծելու և դրանք կյանքի կոչելու առումով: Լավագույն դեպքում, առնվազն 3 տարի է

<sup>69</sup> Ուկրաինական դատական համակարգի վերջին բարեփոխումների կոռուպցիան ռիսկերը, Դոկտոր Վիկտորիա Ջենրթ, Դատական բարեփոխումների փորձագետ, էջ 12, <[https://newjustice.org.ua/wp-content/uploads/2018/02/NJ\\_Judicial\\_Corruption\\_Risks\\_Report\\_2017\\_ENG-1.pdf](https://newjustice.org.ua/wp-content/uploads/2018/02/NJ_Judicial_Corruption_Risks_Report_2017_ENG-1.pdf)>

հարկավոր, որ բոլոր վերաքննիչ դատարանները վերակազմավորվեն, քանի որ դա այն ատյանն է, որտեղ առկա է դատավարությունների ամենամեծ քանակը:

Հաշվի առնելով բարեփոխումների իրականացման փուլում **Ուկրաինայի քաղաքական իշխանության ոչ բավարար քաղաքական կամքը՝ արդարադատության ոլորտում քաղաքական կախվածությունը նվազեցնելու համար**, շատ հավանական էր, որ վերջիններս իրականում փորձում էին հնարավորինս շատ վերահսկողություն պահպանել դատական համակարգի վրա: **Եվ անգամ այն պարագայում, որ Ուկրաինան ընդունել էր բոլոր հնարավոր օրենսդրական ակտերը, այդուհանդերձ դատավորների ընտրության գործընթացի և արդարադատության կառավարման ոչ ֆորմալ պրակտիկան դեռևս շարունակվում էր:**

Միաժամանակ պետք է նշել, որ բարեփոխումները տվեցին որոշ **շոշափելի արդյունքները**: Մասնավորապես, սահմանադրական բարեփոխումների միջոցով ներդրված համապարփակ էլեկտրոնային համակարգի շնորհիվ, որն ուղղված էր դատավորի գույքի, եկամուտների և ծախսերի բացահայտմանը, շուրջ 1000 դատավորներ **հրաժարականի դիմում ներկայացրեցին**, բացելով աշխատանքի հնարավորություն՝ նոր դատավորների համար: Ի լրումն, 2016թ. -ի նոյեմբերին, Գերագույն դատարանի դատավորների համար մրցույթ հայտարարվեց, և **ձևավորվեց Հանրային Բարեվարքության Խորհուրդ**, որպես քաղաքացիական կառույց, որը վերահսկելու էր դատավորների ընտրության և վեթինգի գործընթացը: Այնուհետև, բարձր մակարդակի կոռուպցիոն գործերի քննության նպատակով ձևավորվեցին **նոր իրավապահ և դատախազական մարմիններ**, մասնավորապես՝ Ազգային Հակակոռուպցիոն Բյուրոն և Մասնագիտացված Հակակոռուպցիոն Դատախազությունը:<sup>70</sup>

#### **(b) Դատական բարեփոխումների իրականացման ընթացքը**

2015թ.-ի մարտ ամսին Ուկրաինայի նախագահին կից ստեղծվեց Սահմանադրական հանձնաժողով, որը խորհրդակցական մարմին էր: Հանձնաժողովը մշակեց Ուկրաինայի Սահմանադրության դատական համակարգի վերաբերյալ փոփոխությունների նախագիծը, որն ուղղված էր՝ կոռուպցիայի դեմ պայքարին, դատական համակարգը նորացնելուն և դատական անկախության, անպատժելիության և հանրային հաշվետվողականության բարձրացմանը և մի շարք այլ կարգավորումների ներառմանը: Դատական անկախության լուծման նպատակով ներկայացվել էին մի շարք առաջարկություններ, ներառյալ՝ դատավորների ցկյանս նշանակումը, դատավորների առաջխաղացման հարցում Նախագահի և Խորհրդարանի

<sup>70</sup> Դատական բարեփոխումները Ուկրաինայում, Միխայլո Փերնակով, «DeJuRe» հիմնադրամի տնօրեն, դատական բարեփոխումների առաջատար փորձագետ, էջ 2, <[https://rpr.org.ua/wp-content/uploads/2017/02/Renaissance\\_A4\\_5JURIDICIAL-REFORM.pdf](https://rpr.org.ua/wp-content/uploads/2017/02/Renaissance_A4_5JURIDICIAL-REFORM.pdf)>

լիազորությունների սահմանափակում, Արդարադատության բարձրագույն խորհրդի ստեղծում, որի անդամները ընտրվեցին իրեն գործընկերների կողմից՝ ձայների մեծամասնությամբ:

**Դատական համակարգի նորացումը** ևս ենթարկվեց բանավեճերի: Նորացման հիմնական նպատակն էր՝ դատական համակարգը արհեստավարժ կադրերով համալրելը: Դատավորների ճնշող մեծամասնությունը վերապատրաստվել և նշանակվել էր կամ խորհրդային տարիներին, կամ դրանից անմիջապես հետո: Նրանցից շատերը ապավինում էին օրենքը հասկանալու հին մոտեցմանը, որը հիմնված է գրավոր օրենքի բացարձակ գերակայության վրա՝ երկրորդ պլան մղելով մարդու իրավունքների պաշտպանության կարևորությունը:

Հարկ է նաև նշել, որ երկար տարիներ դատավորները ենթակա էին քաղաքական ազդեցության, և նրանցից շատերն այնքան էին սովորել այդ պրակտիկային, որ թերահավատորեն էին մոտենում փոփոխություններին: Միջազգային գործընկերների աջակցությամբ և փորձաքննությամբ անցկացվող բազմաթիվ դասընթացներն էլ չփոխեցին պատկերը, հակառակը՝ ցույց տվեցին, որ **խնդիրը ոչ թե գիտելիքների պակասն էր, այլ այն կիրառելու ձևը**:<sup>71</sup>

Մեկ այլ **կարևոր նորամուծություն**, որ ներդրվեց սահմանադրական բարեփոխումների շրջանակներում. այն դեպքում, երբ դատավորը **չի կարողանում հիմնավորել իր ակտիվների օրինական ծագումը և հաջողությամբ չի անցնում որակավորման գնահատումը**, դրանք **հանդիսանում են սահմանադրական հիմքեր՝ վերջինիս պաշտոնից ազատելու համար**: Համապատասխան փոփոխություններ կատարվեցին նաև «Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի մասին» օրենքում, 2016 թվականի սեպտեմբերի 30-ին:

Արդյունքները՝ ըստ հետևյալ ոլորտների՝

#### (i) Դատական անկախության պաշտպանությունը

Դատավորների անկախությունը երաշխավորված է Ուկրաինայի Սահմանադրության 126-րդ հոդվածով<sup>72</sup> և «Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի մասին» Ուկրաինայի օրենքի 6-րդ հոդվածով:<sup>73</sup> Հիշյալ կարգավորումները արգելում են ցանկացած միջամտություն արդարադատության իրականացմանը, որը կարող է վնասել կամ թուլացնել դատավորների

<sup>71</sup> Դատական բարեփոխումները Ուկրաինայում, Միխայլո Շերնակով, «DeJuRe» հիմնադրամի տնօրեն, դատական բարեփոխումների առաջատար փորձագետ, էջ 6, <[https://rpr.org.ua/wp-content/uploads/2017/02/Renaissance\\_A4\\_5JURIDICIAL-REFORM.pdf](https://rpr.org.ua/wp-content/uploads/2017/02/Renaissance_A4_5JURIDICIAL-REFORM.pdf)>

<sup>72</sup> Ուկրաինայի Սահմանադրություն, հոդված 126, <[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/ukraine/ukrain-e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/ukraine/ukrain-e.htm)>

<sup>73</sup> «Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի մասին» Ուկրաինայի օրենք, <[https://www.legislationline.org/download/id/7029/file/Ukraine\\_law\\_judiciary\\_status\\_of\\_judges\\_2016\\_en.pdf](https://www.legislationline.org/download/id/7029/file/Ukraine_law_judiciary_status_of_judges_2016_en.pdf)>



անկախությունը: Դատավորների անկախության պաշտպանության գործիքները արտահայտված են դատավորների վերինգի և աշխատանքի հեռացման կարգավորումներով: Հաշվի առնելով դատական կոռուպցիայի պատմականորեն բարձր մակարդակները և դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության ցածր մակարդակը, 2016թ. -ի փետրվարից սկսած բոլոր դատավորները անցնում են որակավորման գնահատում, որը ներառում է վերինգի ընթացակարգ՝ նախքան պաշտոններում մշտական նշանակումը: Հիշյալ **ընթացակարգը** բաղկացած է դատավորների **կատարողականի գնահատումից**, որը ներառում է գործերի ուսումնասիրություն և հրապարակային հարցազրույց, ինչպես նաև **դատավորների և նրանց ընտանիքների անդամների ակտիվների ստուգում**: Մոտ 1600 **դատավոր նախընտրեց ներկայացնել հրաժարական**, քան թե՝ **անցնել վերինգի գործընթացով**, իսկ **գնահատված դատավորների շուրջ 25% -ին չհաջողվեց անցնել այդ գործընթացը**: Դատավորների մի փոքր խումբ վերինգի ենթարկվեց նաև «Դատական համակարգի նկատմամբ վստահության բարձրացման մասին» օրենքով սահմանված կարգով, որն իրականացվեց Դատավորներին վերինգի ենթարկել նպատակով ստեղծված Հատուկ Միջանկյալ Հանձնաժողովի կողմից, որը գնահատեց հեղափոխության գործերով դատավորների կողմից կայացված որոշումները: Արդյունքում, Հանձնաժողովը աշխատանքի **հեռացրեց 22 դատավորի՝ հեղափոխության գործերով սխալ դատավճիռներ կայացնելու հիմքով**: Բացի այդ, մեկ այլ «Մաքրման մասին» օրենքով («Law on Purification») իրավական ակտով, հիշյալ անձինք զրկվեցին որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից:<sup>74</sup>

## (ii) Դատական համակարգի ինքնակառավարումը

«Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի մասին» օրենքի 126-րդ հոդվածը սահմանում է Ուկրաինայում դատական ինքնակառավարման նպատակները: Դատական համակարգի անկախությունը ապահովելու համար, ինքնակառավարման մարմինների դատավորները պաշտպանում են իրենց մասնագիտական շահերը և անդրադառնում Ուկրաինայում դատարանների ներքին գործունեության հիմնախնդիրներին: Մա ներառում է դատարաններին և դատավորներին կազմակերպչական աջակցության ցուցաբերում և դատավորների ու նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:

Դատական համակարգի ինքնակառավարումը տեղի է ունենում **երեք մարմինների միջոցով**

<sup>74</sup> Ուկրաինական դատական համակարգի վերջին բարեփոխումների կոռուպցիան ռիսկերը, Դոկտոր Վիկտորիա Ջենրթ, Դատական բարեփոխումների փորձագետ, էջ 13, <[https://newjustice.org.ua/wp-content/uploads/2018/02/NJ\\_Judicial\\_Corruption\\_Risks\\_Report\\_2017\\_ENG-1.pdf](https://newjustice.org.ua/wp-content/uploads/2018/02/NJ_Judicial_Corruption_Risks_Report_2017_ENG-1.pdf)>

- Դատավորների ժողով.
- Դատավորների խորհուրդ.
- Դատավորների կոնգրես:

Դատավորների կոնգրեսը դատական ինքնակառավարման համակարգի բարձրագույն ներկայացուցչական մարմինն է, որի նիստեր է գումարում 2 տարին մեկ անդամ: Կոնգրեսի հիմնական գործառնություններից է՝<sup>75</sup>

- Սահմանադրական դատարանի դատավորներին **նշանակելը**,
- Արդարադատության բարձրագույն խորհրդի անդամներին և Բարձրագույն որակավորման հանձնաժողովի անդամներին **ընտրելը**:
- Դատավորների խորհրդին անդամներին ընտրելը:

Դատավորների խորհուրդը պատասխանատու է Դատավորների կոնգրեսի որոշումների կայացման համար, և գործում է Կոնգրեսի անունից՝ նիստերի միջև ընկած ժամանակահատվածում:<sup>76</sup>

**Արդարադատության բարձրագույն խորհրդի** դերը էականորեն վերափոխվեց 2016 թվականի դատական բարեփոխումներով: Ներկայումս ԱԲԽ-ն բաղկացած է **21 անդամից**, որոնք նշանակվում են **չորս տարի ժամկետով, առանց վերընտրման իրավունքից**: Նրանցից **10-ը** ընտրվում է **Դատավորների կոնգրեսի կողմից: Նախագահը, Խորհրդարանը, Փաստաբանների պալատը, Դատախազների համաժողովը և Բարձրագույն իրավաբանական ուսումնական հաստատությունների համաժողովը** ընտրում են **2-ական անդամ**: **Գերագույն դատարանի նախագահը** ի պաշտոնե հանդիսանում է ԱԲԽ անդամ: Ի թիվ այլ պահանջների, հիշյալ անդամները պետք է լինեն իրավաբան և ունենան քաղաքական չեզոքություն: Փոփոխությունների արդյունքում, արդարադատության նախարարը և գլխավորը դատախազը զրկվեցին Խորհրդին անդամակցելու իրավունքից:

ԱԲԽ-ն մեծ դերակատարում ունի **դատավորների նշանակման, կարգապահական վարույթների, աշխատանքից ազատման և դատավորների անհամատեղելիության պահանջների վերահսկման** հարցում: ԱԲԽ-ն ներկայումս միակ իրավասու է մարմինն է, որ իրականացում է դատավորների և դատախազների վարույթների իրականացումը (նախկինում այս գործառնությունը իրականացվում էր ԱԲԽ-ի և Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից): ԱԲԽ-ն **Նախագահին է ներկայացնում դատական նշանակումների վերաբերյալ առաջարկություններ**: Ի թիվս այլ

<sup>75</sup> «Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի մասին» Ուկրաինայի օրենք, 129-րդ հոդված  
<sup>76</sup> Ուկրաինական դատական համակարգի վերջին բարեփոխումների կոռուպցիան ռիսկերը, Դոկտոր Վիկտորիա Ջենըթ, Դատական բարեփոխումների փորձագետ, էջ 14, <[https://newjustice.org.ua/wp-content/uploads/2018/02/NJ\\_Judicial\\_Corruption\\_Risks\\_Report\\_2017\\_ENG-1.pdf](https://newjustice.org.ua/wp-content/uploads/2018/02/NJ_Judicial_Corruption_Risks_Report_2017_ENG-1.pdf)>

լիազորությունների, ԱԲԽ-ն է նաև **որոշում դատավորների տեղափոխման հարցը**, ինչպես նաև **տալիս է համաձայնություն դատավորի կալանավորելու և ձերբակալելու համար:**

**Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը** պատասխանատու է դատական պաշտոնների համալրման նպատակով թեկնածուների հավաքագրման և ընտրության համար: Նախկինում, ինչպես արդեն նշվեց վերևում, այս հանձնաժողովը իրավասություն ուներ նաև դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների հարուցման հարցում: Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը բաղկացած է **16 անդամից**, որից **8-ը**, ովքեր ունեն 10 տարվա փորձ, ընտրվում են **Դատավորների կոնգրեսի** կողմից, **2-ը՝ Բարձրագույն իրավաբանական ուսումնական հաստատությունների** կողմից, **2-ը՝ Փաստաբանների պալատի** կողմից, **2-ը՝ Օմբուդսմենի** կողմից, **2-ը՝ Պետական դատական վարչության** կողմից: Բոլոր անդամները պետք է լինեն իրավաբան և ունենան քաղաքական չեզոքություն:

**(iii) Դատավորների ընտրությունն ու նշանակումը**

2016թ. -ի նոյեմբերից մինչև 2017թ. -ի օգոստոսը Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը կազմակերպեց դատավորների ընտրությունների առաջին գործընթացը՝ բարեփոխումներից հետո: Ընտրություն վերաբերում էր նորաստեղծ Գերագույն դատարանի 120 անդամ դատավորների ընտրությանը:

Թեկնածուների հավաքագրումից մինչև դատավորների նշանակում, գործընթացն ընթանում է **հետևյալ կերպ**. Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը պատասխանատու է թեկնածուների հավաքագրման և դատավորների ընտրության համար: Այնուհետև, ընտրված թեկնածուների ցուցակը ներկայացվում է ԱԲԽ-ի հաստատմանը: Վերջինս դատավորների թեկնածուների և նրանց նշանակման վերաբերյալ իր առաջարկությունները ներկայացնում է Նախագահին: Պետք է նաև ընդգծել, որ այս գործընթացում **Նախագահի նշանակման լիազորությունը արարողակարգային է**, և Նախագահը **չի կարող մերժել դատավորների նշանակումը:**

Անդրադառնալով դատավորների նշանակմանը գործընթացի մանրամասներին, հարկ է նշել, որ այն կազմակերպվում է հետևյալ վեց փուլերով, որտեղ.

- 1) Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը ստուգում է, արդյո՞ք թեկնածուները **համապատասխանում են հավաքագրման իրավական պահանջներին**.
- 2) Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը իրականացնում է **թեկնածուների կարողությունների գնահատում**, որի շրջանակներում ստուգվում է

թեկնածուի ընդհանուր իրավական տեսական գիտելիքները, ինչպես նաև գնահատվում են նրանց լեզվի հմտությունները և անձնական ու բարոյական արժեքները.

- 3) Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը իրականացում է **թեկնածուի կասկածելի կապերի ստուգում**, որտեղ ի թիվս այլ աղբյուրների, օգտվում են նաև մասնավոր աղբյուրների տեղեկություններից: Ներկայացվում են նաև թեկնածուների **ակտիվների հայտարարագրերը, և ընտանեկան կապերի մասին հայտարարագրեր**.
- 4) Թեկնածուները անցնում են **տասներկուամսյա դասընթացներ** Դատավորների ազգային դպրոցում, որն ավարտվում են որակավորման քննություններ հանձնելով.
- 5) Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը իրականացնում է թեկնածուների որակավորման գնահատում՝ ստուգելով **թեկնածուների արհեստավարժությունը, մասնագիտական էթիկան և բարեվարքությունը**: Այս գործընթացում հանձնաժողովին աջակցում է Հանրային Բարեվարքության Խորհուրդը՝ **գնահատելով վերջին երկու հատկությունները**.
- 6) Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը իրականացնում է վերջնական գնահատում և ներկայացնում նշանակման առաջարկություններ ԱԲԽ-ին:

Ընտրական գործընթացում թեկնածուները իրավունք ունեն բողոքարկել Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովի և ԱԲԽ-ի որոշումները:

#### (iv) Դատավորների ակտիվների և վարքագծի վերահսկումը

Դատավորների ակտիվների և վարքագծի վերահսկումը տեղի ունենում տաբեր մակարդակներում: «Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի» մասին օրենքի 60-րդ հոդվածը սահմանում է՝ առնվազն յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ, կենտրոնական գործադիր մարմինը, որը այս դեպքում **Կոռուպցիայի Կանխարգելման Ազգային Գործակալությունն է**, իրականացնելու է **ակտիվների էլեկտրոնային հայտարարագրերի ամբողջական ստուգում**:

Անհրաժեշտության դեպքում, Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը և ԱԲԽ-ն կարող են դիմել Կոռուպցիայի Կանխարգելման Ազգային Գործակալությանը՝ լրացուցիչ աջակցության համար, օրինակ՝ ստուգելու դատավորի ամբողջ ակտիվների հայտարարագրերը (ոչ միայն էլեկտրոնային հայտարարագրերը), աջակցել դատավորի թեկնածության ընտրության գործընթացում կամ կարգապահական վարույթների իրականացման ընթացքում:

Իր հերթին Կոռուպցիայի Կանխարգելման Ազգային Գործակալությունը քրեական արարքի վերաբերյալ ապացույցներ ունենալու դեպքում, պետք է դրանք ներկայացնի Հակակոռուպցիոն

Ազգային Բյուրո, իսկ կարգապահական խախտման ապացույցները՝ Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողով և ԱԲԽ:

Ի լրումն, «Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի» մասին օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով, Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովի կամ ԱԲԽ-ի դիմումի հիման վրա՝ Կոռուպցիայի Կանխարգելման Ազգային Գործակալությունը իրավունք ունի մշտադիտարկելու դատավորի կենսակերպը (կենցաղը): Մշտադիտարկման արդյունքները պետք է ուղարկվեն դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Արդյունքները կարող են կցվել դատավորի անձնական գործին և օգտագործվել դատավորի՝ դատական էթիկայի կանոնների համապատասխանությունը գնահատելու ընթացքում:

Դատավորի ընտանեկան կապերի մասին և դատական բարեվարքության մասին հայտարարագիրը ներկայացվում են Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովին:

Կոռուպցիայի Կանխարգելման Ազգային Գործակալությունը էական դեր ունի ակտիվների հայտարարագրերի ստուգման և դատավորների բարեվարքության քննության և որոշման գործում: Դրա արդյունքները անհրաժեշտ են շահերի բախման բացահայտման, դատական պաշտոններում թեկնածուներին ընտրելու, առանձին դատավորների կատարողականի գնահատման, դատավորների կողմից կարգապահական իրավախախտումների հաստատման և հանցավոր վարքի ապացույցների ձեռքբերման տեսանկյունից:

Այնուամենայնիվ, գործնականում **Կոռուպցիայի Կանխարգելման Ազգային Գործակալությունը ձախողել է** էլեկտրոնային հայտարարագրերը ստուգելու իր պարտականությունների կատարումը, և հետևաբար, **չի կարողացել նպաստել** շահերի բախման, դատավորների կարգապահական հարցերի, դատավորների կատարողականի գնահատման համակարգերի արդյունավետ գործարկմանը: Գործակալությունը **ձախողել է** նաև Հակակոռուպցիոն Ազգային Բյուրոին քրեական արարքների վերաբերյալ բավարար ապացույցների ներկայացման պարտականության կատարումը:

Դատավորների շահերի բախումը, վարքագծի կանոնները, նվերների ընդունման արգելքը, վերապատրաստումները և այլ հարցեր կարգավորված են «Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի մասին» Ուկրաինայի օրենքով:<sup>77</sup>

### (c) Վենետիկի հանձնաժողովի երկու կարծիքները

<sup>77</sup> «Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի մասին» Ուկրաինայի օրենք, <[https://www.legislationline.org/download/id/7029/file/Ukraine\\_law\\_judiciary\\_status\\_of\\_judges\\_2016\\_en.pdf](https://www.legislationline.org/download/id/7029/file/Ukraine_law_judiciary_status_of_judges_2016_en.pdf)>

Դատական բարեփոխումների իրականացման համատեքստում, Ուկրաինյան դիմել է Վենետիկի հանձնաժողովին՝ երկու իրավական ակտի վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով: Առաջինը վերաբերում էր դատական համակարգի մասին սահմանադրական բարեփոխումներին, երկրորդը՝ «Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի» մասին օրենքին:

- **Դատական համակարգի մասին սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ**

Հանձնաժողովը ուսումնասիրելով դատական համակարգի մասին սահմանադրական բարեփոխումների փաթեթը, գտել է, որ Ուկրաինայի սահմանադրական հանձնաժողովի դատական համակարգի հարցերով աշխատանքային խմբի կողմից նախապատրաստված սահմանադրական փոփոխությունների վերջին տարբերակը բավականին դրական և լավ մշակված է, ուստիև արժանի է Հանձնաժողովի լիարժեք աջակցությանը: Այդուհանդերձ, Հանձնաժողովն նաև առաջարկել է Սահմանադրության որոշակի հավելյալ փոփոխություններ, որոնք ներկայացված են ստորև:

Իր նախնական կարծիքում, Հանձնաժողովը արդեն **ողջունել էր հետևյալ փոփոխությունները**՝

- Դատավորների նշանակման հարցում Խորհրդարանի լիազորությունների դադարեցումը.
- Կրտսեր դատավորների համար փորձաշրջանի ժամկետի վերացումը.
- «Երդման խախտումը»՝ որպես դատավորին պաշտոնից ազատման հիմքի դադարեցումը.
- Դատախազական համակարգի բարեփոխումը, դրա անկախության երաշխիքների սահմանումը (մասնավորապես՝ Գլխավոր դատախազին անվստահություն հայտնելու մասին Խորհրդարանի լիազորության դադարեցումը)՝
- Սահմանադրական դատարանի անդամների հավասարակշռված կազմը, երբ նշանակումը իրականացվում էն Նախագահի, Խորհրդարանի և Դատավորների կոնգրեսի կողմից.
- և այլն:

Հանձնաժողովը **ողջունել էր նաև իր առաջարկությունների հիման վրա կատարված հետևյալ փոփոխությունները.**

- Դատավորների ազատման հարցում Նախագահի լիազորությունների դադարեցումը.
- Խորհրդարանը կմասնակցի ԱԲԴ-ի կազմավորման որոշումների կայացմանը.
- և այլն:

Հանձնաժողովը առաջարկել էր նաև **կատարել հետևյալ հավելյալ փոփոխությունները.**

- 131-րդ հոդվածի 1.4 մասում սահմանել, որ ԱԲԽ-ն իրավունք ունի **ոչ միայն որոշել դատավորների լիազորությունների դադարեցման հարցերը**, այլև՝ **դատավորներին այլ դատարան տեղափոխելու և նրանց առաջխաղացման հարցերը**: Այս փոփոխությունները հատկապես կարևոր են անցումային շրջանի համար:
- Նախատեսել, որ միայն **խիստ** բնույթի կարգապահական խախտումների դեպքում Սահմանադրական դատարանի դատավորները կարող են ազատվել զբաղեցրած պաշտոնից:

Ի հավելումն, Վենետիկի հանձնաժողովը գտել է նաև, որ Ուկրաինայի ներկայիս իրավիճակում գուցե ցանկալի է Սահմանադրության մեջ հստակ նշել, որ դատավորի կողմից դատավորի գույքի, ակտիվների ծագումը հիմնավորող հայտարարագիր ներկայացնելու պարտավորության խախտումը կարող է լիազորությունների դադարեցման հիմք հանդիսանալ:<sup>78</sup>

- **«Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ**

Վենետիկի հանձնաժողովը, ուսումնասիրելով «Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի մասին» օրենքը, գտել է, որ ընդհանուր առմամբ օրենքը, կարծես թե համահունչ է, լավ կազմված և, կարծես, բազմաթիվ կետերով հետևում է Վենետիկի հանձնաժողովի նախորդ առաջարկություններին: Դատական անկախության համատեքստում Գերագույն դատարանի դերի բարձրացումը, դատավորների նշանակման գործընթացում Նախագահի դերի արարողակարգային բնույթը, «երդման խախտումը»՝ որպես դատավորի պաշտոնական լիազորությունների դադարեցման հիմք վերացնելը, դատավորին նախքան ցկյանս պաշտոնում նշանակելը՝ որակավորման քննությունների կազմակերպումը, ինչպես նաև կարգապահական վարույթի հետ կապված փոփոխությունները Հանձնաժողովի կողմից գնահատվում են որպես բարելավումներ:

Այնուամենայնիվ, որոշ կարևոր **հարցեր դեռևս առկա են և պետք է լուծվեն ինչպես սահմանադրական, այնպես էլ օրենսդրական մակարդակով**: Դրանց թվում են.

- Դատարանների վերակազմակերպման կամ լուծարման դեպքում, դատավորներին առանց իրենց համաձայնության այլ դատարաններ տեղափոխելու լիազորությունը, որը տրված է Նախագահին, պետք է սահմանափակվի:

<sup>78</sup> Ուկրաինայի դատական համակարգի մասին սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի ամբողջական կարծիքը, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2015\)027-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2015)027-e)

- Չնայած իշխանությունների ցանկությանը ունենալ դատական համակարգ, որտեղ չեն լինի ոչ կոմպետենտ և կոռուպացված անդամներ, այդուհանդերձ վերջիններիս հեռացումը իրենց զբաղեցրած պաշտոնից պետք է իրականացվի արդար և համաչափ կերպով:
- Անցումային դրույթներ սահմանող հոդված 6-ը, որտեղ նախատեսված է որակավորման գնահատումը, պետք է ապահովվեն իրավական երաշխիքներ:
- Գնահատումը հաջողությամբ անցնելու ձախողման հիմնական իրավական հետևանքները պետք է համահունչ լինեն Եվրոպական 19-CDL-AD(2015)007 ստանդարտներին: Դրույթները պետք է համապատասխանեն լյուստրացիայի գործընթացին:<sup>79</sup>

## 5. Քենիա

### (a) Նախապատմություն

Քենիայի 2010 թվականի **Սահմանադրությամբ սահմանվեց պահանջ**, ըստ որի բոլոր դատավորներն և մագիստրները պետք է անցնեն անհատական ստուգում՝ վերինգ:<sup>80</sup> Հիշյալի պատճառն այն էր, որ դատական համակարգը վտանգվել էր համակարգային կոռուպցիայից: Նույնիսկ ավելի վատ՝ ընկալումները, որ ավագ դատավորները չափազանց մոտ էին կառավարությանը, թվում էր, թե դեր են ունեցել 2007-2008 թվականների հետընտրական բախման սրման մեջ:<sup>81</sup>

Ստեղծվել էր Դատավորների և մագիստրների վերինգի խորհուրդ, որը 2012թ.-ին հրապարակեց իր վերջնական զեկույցը: Ըստ զեկույցի՝ Խորհուրդը վերինգի է ենթարկել **53 դատավորի և 298 մագիստրի**: Դրա արդյունքներով **11 դատավոր և 14 մագիստր համարվեցին դատավորի պաշտոնին ոչ համապատասխան**, ինչը հանգեցրեց նրանց հեռացմանը դատական համակարգից:<sup>82</sup>

Բացի վերը նշված արդյունքներից, Քենիայում վերինգի գործընթացը տպավորիչ համարելու պատճառներից մեկը՝ **վերինգի գործընթացի մշակումն է**: Ե՛վ իրավական շրջանակների, և դրա

<sup>79</sup> «Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի մասին» օրենքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի ամբողջական կարծիքը, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2015\)007-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2015)007-e)

<sup>80</sup> <<http://erepository.uonbi.ac.ke/handle/11295/9400>>

<sup>81</sup> <<https://theconversation.com/kenyas-new-chief-justice-must-press-on-with-cleaning-up-the-judiciary-66372>>

<sup>82</sup> <<https://theconversation.com/kenyas-new-chief-justice-must-press-on-with-cleaning-up-the-judiciary-66372>>



իրականացման վերաբերյալ երկար ժամանակ տարվել են բանակցություններ՝ համագործակցության ձևաչափով: Այս բանակցություններն ու համագործակցության կողմերն են՝ քաղաքական գործիչները, դատավորները, իրավաբանները, քաղաքացիական հասարակությունը: Ըստ էության, համագործակցում էր մի խումբ, որ նախկինում չէր ունեցել համագործակցության որևէ փորձ:

#### **(b) Դատական բարեփոխումների իրականացման ընթացքը**

Քենիայում դատավորների վեթինգը իրականացվել է 2010 թվականին ընդունված «Դատավորների և մագիստրների վեթինգի մասին» օրենքով, հայտնի է նաև որպես՝ **Դատավորների և մագիստրների վեթինգի մասին ակտ**:<sup>83</sup>

Օրենքի հիմնական նպատակն էր՝ ապահովել համապարփակ կարգավորում այն դատավորների և մագիստրների վեթինգի իրականացման համար, ովքեր օրենքի ընդունման դրությամբ աշխատել են որպես դատավոր կամ մագիստր, և առաջացել էր անհրաժեշտություն ստուգել նրանց համապատասխանությունը սահմանադրական նոր պահանջներով դատական համակարգում ծառայությունը շարունակելու համար:

Օրենքի ուժով ստեղծվել էր Դատավորների և մագիստրների վեթինգի **անկախ խորհուրդ**, որը բաղկացած էր **9 անդամից**՝ նախագահ, փոխնախագահ և յոթ անդամներ: **Նախագահի և փոխնախագահի պաշտոնում կարող էր նշանակվել** այն անձը, ով ուներ առնվազն 20 տարվա փորձ՝ որպես.

- Քենիայի Գերագույն դատարանի դատավոր, կամ
- վաստակավոր գիտական, կամ
- դատական ծառայող, կամ
- Քենիայի պետական կամ մասնավոր սեկտորի իրավաբան:

**Խորհրդի անդամ կարող էր նշանակվել** այն անձը, ով

- ուներ ճանաչված մասնագիտական կոչում.
- ուներ առնվազն տասնհինգ 15 տարի փորձ իր ուսումնառության ոլորտում.
- բավարարում է Սահմանադրության վեցերորդ գլխի պահանջները:

**Խորհրդի անդամ չէր կարող նշանակվել** այն անձը, ով.

- խորհրդարանի անդամ էր.
- տեղական իշխանությունների անդամ էր.
- քաղաքական կուսակցության գործադիր մարմնի անդամ էր.

<sup>83</sup> «Դատավորների և մագիստրների վեթինգի մասին» 2010 թվականի Քենիայի օրենք, <[http://kenyalaw.org/kl/fileadmin/pdfdownloads/Vetting\\_of\\_Judges\\_and\\_Magistrates\\_Bill\\_2010.pdf](http://kenyalaw.org/kl/fileadmin/pdfdownloads/Vetting_of_Judges_and_Magistrates_Bill_2010.pdf)>

- Քենիայում դատավոր կամ մագիստրոս էր ծառայում՝ ձևավորման օրվա դրությամբ:

Նախագահը Վարչապետի հետ խորհրդակցությամբ Խորհրդարանի հաստատմանն էր ներկայացնում Խորհրդի 9 անդամների թեկնածությունը: Խորհրդի ձևավորման մանրամասները կարգավորված են «Դատավորների և մագիստրների վեթինգի մասին» օրենքի 2-րդ մասով:

**Վեթինգի գործընթացը** իրականացվել է հետևյալ կարգով: Խորհուրդը, քննելով դատավորի կամ մագիստրի պաշտոնին համապատասխանության հարցը, դիտարկում էր՝

- արդյո՞ք դատավորը կամ մագիստրը **բավարարել են** Գերագույն դատարանի դատավոր կամ մագիստր նշանակվելու **սահմանադրական պահանջները**.
- շահագրգիռ դատավորի կամ մագիստրի **կարողությունները**, ներառյալ՝ **մինչ դատավոր նշանակվելը կատարած հայտարարությունները, արհեստավարժությունը և աշխատասիրությունը (ջանասիրությունը)**.
- արդյո՞ք դատավորի նկատմամբ իրականացվում էր **քրեական հետապնդում**
- արդյո՞ք առկա էր դատավորի կամ մագիստրի նկատմամբ որևէ **առաջարկություն**՝ Գլխավոր դատախազի կամ Էթիկայի և հակակոռուպցիոն հանձնաժողովի կողմից.
- արդյո՞ք առկա էր դատավորի կամ մագիստրի նկատմամբ **բողոք**, ներառյալ, բայց չսահմանափակված՝ որևէ անձի, կամ Քենիայի իրավաբանական հանրության, Էթիկայի և հակակոռուպցիոն հանձնաժողովի, Կարգապահական հանձնաժողովի, Փաստաբանների բողոքարկման հանձնաժողովի, Գլխավոր դատախազի, Հանրային բողոքարկման մշտական հանձնաժողովի, Քենիայի մարդու իրավունքների ազգային հանձնաժողովի, Ազգային անվտանգության ծառայության, Ոստիկանության և Դատական ծառայության հանձնաժողովի կողմից:

**Դատավորի կամ մագիստրի պաշտոնին համապատասխանության թեստի շրջանակներում, ստուգվում էին հետևյալ հասկանիշները.** մասնագիտական արհեստավարժությունը; գրավոր և բանավոր հաղորդակցման հմտությունները; բարեվարքությունը; արդարությունը; բնավորությունը/խառնվածքը; կայացրած դատականը ակտերը; իրավական փորձառությունն ու կենսափորձը; հանրությանը և համայնքային ծառայությանը նվիրվելու հանձնառությունը: Ստուգման ընթացքում դիտարկվում էր նաև դատավորների և մագիստրների հետ անցկացրած **անհատական հարցազրույցների արդյունքները և արձանագրությունները**, որոնց գաղտնիությունն ապահովվել էր: Խորհուրդը դատավորի կամ մագիստրի հետ կապված լսումները անցկացնում էր **փակ ընթացակարգով**, եթե բաց լսում անցկացնելու մասին թեկնածուն Խորհրդին չէր ներկայացրել համապատասխան խնդրագիր:

**Առաջինը վեթինգի են ենթարկվել** Վերաքննիչ դատարանի դատավորներն ու մագիստրները, **նրանց հաջորդել են** Բարձրագույն դատարանի և Բարձրագույն դատարանի ռեզիստրի

դատավորները, Դատարանի գլխավոր ադմինիստրատորը, Գլխավոր Մագիստրը և **մնացածը՝ ըստ հերթականության**: Վեթինգի արդյունքների մասին Խորհուրդը պատճառաբանված գրավոր որոշմամբ տեղեկացրել է թեկնածուներին: Ծանուցումը ստանալու պահից, դատավորը կամ մագիստրը համարվել է հեռացված, որի մասին տեղեկացվել է հանրությունը: Այն դեպքում, երբ դատավորը կամ մագիստրը համաձայն չեն եղել վեթինգի արդյունքների հետ, կարող էին դիմել վերագնահատում անցնելու համար, ինչը իրականացվում էր նույն կազմի կողմից, որը անցկացրել էր սկզբնական ստուգումը՝ վեթինգը:

Այդուհանդերձ, **խորհուրդը վերագնահատում իրականացնում էր**, եթե բողոքը հիմնված էր՝

- այնպիսի նոր և կարևոր պատճառի բացահայտման վրա, որի վերաբերյալ Խորհուրդը տեղեկացված չէր, իսկ դատավորը կամ մագիստրը չէր կարող այդ մասին հայտնել.
- որոշ սխալների վրա, կամ այնպիսի սխալի վրա, որն առերևույթ ակնհայտ էր՝

Սույն հարցով Խորհրդի կողմից կայացված որոշումը **ենթակա չէր վերանայման կամ դատական կարգով բողոքարկման**:

Վեթինգի իրականացման ժամկետը մեկ տարի էր, որը հաշվարկվում էր դրա մեկնարկի պահից: Խորհրդի կողմից վեթինգի արդյունքում կայացրած համապատասխանության կամ չհամապատասխանության որոշումները բավականին ընդգրկուն էին և պատճառաբանված, և ներառում էին գործի քննության մի շարք ասպեկտները:<sup>84</sup>

#### **4. Դատավորի բարեվարքության ստուգումն ու պատասխանատվությունը՝ արտակարգ (անցումային արդարադատության) պայմաններում. ՀՀ-ում իրականացման մեխանիզմները**

2019 թվականի հոկտեմբերի 10-ին թիվ 1441-Լ որոշմամբ ՀՀ կառավարությունը ընդունեց Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին որոշումը (այսուհետ՝ դատաիրավական ռազմավարություն):<sup>85</sup> Համաձայն ռազմավարության՝ ՀՀ-ում անցումային արդարադատության գործիքակազմը իրագործվելու էր հետևյալ շրջանակներում՝

1. հավաքել մարդու իրավունքների զանգվածային, պարբերական խախտումների (այսուհետ նաև՝ Խախտումներ) վերաբերյալ փաստեր առնվազն հետևյալ ոլորտներում՝

<sup>84</sup> Խորհրդի համապատասխանության հարցերից մեկով կայացրած որոշումը՝ 9-րդ հայտարարությունը համապատասխանության որոշման վերաբերյալ, 20.12.2013թ., <<http://kenyalaw.org/caselaw/cases/view/72034>>

<sup>85</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487>

- ա) 1991 թվականի սեպտեմբերից ի վեր տեղի ունեցած բոլոր ընտրական գործընթացներ,
  - բ) 1991 թվականի սեպտեմբերից ի վեր հետընտրական գործընթացում տեղի ունեցած քաղաքական հետապնդումներ,
  - գ) Հայաստանում պետության կամ հասարակության կարիքների համար գույքի հարկադիր օտարումներ,
  - դ) սեփականազրկումների այլ դրսևորումներ,
  - ե) ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողներ,
2. դիտարկել խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունը,
  3. հանցագործությունների վերաբերյալ նոր տեղեկությունների ի հայտ գալու դեպքում այդ տեղեկությունների տրամադրում իրավապահ մարմիններին,
  4. ինստիտուցիոնալ բարեփոխումների, այդ թվում՝ մշտադիտարկման այնպիսի համակարգերի ներդրում, որոնց կիրառումը թույլ կտա վեր հանել հնարավոր խախտումները և կբացառի անցյալի սխալների կրկնությունը, ստացված տեղեկությունների ամփոփում զեկույցի մեջ, դրա հրապարակում և գնահատական անցյալին:<sup>86</sup>

Ընդ որում, խախտումներին անդրադարձ կատարելու համար դրանց վերաբերյալ դատական ակտի առկայությունը չպետք է լինի պարտադիր:

Ի թիվս այլ ռազմավարական ուղղությունների, նախատեսվում էր 1991-2018 թվականների ընթացքում Հայաստանում տեղի ունեցած խախտումների դեպքերի ուսումնասիրության և դրանց վերաբերյալ տեղեկությունների հավաքման համար ձևավորել Փաստահավաք հանձնաժողով, որը հանդես էր գալու որպես անկախ, ինքնավար մարմին: Փաստահավաք հանձնաժողովի գործառնությունները, ի թիվս այլնի, ներառելու էր խախտումներից տուժած անձանց կողմից ներկայացված տեղեկությունների փաստաթղթավորումը, խախտումներից տուժած անձանց համաձայնությամբ նրանց պատմությունները հանրայնացնելը, պետական մարմիններից տեղեկություններ պահանջելը, բացատրություններ տալու նպատակով անձանց հրավիրելը, ինչպես նաև դատական և իրավապահ մարմինների գործունեության ուսումնասիրության մեթոդաբանության մշակումը և այդ գործունեությանը գնահատական տալը՝ անդրադառնալով նաև դրանց հիման վրա կոռուպցիոն սխեմաների բացահայտմանը (օրինակ՝ վճռաբեկ բողոքների վարույթ ընդունման չափանիշների իրավաչափ կիրառությանը,

<sup>86</sup> Տե՛ս ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության «Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի զերակայության ամրապնդում» ռազմավարական նպատակը:

կոնկրետ փաստաբանների անբացատրելի հաջողություններին, դատավոր-դատախազ-փաստաբան անձնական կապերի ազդեցությանը գործերի վրա և այլն):

Նախատեսվում էր, որ Հանձնաժողովը ձևավորվելու է 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում և կազմված է լինելու առավելագույնը 20 անդամից, երկու տարի գործողության ժամկետով, հնարավորություն նախատեսելով անհրաժեշտության դեպքում ժամկետը երկարաձգել ևս մեկ տարով: Հանձնաժողովը ստեղծվելու էր Փաստահավաք հանձնաժողովի մասին օրենքով: Հանձնաժողովի գործունեության վերջնարդյունքը զեկույցի հրապարակումն էր, որտեղ արտացոլված պետք է լիներ փաստահավաք գործունեության ընթացքում հավաքված տեղեկությունները: Հավաքված տեղեկությունների հիման վրա հանձնաժողովը զեկույցում Ազգային ժողովին և Կառավարությանը ներկայացնելու էր խորհրդատվական եզրակացություն՝ այդ իրավախախտումներից տուժած անձանց իրավունքների վերականգնման հնարավորության, ձևերի, չափերի և դրա անհրաժեշտության, ինչպես նաև ինստիտուցիոնալ բարեփոխումների անհրաժեշտության և ուղղությունների վերաբերյալ:

Երբ ուսումնասիրում ենք դատաիրավական ռազմավարության 2020 թվականի երկրորդ կիսամյակի կատարողականի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության զեկույցը,<sup>87</sup> ակնհայտ է, որ անցումային արդարադատության այս կարևորագույն գործիքակազմը՝ «Փաստահավաք հանձնաժողովի մասին» օրենքը, չի ընդունվել, հետևապես այս միջոցառումը չի կատարվել:

Որպես անցումային արդարադատության իրականացման մեխանիզմներ, կատարվել են որոշակի օրենսդրական փոփոխություններ, որոնք ՀՀ կառավարության գնահատմամբ ուղղված են դատավորի բարեվարքության ստուգմանն ու պատասխանատվությանը՝ արտակարգ (անցումային արդարադատության) պայմաններում, սակայն դրանք ևս ամբողջական չեն և առկա են որոշակի մարտահրավերներ, որոնք ներկայացված են ստորև:

### **Առկա օրենսդրական մարտահրավերները և առաջարկություններ դրանց վերաբերյալ**

**Ա) ԴԱՏԱԿԱՆ ԸՆԹԱՑԻՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ.**

<sup>87</sup> 2020 թվականի հոկտեմբերի 28-ի դրությամբ ՀՀ արդարադատության նախարարության կայքէջում հրապարակված է դատաիրավական ռազմավարության 2020 թվականի երկրորդ կիսամյակի կատարողականի վերաբերյալ զեկույցը, որը հասանելի է հետևյալ հղմամբ. <<https://moj.am/legal/view/article/1376/>> 2021 թվականի առաջին կիսամյակի կատարողականի վերաբերյալ զեկույցը ենթադրաբար կատարված չէ:

1. ՀՀ արդարադատության նախարարության կողմից դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների հարուցման վերացում.

Հարկ է նշել, որ գործադիր իշխանության՝ ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության կողմից դատական իշխանության՝ ի դեմս դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հայաստանյան պրակտիկային կոշտ գնահատական է տվել ԳՐԵԿՈ-ն՝ իր 2021 թվականի սեպտեմբերի 22-ին հրապարակած Գնահատման չորրորդ փուլի համապատասխանության վերաբերյալ միջանկյալ զեկույցում, որը վերաբերում է Կոռուպցիայի կանխարգելմանը պառլամենտի անդամների, դատավորների և դատախազների շրջանում:<sup>88</sup>

Մասնավորապես, Ջեկույցի եզրակացությունների բաժնում, 78-րդ կետում նշված է. «*Բնչ վերաբերում է դատական համակարգին, սպա արդարադատության նախարարի դերը դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներում չի դադարեցվել, և ներկայիս իրավիճակը անհամատեղելի է դատական համակարգի անկախության հետ:*

*Դատավորների աշխատանքի ընդունման և առաջխաղացման վերաբերյալ որոշումների համար առկա են բողոքարկման ճիշտ մեխանիզմներ, սակայն այդպիսիք առկա չեն լիազորությունների դադարեցման որոշումների կայացման համար...»:*

Ստացվում է, որ ըստ ԳՐԵԿՈ-ի վերջին զեկույցում արված եզրակացության, արդարադատության նախարարի կողմից կարգապահական վարույթների հարցումը անհամատեղելի է դատական համակարգի անկախության հետ:

Վերոգրյալի լույսի ներքո առաջարկվում է փոփոխություն կատարել Դատական օրենսգրքում և վերացնել գործադիր իշխանության կողմից՝ ի դեմս արդարադատության նախարարի, դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը, զուգահեռ՝ վերանայելով Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի ձևավորման կարգն ու կազմը: Վերջինիս վերաբերյալ փոփոխության առաջարկը ներկայացված է ստորև:

2. ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական, գնահատման և ուսումնական հարցերով հանձնաժողովների կազմերի վերանայում.

<sup>88</sup> Ջեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ. <<https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680a3fcad>>: Նրանում քննարկվում է գնահատման չորրորդ փուլի շրջանակներում Հայաստանի արված առաջարկությունների կատարողականը: Ընդհանուր առմամբ, կատարողականը գնահատվել է գլոբալ առումով ոչ բավարար (կետ 80):

2020 թ.-ի մարտի 25-ին Ազգային ժողովն ընդունեց «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք»<sup>89</sup> սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և հարակից այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծերը:

Այս օրենքներն ուղղված են դատավորների բարեվարքության գնահատման իրավական հիմքի ապահովմանը հետևյալ ուղղություններով. գույքի ստուգում (գույքի ձեռքբերման օրինականության ստուգում և գնահատում), արհեստավարժություն և հարգանք մարդու իրավունքների նկատմամբ, անկողմնակալություն (որոշումների կայացում առանց փոխկապակցված սուբյեկտների կամ այլ ազդեցության), Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի և մյուս հանձնաժողովների ձևավորման կարգ, ԲԴԽ անդամի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցում: Ըստ այդմ, Դատավորների ընդհանուր ժողովը ձևավորում է դատավորների Էթիկայի և կարգապահական հարցերի, Գնահատման և Ուսումնական հարցերի հանձնաժողովները: Այս բարեփոխման կարևոր նորարարությունը հանձնաժողովների կազմն է, որը նախատեսում է ՔՀԿ ոլորտի երկու ոչ դատավոր անդամների ներգրավում հանձնաժողովներից յուրաքանչյուրում:

Հանձնաժողովների կազմը հետևյալն է.

1. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը բաղկացած է 8 անդամից, որոնցից 6-ը դատավորներ են, իսկ 2-ը՝ ՔՀԿ ոլորտի ոչ դատավոր անդամներ:
2. Դատավորների գործունեության գնահատման հարցերի հանձնաժողովը բաղկացած է 5 անդամից, որոնցից 3-ը դատավորներ են, իսկ 2-ը՝ ՔՀԿ ոլորտի ոչ դատավոր անդամներ:
3. Ուսումնական հարցերի հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից, որոնցից 5-ը դատավորներ են, իսկ 2-ը՝ ՔՀԿ ոլորտի ոչ դատավոր անդամներ:

Չնայած այս բարեփոխմանը, որն առերևույթ դիտարկվում է ֆունկցիոնալ, այդուհանդերձ գործնականում դրա իրականացման հետ կապված **առկա են որոշ մտահոգություններ:**

Մասնավորապես, Էթիկայի և կարգապահական, ինչպես նաև Գնահատման հանձնաժողովներում ոչ դատավոր անդամների ներգրավվածությունը ցածր է, և դատավոր և ոչ դատավոր անդամների միջև հավասարակշռությունը չի ապահովվում: Այս անհամաչափ

մոտեցումը և դատավոր անդամների բացարձակ մեծամասնության գործոնը կարող են նպաստել հանձնաժողովներում ոչ դատավոր անդամների անարդյունավետ աշխատանքին և նրանց մասնակցությունը դարձնել ձևական:

<sup>89</sup> «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը ընդունվել է 25.03.2020թ.-ին և ուժի մեջ է մտել 02.05.2020թ.-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141490>:

2020 թվականի հունիսի 31-ին Դատավորների ընդհանուր ժողովը ընտրեց նշված երեք հանձնաժողովների անդամներին: Ցավոք, պետք է նշել, որ Ուսումնական և Գնահատման հանձնաժողովներում ընտրված «ՔՀԿ ոլորտի» երեք ներկայացուցիչներն իրականում ուղղակիորեն կապված են դատական համակարգի հետ, և ոչ թե ՔՀԿ սեկտորի:<sup>90</sup> Սա բխում է նրանից, որ ոչ դատավոր անդամների չափանիշներն ընդհանրական են, և դատական իշխանության հետ փոխկապակցված անձինք կարող են ընտրվել որպես Հանձնաժողովների ոչ դատավոր անդամ:

Վերոգրյալի լույսի ներքո առաջարկվում է փոփոխություն կատարել Դատական օրենսգրքում և վերանայել Դատավորների ընդհանուր ժողովի երեք հանձնաժողովի անդամների ներկայացվածության համաչափությունը: Մասնավորապես, Գնահատման և Ուսումնական հանձնաժողովների անդամների թիվը դարձնել գույզ և ապահովել երեք հանձնաժողովներում դատավոր և ոչ դատավոր անդամների թվի հավասարակշռում՝ բաշխելով հավասար քվտաներ դատական իշխանության և հանրային սեկտորի ներկայացուցիչների միջև, ինչպես օրինակ արվել է ԲԴԽ տաս անդամների դեպքում (ընդհանուր տաս անդամներից հինգը դատավոր են, մյուս հինգը՝ իրավաբան գիտնական):

Բացի այդ, անհրաժեշտ է նաև փոփոխություն կատարել Դատական օրենսգրքում և սահմանել ոչ դատավոր անդամների ներկայացվածության նոր պահանջներ՝ սահմանափակելով նրանց փոխկապակցվածությունը դատական համակարգի հետ:

### **3. Դատավորների բարեվարքության ստուգման մասին խորհրդատվական եզրակացությունների հասանելիության ապահովում.**

Դատավորների բարեվարքության ստուգումներ անցկացնելու համար առանձին ընթացակարգ է սահմանվել ԿԿՀ մասին օրենքի 26.1 հոդվածով:<sup>91</sup> ԿԿՀ-ն պաշտոնատար անձանց բարեվարքության ուսումնասիրություն իրականացնելու օրենքով սահմանված իրավասություն ունի: Այդ ուսումնասիրությունը ենթադրում է բարեվարքության վերաբերյալ հատուկ մշակված հարցաթերթում<sup>92</sup> ներկայացված տվյալների ստուգում, անձի վերաբերյալ ՋԼՄ-ներում տեղ գտած նյութերի, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկատվության վերլուծություն, անձի՝ քրեական ենթամշակույթին պատկանելու հիմքերի ստուգում, գույքի գնահատում և այլն:

<sup>90</sup> Լրագրողական հետաքննության հոդվածները հասանելի են՝ <<https://iravaban.net/284355.html>>, <<https://iravaban.net/284048.html>>, <<https://iravaban.net/284317.html>>:

<sup>91</sup> «ԿԿՀ-ի մասին» ՀՀ օրենքի 26.1 հոդվածի համապատասխան փոփոխությունները ընդունվել են 25.03.2020-ին և ուժի մեջ են մտել 02.05.2020-ին:

<sup>92</sup> ԿԿՀ-ն բարեվարքության վերաբերյալ մշակել է հարցաթերթիկ, հասանելի է՝ <<http://cpcarmenia.am/hy/news/item/2020/05/26/154789/>>:



Այս փոփոխություններից հետո, ԿԿՀ-ն արդեն իրականացրել է ԲԴԽ-ի և ՀՀ Սահմանադրական դատարանի անդամների թեկնածուների բարեվարքության ստուգում: Լրատվամիջոցների հրապարակումների համաձայն,<sup>93</sup> ԿԿՀ-ն բացասական խորհրդատվական կարծիք էր ներկայացրել թեկնածուներից մեկի վերաբերյալ (թեկնածուն այն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահն էր): Բացասական կարծիքը ներկայացվեց Ազգային ժողովի պատգամավորներին, ովքեր պետք է ընտրեին թեկնածուին որպես Սահմանադրական դատարանի անդամ: Չնայած սրան, Ազգային ժողովը հաշվի չառավ ԿԿՀ-ի բարեվարքության ստուգման արդյունքները և պաշտոնատար անձին ընտրեց որպես Սահմանադրական դատարանի անդամ (դատավոր): Բարեվարքության ստուգման վերաբերյալ ԿԿՀ-ի խորհրդատվական եզրակացությունները հրապարակման ենթակա չեն, այդ եզրակացության մշակման գործընթացը հանրային չէ: Ընդ որում, ի թիվս այլնի, այդ եզրակացությունը ևս նպաստում է ԲԴԽ-ի կողմից դատավորների թեկնածուների վերաբերյալ որոշում կայացնելուն, երբ ընթանում են նշանակումները: Այսպիսով, այս խիստ գաղտնիության ռեժիմի դեպքում անհնար է գնահատել այս գործառույթի արդյունավետությունը, իրականացնել արդյունավետ հանրային վերահսկողություն և վերլուծել, թե տրամադրված եզրակացություններից (լինի այն դրական, թե՝ բացասական) քանիսն են հաշվի առնվել որոշումների կայացման ժամանակ և ինչքանով են դրանք ամբողջական տեղեկություններ պարունակում թեկնածուի բարեվարքության վերաբերյալ:

Վերոգրյալի լույսի ներքո առաջարկվում է բարեվարքության ստուգման վերաբերյալ ԿԿՀ-ի խորհրդատվական եզրակացությունները դարձնել բաց և հասանելի հանրության համար, անշուշտ ապահովելով օրենքով նախատեսված անձնական տվյալների գաղտնիությունը՝ հանրամատչելի անձնական տվյալների հաշվառմամբ:

#### **4. Նոր դատավորների նշանակման միջոցով գործող դատավորների կազմի նորացում**

Տարիներ շարունակ դատական համակարգում դատավորների համալրումները իրականացվել են դատական համակարգում աշխատած անձանց միջոցով (օրինակ՝ դատավորի օգնական, դատական նիստերի քարտուղար, փորձագետ): Այս պրակտիկան սահմանափակել է դատական համակարգի հետ առնչություն չունեցող պրոֆեսիոնալ իրավաբանների դատավոր դառնալու հնարավորությունները, նպաստել է դատավորների թեկնածուների միջև մրցակցության նվազեցմանը և ազդել է նոր որակի դատավորներ ունենալու գործընթացի վրա:

Բացի վերը նշվածից, վերջին տարիներին դատարանների ծանրաբեռնվածությունը կտրուկ աճել է: Կան դատավորներ, ովքեր իրենց վարույթում ունեն հազարից ավել գործեր: Այս

<sup>93</sup> Որոշ լրատվամիջոցների հրապարակումները տե՛ս <<https://bit.ly/32TJF7r>>, <<https://bit.ly/2IMpp0q>>:

ծանրաբեռնվածությունը չի կարող բացասական չափով նաև արդար դատաքննության, այդ թվում ողջամիտ ժամկետների և դատական ակտերի որակի վրա:

Վերոգրյալի լույսի ներքո առաջարկում ենք համալրել դատական համակարգը նոր դատավորներով՝ ապահովելով հավասարակշռություն դատական համակարգում աշխատող/աշխատած և դրանից դուրս մասնագիտական փորձառություն իրավաբանների միջև:

Ավելացնել դատավորների թիվը, և թվի որոշման համար որպես ելակետային ցուցիչ ընտրել՝

ա/ դատարաններում և դատական ատյաններում առկա թափուր հաստիքների թիվը,

բ/ դատավորների բարեվարքության ստուգման արդյունքներում անբավարար գնահատականներ ստացած դատավորների թիվը (որոնք պետք է լքեն դատական համակարգը): Ընդ որում, «անբավարար գնահատական» ասածը վերաբերում է այն դատավորներին՝

- որոնց մասնագիտական պատրաստվածությունը չի համապատասխանում դատավորի պաշտոնին,
- որոնք դրսևորել են կոռուպցիոն վարքագիծ,
- որոնք հարում են քրեական ենթամշակույթին կամ դրա մաս են կազմում,
- որոնք կայացրել են մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ դատական ակտեր և դրանց հաստատված են միջազգային դատարանների և միջազգային այլ ատյանների համապատասխան որոշումներով,

գ/ յուրաքանչյուր դատարանում գործերի ծավալային և բովանդակային թիվը,

դ/ կենսաթոշակային տարիքի հասած և ավելի վաղ կենսաթոշակի անցնելու դատավորների թիվը:

##### **5. Ավելի վաղ կենսաթոշակի անցնելու հնարավորության սահմանում (early retirement)**

Դատական համակարգում նոր դատավորների մուտք ապահովելու նպատակով հարկավոր է նաև ավելացնել դատավորների թափուր հաստիքների թիվը դատական տարբեր ատյաններում: Այս առումով, որպես թափուր հաստիքների թվի ավելացման ցուցիչ պետք է դիտարկել ավելի վաղ կենսաթոշակի անցնելու դատավորների թիվը, որոնց պաշտոնավարմանը մնացել է օրինակ հինգ տարի կամ դրանից պակաս ժամանակ:

Վերոգրյալի լույսի ներքո, առաջարկում ենք օրենսդրորեն սահմանել ավելի վաղ տարիքից կենսաթոշակի անցնելու հնարավորությունը՝ ապահովելով անհրաժեշտը իրավական և սոցիալական երաշխիքներով:

##### **6. Դատավորի անհամատեղելիության լրացուցիչ պահանջների սահմանում.**

Նկատի ունենալով ՀՀ սահմանադրության 164-րդ հոդվածի 6-րդ մասը, համաձայն որի Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով կարող են սահմանվել դատավորի անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ, առաջարկում ենք օրենսդրական բարեփոխումների շրջանակներում փոփոխություններ և լրացումներ կատարել «ՀՀ դատական օրենսգիրք» և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքներում և նախատեսել դատավորի կարգավիճակի հետ անհամատեղելիության նոր պահանջեր, որոնք կարող են վերաբերվել և գույքային և անձնական կապերին կամ ի հայտ գան այդ կապերի ստուգման արդյունքում:

**Բ) ԴՏԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ.**

**1. Դատավորների և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների բարեվարքության ստուգում.**

1. Դատավորի գործունեության դադարեցման սահմանադրական հիմքերի վերանայում՝ բարեվարքության ստուգման արդյունքների վրա հետևյալ ուղղություններով.
  - Ակտիվների ստուգում (asset assessment).
  - Կասկածելի կապերի ստուգում (background assessment).
  - Գիտելիքների/հմտությունների ստուգում (proficiency assessment):
2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների վերինգի իրականացում՝ բարեվարքության ստուգման արդյունքների վրա հետևյալ ուղղություններով.
  - Ակտիվների ստուգում (asset assessment).
  - Կասկածելի կապերի ստուգում (background assessment).
  - Գիտելիքների/հմտությունների ստուգում (proficiency assessment):
3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Դատավորի բարեվարքության ստուգման (վերինգի) սահմանադրական մարմինների ստեղծում, այս մարմինների որոշումների բողոքարկման մեխանիզմների նախատեսում: Սահմանադրական փոփոխությունների անցումային դրույթներով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների, ԲԴԽ-ի, Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների դատավորների բարեվարքության ստուգման իրականացման համար ստեղծել հետևյալ ժամանակավոր մարմինները.

- Որակավորման հանձնաժողով,
- Բողոքարկման խորհուրդ,
- Հանրային հանձնակատար:

Վերոհիշյալ մարմիններից առաջին երկուսը պետք է ձևավորվեն Ազգային Ժողովի կողմից իշխող և ընդդիմադիր քաղաքական ուժերի կողմից հավասար (50/50 տոկոս) հարաբերությամբ ձևավորված թեկնածուների ընտրության երկու ժամանակավոր հանձնաժողովների կողմից: Մարմինների անդամները պետք է ընտրվեն հատուկ մշակված օբյեկտիվ չափանիշների վրա:

Հանրային հանձնակատարը պետք է ընտրվի ԱԺ-ի կողմից՝ նախապես հայտարարված բաց մրցույթի միջոցով: Նախքան ԱԺ-ին թեկնածուներին ներկայացնելը, իրականացվում է մրցույթին մասնակցած բոլոր թեկնածուների համապատասխանության փուլ՝ ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի կողմից, որը պետք է կազմված լինի Ազգային Ժողովի կողմից իշխող և ընդդիմադիր քաղաքական ուժերի կողմից հավասար (50/50 տոկոս) հարաբերությամբ ձևավորված թեկնածուներից:

4. ԲԴԽ-ի լիազորությունների ցանկում ավելացնել դատավորների բարեվարքության ստուգման իրականացման լիազորություն, որը հնարավորություն կտա ԲԴԽ-ին, բարեվարքության ստուգման իրականացման համար ստեղծված սահմանադրական ժամանակավոր մարմինների կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների, ԲԴԽ-ի, Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների դատավորների բարեվարքություն ստուգման իրականացումից անմիջապես հետո, իրականացնել դատական համակարգի մյուս ատյաններում պաշտոնավարող դատավորների մեկանգամյա բարեվարքության ստուգում:
5. Դատավոր նշանակվելու սահմանափակումների վերանայումը, ներառելով սահմանափակում դատավորի կողմից կայացրած դատական ակտի վերաբերյալ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում դատավորի գործողությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտի առկայությունը:

## **2. Դատավորների նոր թեկնածուների վերապատրաստում և ցուցակի կազմում.**

Վերլուծության սույն բաժնի դատական ընթացիկ բարեփոխումների իրականացման շրջանակներում կատարված գործողությունների արդյունքում դատավորների թափուր մնացած հաստիքները անհրաժեշտ է համալրել նոր կադրերով, որոնք պետք է լինեն որակապես

տարբերվող: Այս նպատակով վերինգի գործընթացին զուգահեռ անհրաժեշտ է մշակել դատավորների նոր թեկնածուների վերապատրաստման նոր մոդել, և վերապատրաստման արդյունքների հիման վրա կազմել դատավորների նոր թեկնածուների ցուցակը: Այս գործընթացում իր ուրույն դերն ունի Արդարադատության ակադեմիան: Մակայն, փոփոխությունների լուրջ արդյունքներ ունենալու համար, անհրաժեշտ է նախնաջ փոփոխել այն ուսումնական պլանը, դրա մշակման մեթոդիկան և վերապատրաստողների ընտրության կարգը, որով տարիներ շարունակում առաջնորդվում է ակադեմիան: Ուսումնական պլանը նախ՝ պետք է լինի կարիքահեն, ներառի այնպիսի կարևոր թեմաներ, ինչպիսիք են՝ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությունը և դրա մեթոդիկան (հատկապես՝ շեշտադրվելով ապօրինի հարստացումը), ակտիվների և ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձը, ՄԻԵԴ-ի կողմից մարդու իրավունքների խախտումները հաստատող որոշումները, հատկապես Հայաստանի դեմ կայացվածները և այլն: Այնուհետև վերապատրաստումների վերաբերյալ պետք է ապահովվի ունկնդիրների pre և post թեստերի հանձնումը, վերապատրաստումների և վերապատրաստողների վերաբերյալ անանուն հետադարձ կապը, որի արդյունքներով մշտական հիմունքներով պետք փոփոխվեն և թարմացվեն պլանները և վերապատրաստողները: Ակադեմիան պետք է կրթությունը կազմակերպի երկու ուղղություններով՝ առաջինով վերապատրաստվեն դատավորների թեկնածուները, իսկ երկրորդով՝ դատավորների պահուստային թեկնածուները: Սա հնարավորություն կտա, պարբերաբար իրականացվող վերինգի ընթացքում ապահովել կադրերի թվի կառավարելիությունը: Այս երկու ուղղությունները պետք է իրականացվեն միաժամանակ:

### **3. Դատավորի գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերի վերլուծության հետադարձ ուժի արգելքի սկզբունքի ընդհանուր կարգավորման դիտարկում.**

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 4.1-րդ կետի համաձայն՝ հայտարարագրերի վերլուծության վերաբերյալ սույն օրենքով սահմանված դրույթները կիրառելի են նաև 2017 թվականի հուլիսի 1-ից ներկայացված կամ ներկայացման ենթակա հայտարարագրերի նկատմամբ: Այս ժամկետի սահմանումը պայմանավորված է ՀՀ-ում ապօրինի հարստացման հանցակազմը քրեականացնելու հետ, և այս պարագայում հետադարձ ուժի կիրառումը արգելվում է: Այսինքն ստացվում է, որ ԿԿՀ-ն իրավասու վերլուծելու դատավորների 2017 թվականից հետո ներկայացրած հայտարարագրերը:<sup>94</sup>

<sup>94</sup> Տե՛ս ԲԴԽ-38-Ո-Կ-16 որոշումը Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ռուբեն Վարդազարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ հետևյալ հղմամբ.

<https://court.am/storage/uploads/files/bdx-disciplinary-proceedings/4nrSkd5mlfYwoXpoj72BaIKGIvVe7eu5bPCTCIgL.pdf>

Այս իրավահարաբերությունների նկատմամբ հետադարձ ուժի կիրառման մասին 2019թ.-ին իր դիրքորոշումն է հայտնել նաև Վենետիկի հանձնաժողովը՝ 2020 թվականին ընդունված Դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ համատեղ կարծիքի շրջանակներում: Մասնավորապես, հանձնաժողովը անդրադառնալով դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ նոր կանոններին, ընդգծել է, որ այս գործընթացում կարևոր է, որ այդ նոր՝ փոփոխվող դրույթները չունենան հետադարձ ուժ, և Հայաստանի օրենսդիրը դիտարկի նաև Դատական օրենսգրքի շրջանակներում փոփոխվող դրույթների հետադարձ ուժի չկիրառման մասին համապատասխան կարգավորման նախատեսումը:<sup>95</sup> Իսկ եզրակացության շրջանակներում հանձնաժողովը նշել է, որ ֆինանսական հայտարարագրերի հետ կապված դատավորների նոր պարտականություններն ընդունելի են (պայմանով, որ դրանք հետադարձ ուժ չունեն):<sup>96</sup>

Քննարկվող երկու դեպքում էլ իրավական խնդիրը կապված է հետադարձ ուժի կիրառման սահմանադրական սկզբունքի հետ (ՀՀ սահմանադրության 73-րդ հոդված), ըստ որի՝ *անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն, իսկ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:*

Ըստ ելույթան, այն դեպքում եթե ԿԿՀ-ն վերլուծում է դատավորի մինչև 2017 թվականի հայտարարագիրը և հայտնաբերում է խախտում, դրան չի կարող ընթացք դրվել՝ վերը նշված օրենքի դրույթի ուժով: Ավելին, այս դրույթի փոփոխությունն նույնպես կատարել հնարավոր չէ, քանի որ կստացվի, որ փոփոխությունները սահմանում են դատավորի իրավական վիճակը վատթարացնող կարգավորումներ, ինչը ՀՀ սահմանադրությամբ արգելված է՝ հետադարձ ուժ ունենալու տեսանկյունից, ինչպես նաև կարող է հանգեցնել իրավական որոշակիության սկզբունքի խախտմանը: Փաստացի ստացվում է, որ անցումային արդարադատության շրջանակներում դատավորների վեթինգի (գնահատման) գործընթացում իրավական մեխանիզմներով վաղեմության ժամկետները հաղթահարվել չեն կարող, իսկ նպատակին հասնելու գործիքները/ընթացակարգերը պետք լինեն իրավական՝ կայացված որոշումների անխոցելիության, և հետագայում՝ ՀՀ-ի դեմ ՄԻԵԴ ուղարկվող բողոքների բացառման նպատակով: Ուստի, քննարկվող փոփոխությունները առաջարկվում է իրականացնել սահմանադրական բարեփոխումների համատեքստում:

Միաժամանակ հարկավոր է կատարել առավել մանրամասն և խորքային ուսումնասիրություն, այդ թվում նաև՝ միջազգային փորձի և միջազգային դատարանների կողմից կայացրած ակտերի, և ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում, պարզելու, թե

<sup>95</sup> [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2019\)024-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)024-e), պարագրաֆ 41

<sup>96</sup> [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2019\)024-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)024-e), պարագրաֆ 62

արդյո՞ք իրավական տեսանկյունից հնարավոր է Սահմանադրությամբ ամրագրել հետադարձ ուժի արգելքի սկզբունքի ընդհանուր կարգավորում, և միաժամանակ նույն հոդվածի երկրորդ մասով սահմանել անցումային ժամանակահատված այդ սկզբունքից շեղվելու համար՝ դիտարկելով այս կարգավորման՝ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխանության հարցը:

#### **4. Դատավորի կարգապահական պատասխանատվության առիթների և ժամկետների վերանայում.**

ՀՀ սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ դատավորի լիազորությունները՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ, դադարեցվում են անհամատեղելիության պահանջները խախտելու, քաղաքական գործունեությամբ զբաղվելու, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարինության, **Էական կարգապահական խախտում կատարելու դեպքերում:** «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Դատական օրենսգիրք) 142-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ էական կարգապահական խախտում է՝ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, և որը հանգեցրել է **Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման** կամ դատական իշխանության հեղինակազրկման:<sup>97</sup>

Դատական օրենսգրքի 144-րդ հոդվածի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ **մեկ տարվա ժամկետում:** Սույն կետով նախատեսված հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է **ութ տարի**, բացառությամբ սույն օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով հարուցվող կարգապահական վարույթի: Հիշյալ

<sup>97</sup> Էական կարգապահական խախտումներ են դիտարկվում նաև Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված խախտումը, որը դրսևորվել է 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ, 8-րդ և 9-րդ, 11-րդ և 12-րդ, 15-րդ և 16-րդ կետերով և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ, 7-րդ և 8-րդ, 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված դատավորի պարտականությունների խախտմամբ և պայմանավորված կատարման հանգամանքներով և (կամ) առաջացրած հետևանքներով՝ համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ:

բացառությունը վերաբերում է կարգապահական վարույթ հարուցելու առիթներից հետևյալին. *վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող` Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը*: Տվյալ դեպքում, օրենսգիրքը չի նախատեսում այլ հատուկ ժամկետ, քան մեկ տարին է` այս առիթով վարույթ հարուցելու դեպքում:

Պետք է նշել, որ 25.03.20 ՀՕ-197-Ն օրենքի 58-րդ հոդվածի 19-րդ մասի համաձայն` 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով կարգապահական վարույթ կարող է հարուցվել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի` 25.03.20 ՀՕ-197-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կայացրած ակտերի հիման վրա: Այսինքն, մինչև միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կողմից նախքան 2020 թվականի մարտի 3-ը կայացրած դատական ակտերը դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ չեն կարող հանդիսանալ:

Վերոգրյալի լույսի ներքո, խնդրի լուծման նպատակով առաջարկվում է նույն սահմանադրական փոփոխությունները, որոնք նշված են սույն բաժնի 3-րդ առաջարկի` **«Դատավորի գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերի վերլուծության հետադարձ ուժի արգելքի սկզբունքի ընդհանուր կարգավորման դիտարկում»** շրջանակներում: